ՀՐԱՉ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԸ ԹԱԹԱՐ-ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԼԾԻ ԴԵՄ

ՀԱՅԱՍՏԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ГРАЧ СТЕПАНЯН

БОРЬБА АРМЯНСКОГО НАРОДА ПРОТИВ ТАТАРО-МОНГОЛЬСКОГО ИГА

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1990

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՐԱՉ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԸ ԹԱԹԱՐ-ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԼԾԻ ԴԵՄ

A 81450

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1990

ԳՄԴ 63. 3 (2Հ) 43
Ս 887

Տպագրվում է ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների դոկտոր Բ. Ա. Ուլուբաբյան

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝
պատմական գիտ. դոկտոր Գր. Մ. Գրիգորյանը,
պատմական գիտ. թեկնածու Գ. Ս. Գրիգորյանը

Ստեփանյան Հ. Ս.
Ս 887 *Հայ ժողովրդի պայքարը թաթար-մոնղոլական լծի դեմ/[Պատ. խմբ.՝ Բ. Ա. Ուլուբաբյան], ՀԽՍՀ ԳԱ Պատմ. ին-տ.—Եր.: ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1990*
144 էջ.

Աշխատությունը նվիրված է թաթար-մոնղոլական արշավանքների և տիրապետության ժամանակաշրջանում հայ ժողովրդի մղած պայքարի պատմությանը։ Ճշտվում են թաթար-մոնղոլների և Խորեզմշահ Ջալալ էդ Դինի արշավանքների ընթացքում հայերի մղած պայքարի մի շարք վիճելի հարցեր, լուսաբանվում է XIII դարի 40-ական թվականների երկրորդ կեսում թաթար-մոնղոլների տիրապետության դեմ հայերի մղած պայքարը։ Քննարկվում է օտար բռնակալության դեմ քաջաբարոյ հայ-վրացական երկրորդ ապստամբությունը և բացահայտվում են այդ իրադարձության հետ կապված մի շարք հանգամանքներ։

Նախատեսվում է հայ ժողովրդի պատմության հարցերով զբաղվողների և ընթերցող լայն շրջանի համար։

Ս $\frac{050302913}{703\ (02)-90}$ 19—90 ԳՄԴ 63. 3 (2Հ) 43

ISBN 5—8080—0129—3

© Հայկական ԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 1990

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Միջնադարյան Հայաստանի պատմության մի շարք հարցեր դեռևս կարոտ են հանգամանալից ուսումնասիրության։ Դրանցից է թաթար-մոնղոլ նվաճողների դեմ XIII—XIV դարերում հայ ժողովրդի մղած պայքարը, որի հետազոտությունը մեծ հետաքրքրություն ու կարևորություն է ներկայացնում հանդիսանալով պատմագիտության առաջնահերթ պրոբլեմներից մեկը[1]։

XIII դարի սկզբին վրացական թագավորության կազմի մեջ գտնվող Հյուսիս-արևելյան և Կենտրոնական Հայաստանում, ուր ինքնուրույն կերպով իշխում էին հայկական ֆեոդալական տները՝ Զաքարյանների գլխավորությամբ, նկատելի էր քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի վերելքը, որը սակայն խանգարվեց թաթար-մոնղոլական ավերիչ արշավանքների ու դաժան տիրապետության հաստատման հետևանքով։

---

[1] *Հայտնի է, որ Կիլիկիայի հայոց թագավորությունը, գտնվելով թաթար-մոնղոլների վասալական կախվածության մեջ, զերծ մնաց նրանց ահարկու արշավանքներից և դաժան տիրապետությունից։ Կիլիկիայի փոխհարաբերությունները մոնղոլների հետ ընթացան այլ հունով, քան բուն Հայաստանում, որտեղ հաստատվել էր օտար նվաճողների լուծը։ Ի տարբերություն Կիլիկիայի հայերի, որոնք գերադասում էին մոնղոլների հետ իրենց հարցերը լուծել խաղաղ ճանապարհով, բուն Հայաստանի բնակիչները պայքար էին ծավալում օտար նվաճողների դեմ, որն էլ ուսումնասիրության առարկան է։ Կիլիկիայի հայոց թագավորության և մոնղոլների փոխհարաբերությունների քննարկումն առանձին պրոբլեմ է և կարիք ունի հատուկ ուսումնասիրության։ Ուստի, սույն աշխատության մեջ Կիլիկիային վերաբերող հարցերին անդրադառնալու ենք հպանցիկ, որքանով որ անհրաժեշտ է պրոբլեմն առավել ամբողջականորեն լուսաբանելու։*

XIII դարի սկզբում պատմության թատերաբեմ դուրս եկած թաթար-մոնղոլական վայ ֆեոդալական պետությունը, նրա քոչվոր վերնախավը իրենց առջև համաշխարհային տիրապետության հասնելու նպատակ էին դրել։ Այդ նպատակի իրագործման ճանապարհին նրանք դիմեցին նվաճողական արշավանքների, որոնք, ինչպես նաև հետագայում հաստատած նրանց տիրապետությունը, անլուր տառապանքներ պատճառեցին Ասիայի ու Եվրոպայի բազմաթիվ ժողովուրդների։ Մոնղոլական բռնակալությանը ենթակա երկրների պատմական զարգացման բնականոն ընթացքը խաթարվեց ու կասեցվեց, անասելի ծանր հարված ստացան նրանց քաղաքական կյանքը, տնտեսությունը, մշակույթը։ Ուստի, միանգամայն հասկանալի է, թե ժողովուրդների՝ թաթար-մոնղոլական բռնատիրության դեմ մղված երկարամյա պայքարը որքան առաջադիմական երևույթ էր, արժանի ուշադրության և հետազոտության։

Թաթար-մոնղոլական արշավանքների ու տիրապետության ժամանակաշրջանի՝ հայ ժողովրդի պատմության սկզբնաղբյուրները հարուստ են ու բազմազան։ Սակայն անհրաժեշտ է նշել, որ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի պատմությունը հանգամանորեն լուսաբանելու համար այդ աղբյուրների տվյալները սուղ են։ Պատմական աղբյուրների հեղինակներից ոմանք, նվաճողների երկյուղից ղողդված, ուրիշներն էլ՝ քաղաքական որոշակի նկատառումներով, ջանացել են սքողված արտահայտվել հակամոնղոլական պայքարի մասին։ Որոշ պատմիչներ էլ շրջանցել են այդ հարցերը, կամ էլ դրանք ներկայացրել միակողմանի ու խեղաթյուրված։

Սույն հետազոտության համար հիմք ծառայած աղբյուրները, համաձայն իրենց հաղորդած տվյալների քանակի ու կարևորության, կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Հայկական և վրացական աղբյուրներ,

2. Արևելյան աղբյուրներ (պարսկական, արաբական, ասորական, չինական, մոնղոլական),

3. Եվրոպական ճանապարհորդների վկայություններ։

Ուսումնասիրության համար առաջնահերթ նշանակություն ունեն հայկական աղբյուրները։

Թաթար-մոնղոլական արշավանքների ու տիրապետության առաջին տասնամյակներում հայ ժողովրդի մղած պայքարի հարցերը քննելու տեսակետից կարևորագույն աղբյուր է Կիրակոս Գանձակեցու աշխատությունը[2]։ Պատմիչը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում մոնղոլների հետախուզական արշավանքի, այդ ընթացքում տեղի ունեցած խունանի ճակատամարտի, Ջալալ էդ Դինի ապստամբությունների և խորեզմշահի դեմ հայ ժողովրդի մղած պայքարի մասին։ Կիրակոս Գանձակեցին նկարագրում է Զարմաղանի գլխավորած մոնղոլական զորքերի դեմ իր հայրենի քաղաքի հերոսական պաշտպանությունը 1232 թ.։ Նրա պատմական երկից մենք որոշ պատկերացում ենք կազմում մոնղոլների կողմից Հայաստանի գրավման և այդ ընթացքում Շամքորի, Անիի, Կարինի ու այլ քաղաքների բնակչության ցույց տված հերոսական դիմադրության մասին։ Արժեքավոր են նաև Կիրակոսի վկայությունները 1248 թ. մոնղոլների հարկահանության դեմ երկրում առաջացած դժգոհության ու դիմադրության, ինչպես նաև՝ 1249 թ. հայ-վրացական առաջին ապստամբության վերաբերյալ։ Պակաս կարևոր չեն հայ-վրացական երկրորդ ապստամբության մասին պատմիչի հաղորդած վկայությունները, որոնցից տեղեկանում ենք թե՛ ապստամբության պատճառների և թե՛ նրան մասնակցած հայ իշխանների մասին։

Կիրակոս Գանձակեցու ժամանակակիցն ու դասընկերն էր Վարդան Արևելցին, որը ժամանակի հասարակական-քաղաքական ականավոր գործիչներից էր և մեծ հեղինակություն էր վայելում ամբողջ երկրով մեկ՝ բուն Հայաստանից մինչև Կիլիկյան հայկական պետությունը։ Վարդան վարդա-

---

2 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961 (այսուհետև՝ Կիրակոս Գանձակեցի)։

պետի պատմագրական երկում[3] արժեքավոր տեղեկություններ են պահպանվել թաթար-մոնղոլների հետախուզական արշավանքի և այդ ընթացքում տեղի ունեցած Կոտմանի ճակատամարտի մասին։ Վարդանը հակիրճ կերպով է արտահայտվում 1236 թ. Զարմաղանի զորքերի կողմից Հայաստանի հյուսիսարևելյան տարածքը, իսկ 1242—1245 թթ. Բաչուի կողմից Հայաստանի մյուս շրջանները նվաճելու և այդ ընթացքում ժողովրդի մղած պայքարի մասին։ Պատմիչը հակիրճ է խոսում նաև մոնղոլական տիրապետության դեմ բարձրացած հայ-վրացական երկու ապստամբությունների մասին։ Վարդան Արևելցու աշխատությունը հիմնականում արժանահավատ սկզբնաղբյուր է։

Ինչպես առարկա պրոբլեմի տեսակետից կարևոր սկզբնաղբյուր է ժամանակի մյուս հայ հեղինակի՝ Գրիգոր պատմիչի (պատմագրության մեջ սխալմամբ հայտնի նաև Մատթեոս արեղա անունով) պատմագրական երկը[4]։ Գրիգորը տեղեկություններ է տալիս թաթար-մոնղոլների ծագման, դավանանքի, հասարակական-քաղաքական հարաբերությունների մասին, ապա անցնում է նրանց նվաճումներին։ Նրա աշխատությունը կարևոր նյութ է պարունակում Ջեբեյի ու Սուբեդեյի զորքերի և հայ-վրացական ուժերի միջև Կոտման գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտի ընթացքի մասին։ Սույն հեղինակը հիշատակություններ ունի նաև Զարմաղանի ու Բաչուի կողմից Հայաստանի նվաճման վերաբերյալ։ Արժեքավոր են առանձնապես պատմիչի այն վկայությունները, որոնք վերաբերում են հայ-վրացական առաջին ապստամբությանը։

XIII դարի հայ նշանավոր մտավորականներից Մխիթար Այրիվանեցին մեզ է թողել մի փոքրածավալ ժամանակա-

---

3 Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862 (այսուհետև՝ Վարդան Արևելցի)։

4 Մատթէոս արեղայի պատմութիւն վասն ազգին Նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870 (այսուհետև՝ Գրիգոր պատմիչ)։

գրություն[5], որի մեջ կարևոր տվյալներ կան մոնղոլական հետախուզական արշավանքի և Կոստանի ճակատամարտի, Հայաստանի նվաճման և այլ հարցերի մասին։ Այդ տվյալները լրացնում ու ամբողջացնում են մեր պատկերացումները քննության ենթակա հարցերի վերաբերյալ։

XIII—XIV դարերում թաթար-մոնղոլ նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի լուսաբանման համար անգնահատելի արժեք ունեն Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի աշխատությունները[6]։ Նրա գլխավոր պատմագրական երկում («Պատմութիւն նահանգին Սիսական») կան հարուստ և արժեքավոր տեղեկություններ Ջալալ էդ Դինի ասպատակությունների և օտար բռնակալին հայ ժողովրդի ցույց տված դիմադրության, մոնղոլների կողմից Սյունիքի նվաճման, 1249 թ. հայ-վրացական առաջին ապստամբության վերաբերյալ։ Արժեքավոր են նաև Ստեփանոսի վկայությունները XIII դարի 90-ական թվականներին Հայաստանում ու Վրաստանում ծավալված ապստամբական շարժումների, կրոնական հալածանքների և դրանց դեմ եղած պայքարի մասին։ Իսկ Օրբելյանի «Ողբը» մեծապես օգնում է բացահայտելու թաթար-մոնղոլ բռնակալների կրոնական հալածանքների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի և նրա պատմական կարևոր նշանակության հարցերը։ Հատկապես այդ ստեղծագործության մեջ են ցայտուն կերպով դրսևորվել հայ բանաստեղծ-պատմիչի ջերմ հայրենասիրությունը, ժողովրդի ճակատագրի հանդեպ նրա ունեցած մտահոգությունը։

---

5 Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն հայոց, Մոսկվա, 1860 (այսուհետև՝ Մխիթար Այրիվանեցի)։

6 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, Երևան, 1942 (այսուհետև՝ «Ստեփանոս Օրբելյան», «Ժամանակագրութիւն»), Ստեփանոս Օրբելյանի Տարեգրությունը։ Տե՛ս «Մանր ժամանակագրություններ», կազմեց Վ. Հակոբյանը, հ. Ա, Երևան, 1951, Ստեփաննոս Օրպէլեանի Ողբ ի ս. Կաթուղիկէն, բնագիրը առաջաբանով և ծանոթագրություններով հրատարակեց Կարապետ Կոստանյանցը, Թիֆլիս, 1885 (այսուհետև՝ Ստեփանոս Օրբելյան, Ողբ)։

XIII դարի վերջին քառորդում թաթար-մոնղոլական դաժան լծի և դրանից բխող տառապանքների պատկերն արտացոլված է միջնադարյան հայ գրականության նշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Ֆրիկի ստեղծագործություններում[7]։

XIV դարի առաջին տասնամյակների հայ ժողովրդի աղատագրական ձգտումներն իրենց արտացոլումն են գտել Խաչատուր Կեչառեցու ստեղծագործություններում[8]։ Նրա «Ողբ վասն աւերման տանս արեւելեան» գործը կարևոր սկզբնաղբյուր է նաև XIII դարի 90-ական թվականներին Անդրկովկասում ծավալված ապստամբական շարժումները լուսաբանելու համար։

1307 թ. հայ պատմիչ Հեթումի հին ֆրանսերեն լեզվով գրած „La flor des estoires de terres d'Orient" աշխատությունը[9] կարևոր է թաթար-մոնղոլների և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերությունները լուսաբանելու համար։ Պատմիչը Հեթում Ա. թագավորի (1226—1270 թթ.) քաղաքական դծի՝ ահեղ թշնամու հետ բանակցություններ վարելու և երկիրն ավերածություններից զերծ պահելու, ջերմ պաշտպանն է։

1249 թ. թաթար-մոնղոլական բանակիրության դեմ բռնկված հայ-վրացական առաջին ապստամբության, նրա թափի ու ընդգրկած շրջանակների պատմությունն անհնար է պարզաբանել առանց Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի (1221—1267 թթ.) Կիլիկիայից Մեծ Հայքի բնակչությանը առաքած «խրատական թղթի»[10]։ Պատմական այդ կարևոր փաստաթղթում հոգևոր առաջնորդը բուն Հայաստանի բնակչությանը կոչ է անում հնազանդ լինել նվաճող-

---

7 Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1941։

8 Այդ մասին տե՛ս Մ. Բ. Ավդալբեկյան, Խաչատուր Կեչառեցի, Երևան, 1958 (այսուհետև՝ Խաչատուր Կեչառեցի)։

9 Հեթում պատմիչ Թաթարաց, Վենետիկ, 1842։

10 Լ. Ս. Խաչիկյան, Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը, առաքված Արևելյան Հայաստան, 1251 թվականին.—«Բանբեր մատենադարանի», 1958, № 4, էջ 267—284։

ներին։ Ելնելով «խրատական թղթի» բովանդակությունից՝ կարելի է եզրակացնել, որ ապստամբությանը մասնակից են եղել ժողովրդական լայն զանգվածները։

Մեծ արժեք են ներկայացնում ժամանակի հայերեն ձեռագրերի հիշատակարաններն[11] ու ժամանակագրությունները[12]։

Հիշատակարանները, որոնք գրել են ականատես ու ականջալուր հեղինակներն ու գրիչները, հավաստի ու ստույգ են։ Դրանցում այնպիսի վկայությունների ենք հանդիպում, որոնք այլ սկզբնաղբյուրներում չեն պահպանվել։ Իսկ եթե ավելացնելու լինենք, որ XIII դարի վերջից, հայ մատենագրությունն սկսում է անկում ապրել, և այլևս չեն ստեղծվում մեծածավալ մատենագրական երկեր, ապա լիովին պարզ կլինի, թե ի՞նչ նշանակություն ունեն հիշատակարանները հատկապես XIV դարի առաջին տասնամյակների հայ ժողովրդի պայքարի հարցերը լուսաբանելու համար։ Թաթար-մոնղոլական բռնատիրության դեմ ծավալված պարտիզանական բնույթի պայքարի, առանձնապես տիրապետողների կողմից կիրառվող բռնի կրոնափոխության քաղաքականության դեմ հայ ժողովրդի մղած պայքարի և դրա կարևոր նշանակության հարցերը կարելի է բացատրել հիմնականում ձեռագրերի հիշատակարանների ընձեռած նյութերով։

Ժամանակագրությունները հնարավորություն են ընձեռում ճշտելու այս կամ այն պատմական իրադարձությունը՝ կապված մոնղոլական արշավանքների, նվաճումների ու տիրապետության հարցերի հետ։

---

11 Գ. Յովսէփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951 (այսուհետև՝ «Գ. Հովսեփյան, Յիշատակարանք, Ա»), «Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984 (այսուհետև՝ «ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»), «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյանը, Երևան, 1950։

12 «Մանր ժամանակագրությունները XIII—XVIII դդ.», հ. Ա, Երևան, 1951, հ. Բ, Երևան, 1956 (այսուհետև՝ Մանր ժամանակագրություններ)։

Թաթար-մոնղոլ բռնակալների կիրառած կրոնական հալածանքների և դրանց դեմ հայ ժողովրդի մղած պայքարի հարցերը մեկնաբանելու համար արժեքավոր է «Հայոց նոր վկաները» ժողովածուն[13]։

Ուսումնասիրության ընթացքում օգտվել ենք հայկական այլևայլ աղբյուրներից[14]։

Հայտնի է, որ մոնղոլական արշավանքների ու տիրապետության ժամանակաշրջանում Հայաստանի հյուսիսային ու հյուսիսարևելյան նահանգները զինական դաշինքի մեջ են եղել Վրաց թագավորության հետ։ Եվ օրինաչափ է աղբյուրագիտական նյութերի առատությունը հայ հեղինակների երկերում՝ Վրաստանի այն ժամանակների պատմության վերաբերյալ, իսկ վրաց հեղինակների երկերում՝ Հայաստանի վերաբերյալ։ Այդ առումով կարևորագույն նշանակություն ունեն Գեորգի Լաշա թագավորի (1213—1222 թթ.) կառավարման ժամանակաշրջանին վերաբերող ժամանակագրությունն ու XIV դարի վրաց հայտնի Անանուն ժամանակագրությունը[15]։ Դրանցից առաջինում արժեքավոր վկայություններ են պահպանվել Ջեբեյի ու Սուբեդեյի արշավանքի ըն-

---

13 «Հայոց նոր վկաները», կազմեցին Հ. Անառյանը, Հ. Մանանդյանը, Վաղարշապատ, 1903 (այսուհետև՝ «Հայոց նոր վկաները»)։

14 Սամուէլի քահանայի Աննցւոյ «Հաւաքմունք ի դրոց պատմագրաց», Վաղարշապատ, 1893 (այսուհետև՝ Սամվել Աննցի), Անանուն ժամանակագրություն, առաջաբանով և ծանոթագրություններով, կազմեցին Հ. Մանվելյանը, Հ. Աբրահամյանը, Երևան, 1940 (այսուհետև՝ «Անանուն ժամանակագրություն»), ժամանակագրություն (XI—XVIII դդ.), տպագրության պատրաստեց Ն. Պողարյանը. տե՛ս «Բանբեր Մատենադարանի», 1969, № 9, էջ 257—282։

15 ყართლის ცხოვრება, ტ. I. თბილისი, 1955.

Օգտվելով առիթից, շնորհակալություն ենք հայտնում պատմական գիտությունների թեկնածու Պ. Ջորանյանին, որի օգնությամբ ծանոթացանք վրացերեն մի շարք աղբյուրների ու ուսումնասիրությունների։ «Վրաց ժամանակագրություն (1207—1318)», թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պ. Մուրադյանի, Երևան, 1971 (այսուհետև՝ Վրաց ժամանակագրություն)։ Տե՛ս նաև Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936։

թացքում մոնղոլների և հայ-վրացական ուժերի պայքարի մասին, իսկ Անանուն պատմիչի ժամանակագրությունում՝ հարուստ փաստական նյութ թաթար-մոնղոլական բռնատիրության դեմ հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի վերաբերյալ։ Ճիշտ է, միշտ չէ, որ Անանուն հեղինակի տեղեկությունները համընկնում են հայկական աղբյուրների հաղորդած վկայություններին, սակայն այն հիմնականում արժանահավատ աղբյուր է և նույնիսկ մեզ հետաքրքրող որոշ հարցերի մասին հաղորդում է ավելի հանգամանալից տվյալներ, քան ուրիշ սկզբնաղբյուրները։

XIV դարի վրաց ժամանակագրությունը կարևոր տեղեկություններ է պահպանել մոնղոլական հետախուզական զորամիավորման դեմ հայ-վրացական ուժերի՝ Կոտման գետի մոտ տված հակատամարտի, ապա և Ջալալ էդ Դինի ասպատակությունների մասին։ Արժեքավոր են Անանուն պատմիչի տեղեկությունները նաև Ջարմաղանի ու Թաչուի արշավանքների մասին։ Սակայն ժամանակագրության ամենամեծ արժանիքը Կոստասթավլի հավաքի և հայ-վրացական երկրորդ ապստամբության վերաբերյալ նրա թողած հանգամանալից նկարագրություններն են։ Առանց դրանց անհնար կլիներ ամբողջական պատկերացում կազմել հիշյալ ընդվզումների մասին։ Վրաց ժամանակագրությունը վերը նշված անցքերի վերաբերյալ հաղորդում է մի շարք մանրամասներ։ Միայն այդ աղբյուրի միջոցով կարելի է ճշտել հայ-վրացական ուժերի՝ թաթար-մոնղոլական բռնությունների դեմ մղած պայքարի մի շարք հանգամանքներ, որոնք հայկական աղբյուրներով հնարավոր չէ պարզաբանել։

Օգտագործել ենք վրաց ժամանակագրի վկայությունները XIII դարի 90-ական թթ. և XIV դարի սկզբին Անդրկովկասում ծավալված հակամոնղոլական ապստամբական շարժումների, ինչպես նաև պարտիզանական բնույթի պայքարի ու կրոնական հալածանքների դեմ մղված պայքարի վերաբերյալ։

Ենդրու առարկա ժամանակաշրջանում թաթար-մոնղոլ նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի վերաբեր-

յալ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել պարսկական և արաբական աղբյուրներում։

Առանձնապես գնահատելի են Ղազան խանի (1295—1304 թթ.) սահեբ դիվան (ֆինանսների կառավարիչ) և առաջին վեզիր Ռաշիդ էդ Դին Ֆազլալլահ Համադանիի տարեգրություններն[16] ու նամակագրությունը[17]։

Տարեգրություններում փաստական հարուստ նյութեր են պահպանված մոնղոլների հետախուզական արշավանքի, այդ ընթացքում Ջեբեյի ու Սուբեդեյի և հայ-վրացական ուժերի պայքարի մասին։ Հատկապես արժեքավոր են խունանի ճակատամարտի վերաբերյալ պատմիչի թողած տեղեկությունները, որոնք ոչ միայն հաստատում են Կիրակոս Դանձակեցու հաղորդած վկայություններն այդ ճակատամարտի մասին, այլև լրացնում ու ամբողջականացնում են դրանք։ Հեղինակը խոսում է նաև Ջալալ էդ Դինի ասպատակությունների, խորեզմշահին հետապնդելու նպատակով Ջարմաղանի ձեռնարկած արշավանքի մասին։

Կարևոր են պատմիչի վկայությունները XIII դարի վերջին թաթար-մոնղոլների բռնատիրության դեմ ծավալված հայ-վրացական ապստամբական շարժման մասին։

Իլխանության սահմաններում, այդ թվում և Հայաստանում, ծավալված պարտիզանական բնույթի պայքարի մասին կարելի է քիչ թե շատ ամբողջական պատկերացում կազմել հիմնականում Ռաշիդ էդ Դինի տարեգրություններից և նամակագրությունից։ Արժեքավոր են նաև Ղազան խանի մահմեդականություն ընդունելու և քրիստոնյաների նկատմամբ կրոնական հալածանքներ սկսելու մասին Ռաշիդ էդ Դինի վկայությունները։ Հայկական ու ասորական աղբյուր-

---

16 *Рашид ад-Дин.* Сборник летописей, т. I, кн. первая и вторая /Пер. с перс. А. А. Хетагурова и О. И. Смирновой. М.—Л., 1952; т. II /Пер. с перс. Ю. П. Верховского. М.—Л., 1960; т. III /Пер. с перс. А. К. Арендса. М.—Л., 1946 (այսուհետև՝ Рашид-ад-Дин).

17 *Рашид ад-Дин.* Переписка /Пер. введ. и комм. А. И. Фалиной. М., 1971 (այսուհետև՝ Рашид-ад-Дин. Переписка).

ների հետ միասին պարսիկ պատմագրի վկայություններն ամբողջականացնում են մեր պատկերացումները կրոնական հալածանքների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի վերաբերյալ։

Պրոբլեմի ուսումնասիրման համար որոշակի նշանակություն ունի Խորեզմի սուլթան Ջալալ էդ Դինի կենսագիր ան Նասավիի գործը[18]։ Նրանում վկայություններ կան Ջեբեյի ու Սուբեդեյի հետախուզական արշավանքի, Ջալալ էդ Դինի ասպատակությունների, Խորեզմշահին հետապնդելու նպատակով Ջարմաղանի կազմակերպած արշավանքի մասին։

Արժեքավոր է նաև Ալա էդ Դին Աթա-Մալիք Ջուվեյնիի աշխատությունը[19]։ Նրանում կարևոր վկայություններ են պահպանվել մոնղոլների հետախուզական արշավանքի, Ջալալ էդ Դինի ասպատակությունների, Ջարմաղանի 1230—1231 թթ. արշավանքների և դրանց դեմ եղած պայքարի վերաբերյալ։ Եղակի են Ջուվեյնիի վկայությունները 1259—1261 թթ. հայ-վրացական երկրորդ ապստամբության սկզբի մասին։

Ուսումնասիրության մեջ օգտագործել ենք նաև պարսիկ մի քանի այլ պատմիչների հաղորդած տեղեկությունները[20]։

---

18 *Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави.* Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны /Пер. с арабского, предисл., комм., примеч. и указатели З. М. Буниятова. Баку, 1973 *(այսուհետև՝* «ан-Насави»). *Տե՛ս նաև Сират ас-султан Джалал ад-Дин Манкубирти Мухаммада ан-Насави.*—В кн.: Материалы по истории киргизов и Киргизии, вып. I. М., 1973.

19 *Juvaini Ala-ad-Din Ata-Malik.* The History of the world. conqueror. Translated from the text of Mirza Muhammed Qazvini by John Andrew Boyle. Manchester, 1958, vol. 1—2.

Джувейни Ала ад-Дин Ата-Малик. Тарах-и Джихангушай.— См. в кн.: *В. Г. Тизенгаузен.* Сборник материалов, относящихся к истории Золотой Орды, т. II, М.—Л., 1946; *Տե՛ս նաև՝* Материалы по истории туркмен и Туркмении, т. I. М.—Л., 1939.

20 *Вассаф Абдулах ибн Фазуллах.* История Вассафа; *Дзузджани Абу-Омар Минхаджад—Дин.* Табакад-и Насири (насировые разряды); *Хамдуллах Мустоуфи Казвини.* Избранная исто-

Թաթար-մոնղոլական հետախուզական արշավանքի, Ջալալ էդ Դինի ասպատակությունների, ինչպես նաև վերջինիս հետապնդելու նպատակով Զարմաղանի ձեռնարկած արշավանքի ընթացքում հայ ժողովրդի մղած պայքարի հարցերը լուսաբանելու համար չափազանց կարևոր է ժամանակի արաբ պատմիչ Իբն ալ Ասիրի երկասիրությունը[21]: Այս սկզբնաղբյուրը մեծապես օգնում է պարզելու այն վիճելի հարցը, թե Ջեբեյի ու Սուբեդեյի դեմ հայ-վրացական ուժերը քանի՞ ճակատամարտ են տվել: Հենց Իբն ալ Ասիրի երկից ենք մենք տեղեկանում Զարմաղանի զորքերի դեմ 1231 թ. Սղերդի, Բաղեշի ու Բերկրիի հայ բնակչության ցույց տված համառ դիմադրության մասին:

Զարմաղանի Ջալալ էդ Դինի դեմ կազմակերպած արշավանքի, այդ ընթացքում հայ ժողովրդի մղած պայքարի և հարակից հարցերի համակողմանի քննության տեսակետից որոշակի կարևորություն ունեն արաբ պատմիչ Աբուլ-Ֆիդայի և ասորի հեղինակ Անանուն Սղեսացու ժամանակագրությունները[22]:

XIII դարի 90-ական թթ. թաթար-մոնղոլների կողմից քրիստոնյա ժողովուրդների հանդեպ ծավալած հալածանքների ու դրանց դեմ եղած պայքարի հարցերը մեկնաբանե-

---

рия.—См. в кн.: *В. Г. Тизенгаузен.* Сборник материалов, II *Տե՛ս նաև* Материалы по истории туркмен и Туркмении, т. I; *Хондемир.* История монголов. От древнейших времен до Тамерлана (Пер. с перс. Спб., 1834 *(այսուհետև՝* Хондемир).

21 *Ион ал-Асир, Тарих-ал-Камиль* /Пер. П. Жузе. Баку, *1940, «Արարական աղբյուրներ», Բ. Իբն ալ Ասիր, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Ն. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981 (այսուհետև՝ Իբն ալ Ասիր)*:

22 *«Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին».* Յակուտ ալ Համավի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շադդադ, *կազմեց Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965 (այսուհետև՝ Արարական աղբյուրները),* Անանուն Սղեսացի, *ժամանակագրություն, թարգմ. բնագրից, առաջաբան և հոդվածագր. Լ. Ա. Ցեր-Պետրոսյանի, Երևան. 1982 (այսուհետև՝ Անանուն Սղեսացի)*:

լիս արժեքավոր են Մար Յաբալախի III և Ռաբան Սաումիի վկայությունները[23]։

Հետազոտվող թեմայի առնչությամբ հետաքրքիր տեղեկությունների կարելի է հանդիպել նաև արևելյան ուրիշ աղբյուրներում[24]։

Թեմայի գիտական մշակման համար որոշակի նշանակություն ունեն արևմտաեվրոպական ճանապարհորդների վկայությունները[25]։ Առանձնապես գնահատելի է Ֆրանցիսկյան միաբանության անդամ Ուիլյամ Ռուբրուքի հաղորդած տեղեկությունը Անիի տեր Զաքարյան Շահնշահի որդի Զաքարեի ապստամբական տրամադրությունների մասին XIII դարի 50-ական թվականներին։ Այն զգալիորեն օգնում է բացահայտելու ոչ միայն այդ ժամանակաշրջանի Հայաստանում տիրող համընդհանուր դժգոհության մթնոլորտը, այլև լուսաբանելու հայ-վրացական երկրորդ ապստամբության ժամանակ Զաքարե Զաքարյանի դիրքորոշումը։

---

23 История Мар Ябалахи III и Рабан Саумы /Исследование. пер. с сирийского и примеч. Н. В. Пигулевской. М., 1958 (այսուհետև՝ История Мар Ябалахи III и Рабан Саумы).

24 *Козин С. А.* Сокровенное сказание. Монгольская хроника 1240 г. М.—Л., 1941, т. I; *Мэн-Да бей-лу* (Полное описание монголо-татар)/Пер. с китайского, введ., комм. и прил. Н. Ц. Мункуева. М., 1975.

25 *Bergeron P.* Voyages faits principalement en Asie dans les XII, XIII, XIV et XV siècles. t. I, II. A la Haye, 1735 (այսուհետև՝ «P. Bergeron»); *Д. И. Языков.* Собрание путешествий к татарам и другим восточным народам СПб., 1825 (այսուհետև՝ Д. И. Языков. Собрание путешествий к татарам); *Джовани дель Плано Карпини.* История монголов, Гильом де Рубрук. Путешествие в восточные страны /Вступит. статья и примеч. Н. П. Шастиной. М., 1957 (այսուհետև՝ «Путешествия в восточные страны Плано Карпини и Рубрука»); *Марко Поло.* Путешествие/Пер. со старофранцузского И. П. Минаева. М., 1940 (այսուհետև՝ «Марко Поло»); Հ. Հակոբյան, *Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, 1932*; *Simon de Saint-Quéntin.* Histoire des Tartares. Publiée par Jean Richard, Paris, 1965. После Марко Поло. Путешествия западных чужеземцев в страны трех Индей /Пер. с латин. и староиталянского языков, введ. и примеч. Я. М. Света. М., 1968.

2—81
A 81450

Դոմինիկյան միաբան Սիմոն դը Սեն-Քենթենի վկայություններն արժեքավոր են Կարինի, Կեսարիայի, Երզնկայի, Սեբաստիայի բնակչության՝ մոնղոլների դեմ մղված պայքարի հարցերը լուսաբանելու տեսակետից։ Իսկ Ֆրանցիսկյան միաբանության անդամ, իտալացի Պլանո Կարպինիի և Դոմինիկյան միաբան Ասցելինի որոշ վկայություններ օգնում են Կոստասթավլի հավաքի հետ կապված հարցերը ճշտելուն։

Թաթար-մոնղոլ նվաճողների և նրանց տիրապետության ընթացքում հայ ժողովրդի մղած պայքարի հարցերը հայոց բաղմադարյան պատմության կարևորագույն էջերից են և, բնականաբար, չէին կարող դուրս մնալ պատմաբանների ուշադրությունից։

Առաջին հետազոտողը, որն անդրադարձել է վերոհիշյալ հարցերին, Միքայել Չամչյանն է[26]։ Հայոց պատմության առաջին ամբողջական ուսումնասիրության հեղինակը այդ կապակցությամբ հիմնականում կատարել է ընդհանուր դիտողություններ՝ վերաշարադրելով հայ պատմիչների վկայությունները, առանց բացահայտելու օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի պատճառներն ու ընդգրկած շրջանակները։

Թաթար-մոնղոլների՝ Հայաստան կատարած արշավանքների պատմությունն ուսումնասիրության առարկա է դարձել նաև ուրիշ հայ հեղինակների կողմից, որոնցից հիշատակության են արժանի Գ. Ալթունյանի[27] և Հ. Հ. Մանանդյանի[28] աշխատությունները։ Վերջինս թաթար-մոնղոլների արշավանքների և տիրապետության ընթացքում հայ ժողովրդի մղած պայքարի պատմությունը շարադրում է բավական սեղմ։

---

26 Մ. Չամչյան, *Պատմութիւն հայոց*, հ. Գ, Վենետիկ, 1786 (այսուհետև՝ Մ. Չամչյան)։

27 Գ. Ալթունյան, *Մոնղոլները և նրանց արշավանքները ԺԳ դարում*, Վաղարշապատ, 1913։

28 Հ. Հ. Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության*, հ. Գ, (Տե՛ս Հ. Հ. Մանանդյան, *Երկեր*, Գ, Երևան, 1977, այսուհետև՝ Հ. Հ. Մանանդյան, Գ)։

խնդրո առարկա պրոբլեմի կապակցությամբ արժեքավոր մտքեր է արտահայտել խորհրդահայ պատմագիտության ականավոր ներկայացուցիչ Ա. Գ. Հովհաննիսյանն իր «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» կոթողային աշխատության մեջ[29]։ Նա ցույց տվեց, որ, չնայած ժամանակի ծանր պայմաններին, հայերն, իրոք, չհրաժարվեցին ազատագրական պայքարից[30]։

Մեզ հետաքրքրող պրոբլեմին անդրադարձել է նաև Ա. Գ. Գալստյանը։ Նա ուսումնասիրել է թաթար-մոնղոլական արշավանքների շրջանում հայ ժողովրդի մղած պայքարի հարցերը, մասնավորապես, քոչվոր նվաճողների հետ հայերի վարած բանակցությունները[31]։

Աղբյուրագիտական հարուստ նյութի հիման վրա նշված ժամանակաշրջանի հայ ժողովրդի պատմությունն ուսումնասիրել է Լ. Հ. Բաբայանը[32], որը անդրադարձել է նաև թաթար-մոնղոլական լծի դեմ հայ ժողովրդի մղած պայքարի մի շարք հարցերի՝ մոնղոլական արշավանքների ընթացքում քոչվոր ասպատակիչների և հայ-վրացական ուժերի միջև եղած զինական բախումներին, հայ-վրացական ապստամբություններին։

Առանձին ուսումնասիրողներ էլ, շարադրելով Հայաստանի այս կամ այն շրջանի կամ հայ ֆեոդալական իշխա-

---

29 Ա. Գ. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին Երևան, 1957 (այսուհետև՝ «Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ, Ա»)։ Տես նաև նույնի՝ Ցրիկը պատմաքննական լույսի տակ, Երևան, 1955։*

30 Ա. Գ. Հովհաննիսյան, *Դրվագներ, Ա, էջ 187։*

31 Ա. Գ. Գալստյան, *Մոնղոլական շրջանի հայ դիվանագիտության պատմությունից, Լենինական, 1940։* Новые армянские источники о монголах/Пер. с древнеарм. А. Г. Галстяна. М., 1960; *Նույնի, Սմբատ Սպարապետ, Երևան, 1961,* Армянские источники о монголах/Пер. с древнеарм. А. Г. Галстяна. М., 1962). Ա. Գ. Գալստյան, *Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները, տե՛ս ՊԲՀ, 1964, № 1, А. Г. Галстян.* Завоевание Армении монгольскими войсками.—В кн.: Татаро-монголы в Азии и Европе. М., 1977.

32 Լ. Հ. Բաբայան, *Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում, Երևան, 1964։*

նությունների պատմությունը՝ քննության են առել համապատասխան շրջանում օտար բռնակալների դեմ հայերի մղած պայքարը[33]։

Բ. Ա. Ուլուբաբյանն իր աշխատության մեջ նշել է, թե թաթար-մոնղոլական բռնատիրությամբ պարտադրված պայմաններում ազգապահպանական ի՛նչ նշանակություն ուներ հայկական մշակույթը[34]։

Հայ ժողովրդի պատմության սույն ժամանակահատվածը սերտորեն կապված է վրաց ժողովրդի պատմության հետ, և բնական է, որ վրաց պատմաբաններն անդրադարձել են օտար նվաճողների դեմ վրաց-հայկական ուժերի մղած պայքարի հարցերին[35]։

---

33 *И. А. Орбели.* Гасан Джалал князь Хаченский.—В кн.: И. А. Орбели. Избранные труды. Ереван, 1963, с. 146—147; Դ. Յովսէփեան, *Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969 (այսուհետև՝ «Դ. Հովսեփյան, Խաղբակյանք»)*, Բ. Ա. Ուլուբաբյան, *Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, Երևան, 1975*, Գ. Մ. Դրիզորյան, *Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII—XV դարեր), Երևան, 1981*, Յ. Քիւրտեան, *Երիզա և Եկեղեաց գաւառ, Պատմական համագրություն, հ. Ա., Վենետիկ, 1953*, Է. Մ. Բաղդասարյան, *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը, Երևան, 1977։*

Վահրամյանների իշխանության տվյալ ժամանակաշրջանի պատմության հարցերը քննարկվել են Ա. Շահնազարյանի հոդվածներում. «Վահրամյանների իշխանությունը մոնղոլների հետախուզական արշավանքների և Ջալալ էդ Դինի նվաճումների ժամանակ» (տե՛ս ԼՀԳ, 1980, № 6, էջ 50—63), «Վահրամյանների իշխանությունը մոնղոլների տիրապետության օրոք», (ԼՀԳ, 1983, № 12, էջ 26—41)։

34 Բ. Ա. Ուլուբաբյան, *նշվ. աշխ., էջ 249։*

35 ივ. ჯაველიშვილი, ქართველი ერის ისტორია, შიგნი მესანე, თბ. 1966, История Грузии, Тбилиси, 1962, т. 1: საქართველოს ნარკვევები, თბ. 1979, ტ. III: ვ. მაისურაძე, ქართველი და სომეხი ძალების ურთიერთობა XIII—XVIII საუკუნეებში, თბ. 1982; *Ю. М. Сихарулидзе.* Борьба грузинского народа против татаро-монгольского владычества. Автореферат диссертации на соискание ученой степени доктора исторических наук. Тбилиси, 1969; Р. К. Кикнадзе. Очерки по источниковедению истории Грузии. Парсадан Горгиджанидзе и «Картлис цховреба». Тбилиси, 1980.

Թաթար-մոնղոլների անդրկովկասյան արշավանքների ընթացքում տեղի ունեցած ռազմական բախումների պատմությանն են անդրադարձել Ի. Պ. Պետրուշևսկին[36] և Ա. Ա. Ալիզադեն[37]։ Նրանք քննության են առել նաև Իլխանության սահմաններում ծավալված պարտիզանական ընույթի պայքարի հարցերը։

XIX—XX դարերում Եվրոպացի մի շարք արևելագետներ ու պատմաբաններ ուսումնասիրել են մոնղոլական արշավանքների և տիրապետության պատմությունը, կանգ առնելով նաև հայ-վրացական զինական ուժերի և մոնղոլների միջև եղած ճակատամարտերին, հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարին։ Դրանց թվում են Սեն-Մարտենը, Ֆ. Թուրնեբիզը, Մ. Բրոսեն, Մ. Կ. Դ'Օսոնը, Է. Դյուլորիեն, Ժ. դը Մորգանը, Պ. Պելիոն, Ռ. Գրուսեն, Հ. Լամբը, Շ. Լեմերսիեն, Բ. Լիմպերը[38] և այլք։

---

36 *И. П. Петрушевский.* Из героической борьбы азербайджанского народа в XIII—XIV веках. Баку, 1941; *Նույնի,* Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIV веков. М.—Л., 1960.

37 *А. А. Али-заде.* Социально-экономическая и политическая история Азербайджана XIII—XIV вв. Баку, 1956.

38 *Saint-Martin J.* Memoires historiques et géographiques sur l'Armenie. Paris, 1818, t. 1; 1819. t. 2; *Tournebiz F.* Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, s. a.; *Brosset M.* Additions et éclaircissements à l'histoire de la Georgie depuis l'antiquite jusqu'en 1469 de J. C,. SPb., 1851; *D'Ohsson C.* Histoire des Mongols. Amsterdam, 1852. t. 1—4; *Dulaurier E.* Recherches sur la chronologie arménienne. Paris, 1859, t. 1; *De Morgan J.* Histoire du peuple arménienne. Paris, 1919; *Pelliot P.* Les Mongols et la Papauté. Paris, 1923; *Grousset R.* L'Empire Mongol (Ire phase). In: Histoire du Monde. Paris, 1941, t. 8; *Նույնի,* L'Empire des steppes. Attila, Gengis khan, Tamerlan, Paris, 1960; *Նույնի,* Le conquérant du monde: Vie de Gengiskhan. Paris, 1961; *Lambe H.* Gengis-khan conquérant des steppes. Paris, 1966; *Lemercier-Queiquejay Ch.* La paix mongol: Joug tatar ou paix mongol? Flammarion, 1970; *Limper B.* Die Mongolen und die christlichen Völker des Kaukasus. Eine Untersuchung zur politischen Geschichte Kaukasiens im 13 und beginnenden 14. Jahrhundert. Köln, 1980.

Պրոբլեմի ուսումնասիրության տեսակետից տեսական մեծ արժեք են ներկայացնում ռուս և խորհրդային պատմաբաններ, արևելագետներ Վ. Վ. Բարտոլդի, Բ. Յա. Վլադիմիրցովի, Վ. Ա. Գորդլևսկու, Ա. Յու. Յակուբովսկու, Բ. Դ. Գրեկովի, Վ. Տ. Պաշուտոյի, Վ. Վ. Կարգալովի աշխատությունները[39], խորհրդային և մոնղոլ մի շարք այլ պատմաբանների՝ Լ. Վ. Չերեպնինի, Ս. Լ. Տիխվինսկու, Շ. Սանդագի, Ն. Ի. Կիշանովի, Դ. Վ. Մելիխովի, Ս. Կուշերայի, Ն. Պ. Սվիստունովայի, Ա. Ա. Բոկշչանինի, Զ. Դալայի, Լ. Ի. Դումանի, Ն. Ց. Մունկուևի, Լ. Ա. Բորովկովայի, Ն. Պ. Շաստինայի և Լ. Ն. Գումիլևի բարձրարժեք հոդվածներն ու մենագրությունները[40]։

Վերը ներկայացված բազմալեզու, տարաբնույթ աղբյուրագիտական նյութերի և պատմագիտական ուսումնասիրությունների լայն օգտագործմամբ ջանացել ենք ստեղծել հայ ժողովրդի հակամոնղոլական պայքարի ամբողջական պատկերը։

---

39 *Бартольд В. В.* Сочинения. М., 1963, т. 1; 1963, т. 2, ч. 1; 1964, т. 2, ч. 2; 1965; т. 3; 1966, т. 4; 1968, т. 5; 1966, т. 6; 1973, т. 8; *(Վ. Վ. Բարտոլդի աշխատությունների վերնագրերը տե՛ս աղբյուրների և գրականության ցանկում)* *Владимирцов Б. Я.* Общественный строй монголов. Л., 1934; *նույնի,* Чингис-хан. Берлин, 1922; *Гордлевский В. А.* Государство сельджукидов Малой Азии. М., 1941; *Греков Б. Д., Якубовский А. Ю.* Золотая орда и ее падение. М.—Л., 1950; *Пашуто В. Т.* Героическая борьба русского народа за независимость (XIII век). М., 1956; *Каргалов В. В.* Конец ордынского ига. М., 1980.

40 *Հիշյալ ուսումնասիրողների հոդվածները տե՛ս* Татаро-монголы в Азии и Европе. *Տե՛ս Далай Ч.* Монголия в XIII—XIV вв., М., 1983.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԹԱԹԱՐ-ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ԵՎ ԽՈՐԶՄՇԱՀ ՋԱԼԱԼ ԷԴ ԴԻՆԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ (1220—1235 ԹԹ.) ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԴԻՄԱԴՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹԱԹԱՐ—ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Բյուզանդական կայսրության հարյուրամյա նվաճումների հետևանքով XI դարի կեսին գրեթե ողջ Հայաստանն ընկավ բյուզանդական տիրապետության տակ։ Դա կործանարար հետևանք ունեցավ ոչ միայն Հայաստանի, այլև հենց իր՝ Բյուզանդիայի համար, քանզի հայկական պետականության վերացմամբ խորտակվեց և այն պատվարը, որ փակում էր Արևելքից Փոքր Ասիա ներխուժող քոչվոր ասպատակիչների ճանապարհը։ Դա շուտով պարզ դարձավ սելջուկ-թյուրքական արշավանքների ժամանակ։

Սելջուկ-թյուրքերը նախ 1047 թ., Իբրահիմ Յանալի և Դ-թլմուշի գլխավորությամբ, ներխուժելով Հայաստան, ասպատակեցին երկրի հարավային ու արևմտյան շրջանները, ավերի ու կոտորածի մատնելով նշված տարածքն ու բնակչությունը։ Ապա հետևեցին Տուղրիլ բեգի 1054 թ., Ալփ Արսլանի 1064 թ. արշավանքները, որոնք նոր ավերածություններ պատճառեցին Հայաստանին։ Վերջին արշավանքի ընթացքում տուժեցին հատկապես Հայաստանի հյուսիսային և կենտրոնական շրջանները։

Սելջուկ-թյուրքական արշավանքների ընթացքում ավերվեցին ու կողոպուտի ենթարկվեցին բազմաթիվ քաղաքներ (Արծն, Կարս, Անի և ուրիշներ), սկիզբ առավ ժողովրդի մի մասի արտագաղթը։

1071 թ. Մանազկերտի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում սելջուկ-թյուրքերը պարտություն մատնեցին Ռոմանոս IV Դիոգենես կայսեր (1067—1071 թթ.) զորքերին։

Սելջուկ-թյուրքերի նվաճումները Փոքր Ասիայի և Սիրիայի ուղղությամբ շարունակեց նաև Ալփ-Արսլանին հաջորդած Մելիք շահը (1072—1092 թթ.)։ Վերջինիս ստեղծած լայնատարած աշխարհակալությունը, սակայն, իր մահից հետո սկսեց ստիճանաբար քայքայվել։

Հայաստանի տարածքում և սահմանակից շրջաններում կազմավորվեցին մի շարք ինքնուրույն իշխանություններ՝ Դանիշմանդյաններինը հարավ-արևմուտքում, ինչպես և իրար դեմ մարտնչող սելջուկյան ամիրայություններ՝ Ատրպատականում Ելտկուզյաններինը, Խլաթի և Մանազկերտի կողմերում՝ Շահ-արմենններինը, հարավային սահմանների մոտ՝ Հյուսիսային Միջագետքում՝ Արտուխյաններինը, Կարինում՝ Սալղուխյաններինը։ Այդ պայքարը, ճիշտ է, բացասաբար էր անդրադառնում կռվի թատերաբեմ դարձած Հայաստանի համար, բայց, և, նպաստում էր հյուսիսարևելյան Հայաստանի (Լոռիի, Զորափորի, Սյունիքի և այլն) ուշքի եկող իշխանությունների ու սելջուկյան արշավանքների արհավիրքներից համեմատաբար զերծ մնացած զորեղացող Վրաստանի՝ սելջուկների դեմ կազմակերպած միասնական պայքարին։

Դեորգի Բ-ի (1072—1089 թթ.) օրոք սկսված Վրաստանի հզորացումը շարունակվեց Դավիթ Շինարար թագավորի (1089—1125 թթ.) կառավարման շրջանում։ Այս ընթացքում վրաց թագավորը ոչ միայն հաջողությամբ կասեցրեց թյուրքերի առաջխաղացումը, այլև հետ մղելով նրանց՝ իր գերիշխանությունը տարածեց գրեթե ողջ Անդրկովկասի վրա։

Վրաց արքունիքի՝ հայոց հանդեպ ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքի հետևանքով մեծաթիվ հայեր գաղթեցին Հայաստանի հյուսիսային շրջաններն ու Վրաստան։

Ինչպես վրացական պետության հզորացումը, այնպես էլ Դավիթ Շինարարի հայանպաստ քաղաքականությունը շարունակվեցին նաև Դեմետրե Ա. (1125—1155/6 թթ.) և վերջինիս հաջորդած Գեորգի Գ (1155/6—1184 թթ.) թագավորների օրոք։

Վրաստանի հզորացումը նպաստավոր էր նաև հայերի համար, որոնք սելջուկյան ամիրայությունների դեմ իրենց պայքարում Վրաց թագավորությունը դիտում էին որպես իրենց դաշնակից, ամեն կերպ օգնում և օժանդակում էին նրան։ Վրաստանն էլ իր հերթին հայ ժողովրդի ու հայ զորապետ-իշխանների մեջ տեսնում էր իր դաշնակիցներին։ Սելջուկների ձեռքից գրավելով Հայաստանի այս կամ այն շրջանը՝ վրաց թագավորներն այնտեղ կառավարիչ էին նշանակում հայ իշխանի, ապահովում նրա մասնակցությունն իրենց ռազմական հետագա գործողություններին։

Այս ճանապարհով էր, որ Գեորգի Գ-ի և ապա Թամար թագուհու (1184—1213 թթ.) օրոք աշքի ընկան Զորագետի Զաքարյան ֆեոդալական տան ներկայացուցիչները, որոնք, սատիճանաբար բարձր պաշտոններ գրավելով վրացական արքունիքում, սկսեցին կարևոր դեր խաղալ երկրի քաղաքական կյանքում։

1185 թ. Սարգիս Զաքարյանը նշանակվեց վրաց-հայկական զինական ուժերի գերագույն հրամանատար՝ ամիրսպասալար։ Հետագայում այդ պաշտոնը ստանձնեց նրա տվագ որդին՝ Զաքարեն։ Վերջինիս կրտսեր եղբայր Իվանեն ստացավ նախ մսախուրթ-ուխուցեսի (սենեկապետի) բարձր պաշտոնը, իսկ հետո՝ աթաբեկի (արքունի դրան վեզիրի)։ Զաքարյանների ձեռքում էր նաև մանդատուրթ-ուխուցեսի (ներքին գործերի կառավարչի) պաշտոնը։

XIII դարի սկզբին Վրաստանի օժանդակությամբ փաստորեն Հայաստանի զգալի մասը (նախկին Շիրակ-Անիի, Կարսի, Զորագետի թագավորությունների և Սյունյաց մեծ

իշխանության տարածքը, Դվին քաղաքն իր շրջակա գավառներով) ազատագրվում է սելջուկ-թյուրքական տիրապետությունից։

Այժմ Զաքարեի և Իվանեի հարվածներն ուղղված էին նախ և առաջ հարևան Ելտկուզյան ատաբեկության դեմ։ Այդ ընթացքում զորեղացավ Զաքարյանների Վահրամյան (Սարգիս Մեծի եղբոր) ճյուղը, որի ներկայացուցիչները ձեռք բերեցին Գադ ամրոցը և մի շարք գավառներ Ուտիք ու Գուզարք նահանգներում։

Օգտվելով Ելտկուզյան ատաբեկության թուլացումից Զաքարյաններն սկսեցին իրենց հաղթական պատերազմները նաև Հայաստանի մյուս շրջաններում։

Լուրջ հակառակորդ էր Ռումի սելջուկյան սուլթանությունը, որի կազմում էին հայոց Ծոփաց, Դարանաղնաց և Եկեղեաց գավառները մինչև Կարին։ Նշված սուլթանության տիրակալ Ռուքն էդ Դինը (1196—1204/5 թթ.) փորձեց կասեցնել վրաց-հայկական զորքերի առաջխաղացումը, սակայն 1204/5 թ. Բասենի ճակատամարտում պարտություն կրեց, որի հետևանքով, թեև հայկական հիշյալ շրջանները մնացին նրա տիրակալության սահմաններում, այդուհանդերձ, ապահովվեցին վրացական թագավորության արևմտյան սահմանները։

Հայաստանի հարավում գտնվող Մանազկերտ-Խլաթի ամիրայության դեմ իրենց պայքարը Զաքարյաններն սկսեցին 1204/5 թթ., որը պարբերաբար շարունակվեց մինչև 1210 թ., երբ կնքվեց Վրաց պետության հարավային սահմաններն ապահովող Խլաթի դաշնադրությունը։ Այսուհանդերձ, Վասպուրականի մի մասը, Ռշտունիքը, Մոկքը, Աղձնիքը, Սասունը, Տարոնը, Խլաթը, Բզնունիքը դրանից հետո էլ շարունակեցին հնծել նշված ամիրայության տիրապետության տակ։

Այսպիսով, Զաքարեի և Իվանեի երկարամյա հաղթական պատերազմների հետևանքով Հայաստանի նշանակալից մասն ազատագրված էր սելջուկ-թյուրքական ամիրայությունների

տիրապետությունից։ Ազատագրված նահանգներում Զաքարյաններն ստեղծեցին երեք առանձին իշխանություններ։

Ամիրսպասալար Զաքարեի իշխանությունը տարածվում էր Շիրակի Բագրատունիների նախկին թագավորության տարածքի ու նրան սահմանակից Արագածոտն և այլ գավառների վրա՝ մինչև Բասեն։ Իշխանության կենտրոնն էր Անին։

Իվանե աթաբեկի գերիշխանության տակ էին Այրարատ նահանգի արևելյան մի քանի շրջաններ, Սևանա լճի շուրջը գտնվող գավառները։ Կենտրոնը Դվին քաղաքն էր, իսկ հետագայում՝ Բջնին։

Զաքարյան տոհմի երրորդ, համեմատաբար փոքր իշխանությունը պատկանում էր Վահրամի որդի Զաքարեին, որն ընդգրկում էր Տավուշը, Փառիսոսը և Գարդմանը։ Կենտրոնը Գադն էր։

Զաքարյան իշխանապետությունը փաստորեն օժտված էր ներքին ինքնավարությամբ։ Զաքարյանները վրաց պետությանը հարկեր չէին վճարում, նրանք վրաց Բագրատունիների հանդեպ ունեին հիմնականում զինվորական ծառայության պարտականություն։

Քննության ենթակա ժամանակաշրջանում, Զաքարյան իշխանությունների տարածքում վերելք ապրեցին մի շարք ֆեոդալական տներ, առաջացան նորերը, որոնք երկրի քաղաքական կյանքում սկսեցին որոշակի դեր խաղալ։

Ամիրսպասալար Զաքարեին ենթակա էին Վաչուտյանների իշխանական տունը Արագածոտն գավառում, Պահլավունիներինը՝ Մարմաշենի, Բագնայրի, Լմբատի և այլ շրջաններում։

Իվանե աթաբեկի գերիշխանության ներքո էին Սյունյաց Օրբելյանները, Խաղբակյան-Պռոշյանները, Շահուռնեցիք և Մահկանցիք՝ Վայոց ձորում։ Վայոց ձորի և Գառնիի միջև, Վեղի գետակի ակունքներում էին ընկած Մամիկոնյանների շառավիղների կալվածքները։

Զաքարյաններին ենթակա էին նաև Արցախի իշխանությունները՝ Ներքին Խաչենի Հասան-Ջալալյանները, Հաթերքի Վախտանգյաններն ու Վերին Խաչենի կամ Ծարա Դոփ-

յանները, որոնք վիթխարի դեր էին կատարել երկիրը սելջուկ բռնավորներից ազատագրելու գործում և հակամոնղոլական պայքարում էլ գտնվելու էին դիմադրողների առաջին շարքերում։

Զաքարյանները ֆեոդալական այդ տների հանդեպ վարում էին խելամիտ քաղաքականություն՝ ինամիական կապերով ամրապնդում էին բարեկամական հարաբերությունները նրանց հետ։

Բացի վերոհիշյալներից, Հյուսիսային Հայաստանում գոյություն ունեին մի շարք համեմատաբար ավելի փոքր ֆեոդալական տներ, ինչպես օրինակ, Համազասպյան-Մամիկոնյանները Դսեղում, Արծրունյաց Ամիր Քրդի տոհմը Մահկանաբերդում, Ուքանյանները, Սևադյանները Ջորագետում։

Զաքարյան Հայաստանում սոցիալ-քաղաքական հարաբերությունները կառուցված էին վասալական կախվածության սկզբունքով։ Զաքարյան իշխանները, հանդիսանալով Վրաց թագավորության ազդեցիկ պետական պաշտոնյաներ, միևնույն ժամանակ լիիրավ տեր ու տնօրեն էին իրենց իշխանության սահմաններում և վասալական կախման մեջ էին պահում հայկական մյուս ֆեոդալական տներին։ Վերջիններս պարտավոր էին իրենց զինվորական ուժերով մասնակից լինել Զաքարյան իշխանների գլխավորած ռազմական արշավանքներին, վճարել հարկ, մասնակից լինել սյուզերենի ձեռնարկած շինարարական աշխատանքներին, կատարել այլ պարտականություններ։ Պատահական չէ, որ Զաքարյանների իշխանապետությունը աղբյուրներում հաճախ անվանվում է «աշխարհակալ տէրութիւն», «աշխարհակալութիւն», «պետութիւն», «պետական իշխանութիւն», «թագաւորութիւն»։ Իշխանական արքունիքը անվանվում էր «տուն», դատական ատյանը՝ «դիվան»։ Կարևորագույն հարցերը քննարկվում էին «դիվանում»՝ յուրահատուկ պետական բարձրագույն խորհրդում, որին մասնակցում էին երկրի աշխարհիկ և հոգևոր տերերը։ Վասալ ֆեոդալները վարում էին զանազան պաշտոններ՝ կուսակալների (Օրբելյանները՝ Սյունիքում, Վաչուտյանները՝ Արագածոտնում, Խաղբակյան-

Պուշյանները՝ Վայոց ձորում), որոնք, տեղերում լինելով կենտրոնական իշխանության ներկայացուցիչներ, օժտված էին վարչական-դատական-ֆինանսական ֆունկցիաներով։ Կարևոր են եղել սպարապետի (սկզբում այն գտնվել է Զաքարյանների, հետո՝ Խաղբակյանների ձեռքում), ամիրների (սրանք վերահսկել են քաղաքային կամ գավառական ներքին կյանքը, կարգավորել հարկային գործը, զորահավաքը), հեջուբի (ֆեոդալական տիրույթներում սենեկապետի) և այլ պաշտոններ։

Զաքարյաններն ունեին նաև իրենց սեփական զորքը և դրոշը։

Զաքարյան Հայաստանում ոչ միայն հայ աղնվականությունը, այլև հայ եկեղեցին ու հոգևորականությունը վերականգնեցին իրենց նախկին հեղինակությունը, քաղաքական դիրքը, տնտեսական հզորությունը։

Շահագործվող հիմնական տարրը գյուղացիությունն էր, որը հողից օգտվելու համար կալվածատիրոջը վճարում էր բնահարկ, իր տերերի համար կատարում կոռային աշխատանք։

Զաքարյան Հայաստանում նկատելի էր տնտեսական և մշակութային վերելքը։ Զգալի զարգացում ապրեցին գյուղատնտեսությունը, արհեստագործությունը, առևտուրն ու քաղաքային կյանքը, ընդարձակվեց ապրանքային արտադրանքը, զարգացավ առևտրավաշխառուական կապիտալը։

Պատմական զարգացման ընթացքը համարյա հասցրել էր Հայաստանի ազատագրված նահանգներում ինքնուրույն թագավորության վերականգնմանը, որը սակայն կասեցվեց թաթար-մոնղոլական ավերիչ արշավանքների հետևանքով։

2. ԹԱԹԱՐ-ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒՁԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՎ ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԴԻՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

XIII դարի սկզբին Կենտրոնական Ասիայում կազմավորվեց և պատմության թատերաբեմ մտավ մոնղոլական վաղ ֆեոդալական պետությունը, որին վիճակված էր ճակատա-

գրական դեր խաղալ ինչպես Ասիայի, այնպես էլ Եվրոպայի պատմության մեջ։

1220 թ. ամռանը Խորեզմշահ Ալա էդ Դին Մուհամմադին հետապնդելու և, որ ավելի կարևոր է, Իրանն ու Անդրկովկասը հետախուզելու նպատակով մոնղոլ տիրակալ Չինգիզ խանը Միջին Ասիայում առանձնացրեց 30000-ոց մի բանակ՝ Ջեբեյ նոյինի և Սուբեդեյ բահադուրի գլխավորությամբ[1]։ Վերջիններս, ձեռնամուխ լինելով իրենց առջև դրված խնդրի իրագործմանը, տեղեկանում են 1220 թ. դեկտեմբերի սկզբին Խորեզմշահի մահվան մասին[2] և այդ լուրը հայտնում Չինգիզ խանին։ Ստանալով առաջ շարժվելու վերաբերյալ վերջինիս թույլտվությունը, նրանք դրավում են մի շարք բաղաքներ Խորասանում ու պարսկական Իրաքում և ապա շարժվում Ատրպատական ու պաշարում Թավրիզը։ Այս քաղաքի կառավարիչ Ուզբեքը, դրամ, թանկարժեք զգեստներ և կենդանիներ տալով մոնղոլներին, կարողացավ հաշտություն կնքել նրանց հետ[3]։ Դրանից հետո վերահաս ձմռան, ձյան ու ցրտի պատճառով Ջեբեյն ու Սուբեդեյը որոշեցին հասնել Մուղան՝ այնտեղ ձմեռելու[4]։

Անցնելով Երասխը՝ Ջեբեյն ու Սուբեդեյը հասան Մուղան, որտեղից էլ շարժվեցին դեպի Պարտավ և իրենց ճանապարհը շարունակեցին Պարտավ-Գանձակ-Շամքոր-Տփղիս ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող ճանապարհով։ Հասնելով Շամքոր (վահրամ Գագեցու իշխանության արևելյան սահմանը), մոնղոլները քիչ անց՝ Շամքոր-Տփղիս ուղղությամբ (կոնկրետ վայրը չի հիշատակվում և ոչ մի աղբյուրում) շարժվելիս առաջին անգամ բախ-

---

[1] *Рашид ад-Дин*, I, кн. 2, с.208—209; *ан-Насави*, с. 89; *С. А. Козин*. Сокровенное сказание, I, с. 187.

[2] *Տե՛ս* Материалы по истории туркмен и Туркмении, I, с. 489.

[3] Իբն ալ Ասիր, էջ 300։

[4] *Նույն տեղում*, Juvaini, *I*, *էջ 147։ Ռաշիդ էդ Դինը տեղեկացնում է, որ գնացին Առան ձմեռելու (տե՛ս Рашид ад-Дин*, I, кн. 2, с. 227).

վեցին հայ-վրացական ուժերի հետ[5]։ Վերջիններիս 10000-ոց բանակը ճակատամարտում պարտություն է կրում[6] և զգալի կորուստներ տալով՝ նահանջում։ Ճակատամարտը, հավա-

---

5 Մոնղոլական հետախուզական զորաբանակի արշավանքի ընթացքում, նրա և հայ-վրացական զորքերի միջև եղած զինական բախումներին, դրանց ժամանակի ու վայրերի վերաբերյալ պատմագիտական գրականության մեջ արտահայտվել են ու այժմ էլ արտահայտվում են հակասական ու իրարամերժ տեսակետներ։ Ուսումնասիրողներից ոմանք, գրտնում են, որ տեղի է ունեցել երեք ճակատամարտ։ Սակայն դրանք նշվում են տարբեր վայրերում ու ժամանակներում (D'Ohsson, նշվ. աշխ., հ. 1, էջ 326—335, Լ. Հ. Բարայան, նշվ. աշխ., էջ 166—180, Ս. Շահնազարյան, Վահրամյանների իշխանությունը մոնղոլների հետախուզական արշավանքների և Ջալալ էդ-Դինի նվաճումների ժամանակ, 52—60, Ю. М. Сихарулидзе, նշվ.աշխ. էջ 17—18, საქართველოს ისტორიის მატერიალები III, էջ 533—536)։

Ուրիշները ցույց են տվել, որ տեղի է ունեցել երկու ճակատամարտ։ Սակայն նրանք էլ հակասություններ մեջ են ճակատամարտի վայրերի ու ժամանակի հարցում (Հ. Հ. Մանանդյան, Գ, էջ 192—196, R. Grousset, L'Empire Mongol, p. 258—259: Նույնի, L'Empire des stepes, p. 307)։ Եղել են և ուսումնասիրողներ, որոնց համաձայն տեղի է ունեցել մեկ ճակատամարտ (Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը, էջ 181—182, Ա. Գ. Գալստյան, տե՛ս Завоевание Армении, с. 167).

Աղբյուրագիտական տեղեկությունների նոր քննությունը սակայն ցույց է տալիս, որ Ջեբեյի ու Սուբեդեյի արշավանքի ընթացքում մոնղոլական զորամիավորման և հայ-վրացական զինական ուժերի միջև տեղի է ունեցել չորս ճակատամարտ։

6 Իբն ալ Ասիր, էջ 300, Рашид ад Дин, I, кн. 2, էջ 227։ Մեզ հայտնի չէ՝ ինչի հիման վրա է Ա. Շահնազարյանը գտնում, թե «...Նախիջևանի մոտով Արաքսն անցնելուց հետո մոնղոլներն ընդհարվում են հայ-վրացական 10-հազարանոց զորաբանակի հետ և նրան պարտության մատնելուց հետո մտնում Անդրկովկաս» (տե՛ս Վահրամյանների իշխանությունը մոնղոլների հետախուզական արշավանքների և Ջալալ էդ Դինի նվաճումների ժամանակ, էջ 53)։ Լ. Հ. Բարայանի կարծիքով ճակատամարտը տեղի է ունեցել Աղստևի շրջանում (Լ. Հ. Բարայան, նշվ. աշխ., էջ 169)։ Այս հարցում կարող է օգտակար լինել Վարդան Արևելցու հետևյալ վկայությունը. «...եկին մտին յերկիրն Գուգարացւոց առ դաշտավայրօքն, ի կողմանցն Աղուանից, իբրև թէ քսան հազար. և կոտորէին զամենայն կենդանի զորս գտանէին ...» (Վարդան Արևելցի, էջ 142)։

նաբար, տեղի է ունեցել 1220 թ. դեկտեմբերի վերջին, ինչպես նկատել է Յու. Մ. Սիխարուլիձեն[7]։

Ճակատամարտից հետո մոնղոլները Գուգարքից մտան Վրաստան, հասան Տփղիս, ապա առաջ շարժվելով և հանդիպելով թալուտ անտառների, վերադարձան[8]։ Գեորգի Լաշա թագավորի ժամանակագրի վկայությամբ՝ մոնղոլների կողմից Սոմխիթն ու Հերեթն ասպատակելուց հետո Գեորգի Լաշան հակառակորդին հանդիպեց Բալիի մոտ, սակայն պարտություն կրեց և ինքն էլ վիրավորվեց։ Ապա մոնղոլները հետապնդեցին և կոտորեցին նահանջող վրաց-հայկական զորքերին[9]։ Ճակատամարտից հետո, ինչպես Կիրակոս Գանձակեցին է վկայում, մոնղոլները «...դարձեալ եկին իջին յաշխարհն Աղուանից, ի սահմանս Շամքոր քաղաքի»[10]։

Հայտնի է, որ մոնղոլները դեռևս լինելով շամանականներ, սրբազանի վերաբերմունք չունեին այս կամ այն կրոնի հանդեպ։ Քրիստոնյաների կամ մահմեդականների նկատմամբ նրանց վերաբերմունքը պայմանավորված էր քաղաքական կոնկրետ իրադրությամբ[11]։ Եվ քանի որ վրաց-հայկական ուժերին պարտության մատնելուց հետո մինչև Շամ-

---

7 Ю. М. Сихарулидзе, նշվ. աշխ., էջ 16։

Լ. Հ. Բարայանի կարծիքով՝ ճակատամարտը տեղի է ունեցել 1220 թ. դեկտեմբերի սկզբին (Լ. Հ. Բարայան, նշվ. աշխ., էջ 170)։ Սակայն, ինչպես ցույց է տալիս Ռենե Գրուսեն, դեռ 1220, թ. դեկտեմբերի մոտ (սկզբին) մահացել էր խորեզմի սուլթան Մուհամմադը (R. Grousset, L'Empire Mongol, էջ 239)։ Հայտնի է, որ դրանից հետո մոնղոլական հետախուզական բանակը, ստանալով Չինգիզ խանի թույլտվությունը, առաջ շարժվեց և հասավ Համադան, ուր ինչպես վկայում է Իբն ալ Ասիրը, արդեն սկսվել էր ձմեռը (Իբն ալ Ասիր, էջ 300)։ Դրանից հետո էր, որ Ջեբեն ու Սուբեդեյը մտան Ատրպատական, այնտեղից էլ շարժվելով դեպի Հայաստանի հյուսիսային շրջանները, բախվեցին հայ-վրացական ուժերին։ Դա բավականին երկար տևող ասպմերի էր և Համադանից մինչև Գուգարք հասնելու համար զգալի ժամանակ կպահանջվեր։ Ուստի ավելի հավանական է ճակատամարտը թվագրել 1220 թ. դեկտեմբերի վերջերով։

8 Կիրակոս Գանձակեցի, էջ 202, Рашид ад-Дин, I, кн. 2, с. 227.

9 Ջորջոբոս ցՕոտցրոնց, I, էջ 370։

10 Կիրկոս Գանձակեցի, էջ 202։

11 Ch. Lemercier, p. 70.

քոր Նրանց անցած վայրերում բնակվում էին քրիստոնյաները, ուստի նրանք սկսել են սուտ լուրեր տարածել, թե, իբր, իրենք քրիստոնյաներ են և եկել են նրանց պաշտպանելու մահմեդականներից[12]: Դա մոնղոլների տակտիկայից ու ստրատեգիայից բխող երևույթ էր և նպատակ ուներ բեցնել տեղական բնակչության զգոնությունը, որպեսզի բացավեր դիմադրությունը: Պատահական չէ Կիրակոսի «վասն այսորիկ ոչ ամրացան բնակիչք աշխարհին»[13] արտահայտությունը: Այդպես «անհոգ» վիճակում պահելով տեղի բնակիչներին, մոնղոլները անարգել սրի էին քաշում նրանց:

Հայ-վրացական ուժերը երկու պարտություն կրելուց հետո որոշեցին դիմել հարևաններին օգնության թշնամու դեմ միասնական ճակատ ստեղծելու նպատակով: Վրաց արքունիքը մոնղոլների հետանալուց հետո դիմեց Ատրպատականի և Առանի տեր Ուղրեքին, ինչպես նաև՝ Խլաթի ու Ջազիրայի տեր Մելիք Աշրաֆին, առաջարկելով միասնական ուժերով պայքարել ընդհանուր թշնամու դեմ: Նրանք համաձայնության եկան ռազմական գործողություններ սկսել գարնանը[14]: Երբ մոնղոլները մոտեցան Շամքոր քաղաքին, հավանաբար տեղեկացան այդ մասին և դիմեցին համապատասխան քայլերի: Ջսպասելով գարնան բացվելուն, մոնղոլները կրկին շարժվեցին դեպի Վրաստան: Նրանց միացավ նաև Ուղրեքի մամլուքներից Ակուշ անունով մի թյուրք ասպատակիչ[15], որն իր շուրջը հավաքած տեղի թուրքմեն ու քուրդ բնակչությունից մի մեծ բազմություն՝ մոնղոլներին առաջարկեց իր ծառայությունը: Վերջիններս սիրով ընդունեցին այն[16]: Բացառված չէ, որ Ջեբեյն ու Սուբեդեյը Շամքորի շրջակայքում հենց Ակուշից տեղեկացան վերոհիշյալ բանակցությունների մասին:

---

12 Կիրակոս Գանձակեցի, էջ 202:

13 Նույն տեղում:

14 Իբն ալ Ասիր, էջ 300:

15 Նույն տեղում:

16 Նույն տեղում:

Մոնղոլներն առաջ շարժվելով հասան Տիղիսի մոտ։ Այստեղ հայ-վրացական ուժերը որոշեցին թշնամուն ճակատամարտ տալ։ Ջեբեյն ու Սուբեդեյը սկզբում մարտի նետեցին Ակուշի զորքը, և երբ հակառակորդ կողմերը թուլացրել էին միմյանց, վրա հասան մոնղոլական զորքերը և ճակատամարտի ելքը որոշեցին իրենց օգտին։ Ըստ Իբն ալ Ասիրի՝ ճակատամարտը տեղի է ունեցել զուլ-կաղդա ամսին (28 դեկտեմբեր—26 հունվար)[17]։

Վերոհիշյալ ճակատամարտից հետո մոնղոլներն ասպատակեցին երկրի այն շրջանները, որոնք դեռ չէին կողոպտել[18]։

Հյուսիսարևելյան Հայաստանն ու Արևելյան Վրաստանն ասպատակելուց հետո Ջեբեյն ու Սուբեդեյն իրենց զորքով ետ դառնալով՝ բանակեցին Պարտավի ու Բայլականի միջև գտնվող Բեղամեջի ամրացված վայրում[19], որտեղից էլ, ինչպես Կիրակոսն է վկայում «...յանդուգն յարձակմամբ սուրէին զբազում գաւառս»[20]։

1221 թ. գարնան սկզբին մոնղոլները շարժվեցին դեպի Թավրիզ[21], սակայն նվիրներ ստանալով, հեռացան, ապա հասնելով Մարաղա, պաշարեցին այն։ Մարաղացիները հերոսական դիմադրություն են ցույց տալիս, սակայն ուժերն անհավասար էին, և քաղաքն ի վերջո գրավվում է[22]։ Գրանից հետո Ջեբեյն ու Սուբեդեյը շարժվում են դեպի Դիարբեքիր (Ամիդ) ու Իրբիլ (Արբելա), բայց լսելով վերջինիս աթաբեկ

---

17 Իբն ալ Ասիր, էջ 301։

Ռ. Գրուսեն կարծում էր, թե Տիղիսի մոտ ճակատամարտը կայացել է 1221 թ. փետրվարին (R. Grousset. L'Empire Mongol, էջ 258)։ Հեղինակը վկայակոչում է Կիրակոս Գանձակեցուն (R. Grousset, L'Empire des steppes, էջ 307), որը, սակայն այդ ճակատամարտի մասին վկայություն չունի։ Շ. Լեմերսիեն Տիղիսի ճակատամարտը թվագրում է ավելի ուշ՝ 1221 թ. մարտին (Ch. Lemercier, էջ 9)։

18 Իբն ալ Ասիր, էջ 301։

19 Կիրակոս Գանձակեցի, էջ 202—203։

20 Նույն տեղում, էջ 203։

21 Рашид ад-Дин, I, кн. 2, с. 227.

22 Նույն տեղում։

Մուզաֆֆար էդ Դինի մեծաքանակ զորքերի մասին, հետ են դառնում[23]։ Այդ ընթացքում Համադանում մոնղոլների դեմ ապստամբել են Ջեմալ էդ Դին Աբիեն։ Մոնղոլական զորաբանակը հասնելով Համադան՝ ճնշում է այդ ապստամբությունը[24], ապա շարժվում ու գրավում Արդաբիլը[25], որից հետո շարժվում դեպի Թավրիզ։ Մոնղոլները, ստանալով պահանջված գրամն ու զգեստները, հեռանում են Սարաբ քաղաքը, կողոպտում այն[26], ապա գրավում են նաև Խոյը, Սալմաստը[27], Նախիջևանը[28] և շարժվում Բայլականի վրա[29], ուր համառ դիմադրության են հանդիպում բնակչության կողմից։ Սակայն 1221 թ. աշնան վերջին այդ քաղաքն էլ ընկնում է թշնամու ձեռքը, կողոպտվում, և ողջ բնակչությունն էլ սրի քաշվում[30]։ Բայլականի գրավումից հետո Ջեբեյն ու Սուբեդեյը շարժվում են Գանձակի վրա[31]։ Համաձայն Իբն ալ Ասիրի՝ մոնղոլները իմանալով քաղաքի անառիկության, ինչպես նաև բնակչության քաջության մասին, ստանալով իրենից պահանջած գրամն ու զգեստները, հեռանում են այնտեղից[32]։ Մեկ հիմնավոր չի թվում Ռաշիդ էդ Դինի տեղեկությունը, թե մոնղոլները հարձակվեցին Գանձակի վրա, այն գրավեցին և ամբողջովին քարուքանդ արեցին[33]։

Գանձակից մոնղոլական զորաբանակը շարժվեց դեպի Հյուսիսային Հայաստան՝ նույն Գանձակ-Շամքոր-Տփղիս ուղղությամբ և չորրորդ անգամ բախվեց հայ-վրացական ուժերի հետ։

---

23 Նույն տեղում։

24 Նույն տեղում, Juvaini, I, p. 148.

25 Իբն ալ Ասիր, էջ 302։

26 Նույն տեղում, էջ 302—303։

27 А. А. Алиэаде, նշվ. աշխ., էջ 98։

28 Juvaini, I, p. 148.

29 Իբն ալ Ասիր, էջ 303, Juvaini. I, էջ 148։

30 Իբն ալ Ասիր, էջ 303։

31 Նույն տեղում։

32 Նույն տեղում։

33 Рашид ад-Дин, I, кн. 2, с. 228. Երբ Գանձակը նման ավերածության ենթարկված լիներ, ապա այդ մասին անպայման կհիշատակեր Կիրակոս Գանձակեցին։

Ճակատամարտը տեղի է ունեցել 1221 թ. վերջին, հավանաբար դեկտեմբերի կեսին:

Սկզբնաղբյուրները տարբեր անվանումներ են տալիս ճակատամարտի վայրին: Վարդան Արևելցին[34], Մխիթար Այրիվանեցին[35], ճակատամարտի վայրը նշում են Կոտման գետի մոտ: Գրիգոր պատմիչը ճշտում է, որ այն տեղի է ունեցել Կոտման գետի մոտ՝ Սագամի (Զեկամ) դաշտավայրում[36]: Կիրակոս Գանձակեցին նշում է Խունանի հովիտը[37]: Իսկ վրաց ժամանակագիրը՝ Սագիմի, այն է՝ նույն Բերդուջ գետի մոտ[38]:

Ն. Ֆ. Շուշիաշվիլին իրավացիորեն գտել է, որ Բերդուջը, Սագիմը և Կոտմանը հավանաբար եղել են միևնույն գետի անունները տարբեր ժամանակներում, և որ դրան մոտիկ է եղել Խունանը[39]: Այս տեսակետի օգտին է խոսում այն, որ Կիրակոս Գանձակեցու և Ռաշիդ էդ Դինի նկարագրած ճակատամարտի ընթացքը[40], համընկնում է վրաց ժամանակագրի նկարագրածին, որն այն ընդունում է Սագիմի

---

34 Վարդան Արևելցի, էջ 142։

35 Մխիթար Այրիվանեցի, էջ 65։

36 Գրիգոր պատմիչ, էջ 5։

37 Կիրակոս Գանձակեցի, էջ 203։

38 «Վրաց ժամանակագրություն», էջ 56։

39 Ա. Շահնազարյան, Վահրամյանների իշխանությունը մոնղոլների հետախուզական արշավանքների և Ջալալ էդ Դինի նվաճումների ժամանակ, էջ 56—57։

Սույն ճակատամարտի վայրին սկզբնաղբյուրների տված տարբեր անվանումները պատմագիտության մեջ տարակարծությունների տեղիք են տվել։ Ռ. Ա. Ալուրաբյանը (նշվ. աշխ., էջ 181—182), Յու. Մ. Սիխարուլիձեն (նշվ. աշխ., էջ 17) գտնում են, որ խոսքը վերաբերում է միևնույն ճակատամարտին։ Նույն տեսակետն է նշվում Վրաստանի պատմության ակնարկներում (տե՛ս հ. 3, էջ 535—536)։

Լ. Հ. Բաբայանը տարբերակում է՝ Կոտմանի և Խունանի ճակատամարտեր (Լ. Հ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 171—180)։ Նույն կերպ է վարվել նաև Ա. Շահնազարյանը (Վահրամյանների իշխանությունը մոնղոլների հետախուզական արշավանքների և Ջալալ էդ Դինի նվաճումների ժամանակ, էջ 58—60)։

40 Կիրակոս Գանձակեցի, էջ 203։ Рашид ад-Дин, I. кн. 2, с. 228.

ճակատամարտ անվան տակ[41]։ Իբն ալ Ասիրի վկայությունն այդ մասին նույնպես համընկնում է վերոհիշյալ տվյալներին։ Արաբ պատմիչը հատուկ տարբերակում է մոնղոլների և հայ-վրացական ուժերի ճակատամարտը Տփղիսի մոտ, վրացիների երկրի սահմանային կողմերում տեղի ունեցածից[42]։ Իսկ դա Գագի իշխանությունն է, որտեղ գտնվում է Կոտման գետը։

Վերոհիշյալ ճակատամարտը հանգամանորեն նկարագրված է սկզբնաղբյուրներում։

Ըստ վրաց ժամանակագրի՝ Գեորգի Լաշան 90000-ոց զորքով շարժվեց դեպի Գագի սահմանագլխին բանակած մոնղոլները։ Նրան մեծ զորքով միացան Իվանե աթաբեկն ու ամիրսպասալար Շանշեն (Շահնշահը—Հ. Ս.) և մահաբերությունս Վահրամ Գագեցին[43]։

Համաձայն Իբն ալ Ասիրի վրացիները իրենց երկրի սահմանային կողմերում մեծ զորք էին հավաքել, որպեսզի արգելակեն մոնղոլների ներթափանցումը[44]։ Կիրակոս Գանձակեցու տվյալներով հայ-վրացական զորքերը, Գեորգի Լաշայի ու Իվանե աթաբեկի գլխավորությամբ, հանդիպելով թշնամու մի զորագնդի, բախվեցին միմյանց և «...ի փախուստ դարձուցին զթշնամիսն. բայց քանզի դարան գործեալ էր թշնամեաց, յարեան յետուստ կողմանէ և սկսան կոտորել զզօրսն վրաց. զարձան ընդդէմ և փախուցեալքն, և ասսի և անսի ի մէջ առեալ՝ մեծ հարուածս հասուցին ի վերայ զօրսն քրիստոնէից։ Եւ փախեաւ թագաւորն և իշխանքն ամենայն։ Եւ ժողովեալ թշնամեացն զաւար զօրսն՝ տարան ի բանակս իւրեանց»[45]։

Վերոհիշյալ պատմիչների տեղեկությունները ճակատամարտի ընթացքում մոնղոլների կիրառած տակտիկայի և հայ-վրացական ուժերի տված զոհերի մասին հաստատում

---

41 «Վրաց ժամանակագրություն», էջ 56։

42 Իբն ալ Ասիր, էջ 301, 304։

43 «Վրաց ժամանակագրություն», էջ 55—56։

44 Իբն ալ Ասիր, էջ 304։

45 Կիրակոս Գանձակեցի, էջ 203։

է Ռաշիդ էդ Դինը։ Վերջինս ցույց է տալիս, որ հակառակորդ կողմերի հանդիպման ժամանակ Ջեբեյը 5000 զինվորների հետ դարան մտավ, իսկ Սուբեդեյը մնացած ուժերով շարժվեց առաջ[46]։ Նկատենք, որ մարտավարման նման տակտիկան ընդունված էր մոնղոլների ռազմական արվեստում և դրան հանդիպում ենք նաև նրանց այլ երկրներում վարած ռազմական գործողություններին ծանոթանալիս։ Կոտմանի մոտ մոնղոլները կիրառեցին ճակատամարտերում իրենց համար բնորոշ տակտիկական մի ուրիշ քայլ ևս։ Սկզբում նրանք դիմեցին կեղծ նահանջի, փախուստի։ Հայ-վրացական ուժերն էլ, ոգևորված հաջողությունից, հետապնդեցին հակառակորդին։ Եվ երբ մոնղոլները նրանց այնքան առաջ էին տարել, որ դարանակալած դունդը մնացել էր թիկունքում, վերջինս դուրս գալով նեռվից մարտի, և հակառակորդին առավ աքցանի մեջ։ Ապա երկու կողմից ուժեղ հարվածելով հայ-վրացական զորքին՝ մոնղոլները կոտորեցին շուրջ 30000 զինվոր[47]։ Այս առթիվ վրաց ժամանակագիրը տեղեկացնում է. «Իսկ Բերդուջի, որ այժմ Սագիմ է կոչվում, գետափին բանակած [թաթարները] անմիջապես ձիերը հեծան, և հարձակվեցին միմյանց վրա։ Տեղի ունեցավ թեժ ճակատամարտ։ Թաթարների կեսը փախուստի դիմեց, կեսն էլ դարանակալ եղավ, և հետապնդեցին։ ...խուճապեցին վրացիները, և զորքը, և ինքը՝ թագավոր Լաշան»[48]։

Գրիգոր պատմիչը, խոսելով Կոտմանի ճակատամարտի մասին, նշում է նրանում Վահրամ Գաղկցու ցուցաբերած քաջությունը։ Հայ-վրացական բանակի աջ թևը, մոնղոլների դեմ դիմավորող Գագի իշխանը[49], համարձակ մարտի նետվելով, մինչև երեկո անխնա կոտորում է հակառակորդին, ինչպես պատմիչն է նշում «մինչև առհասարակ լցաւ դաշտն Սագամայ կոտորեալ տաթարով»[50]։ Սակայն Վահրամ Գա-

---

46 *Рашид ад-Дин*, I кн. 2, с. 228.

47 Նույն տեղում։ Տե՛ս նաև Իբն ալ Ասիր, էջ 304։

48 «Վրաց ժամանակագրություն», էջ 56։

49 Գրիգոր պատմիչ, էջ 6։

50 Նույն տեղում։

դեպին, երեկոյան սանանալով թագավորական զորքի մյուս մասի պարտության լուրը, խիստ տխրելով «դարձաւ յամուրս քերդին իւրոյ, որ կոչի Քարհերձ»[51]։ Իսկ զորքի ձախ թեը գլխավորող Իվանեն սպարապետն ու Գեորգի Լաշան[52], պարտություն կրած նա դարձան Տփղիս[53]։

Վարդան Արևելցին վկայում է, որ Լաշա թագավորը Կոսման գետի մոտ պարտություն կրելով փախչում է Իվանեի հետ միասին[54]։ Ապա պատմիչը շարունակում է. «...բայց վատրամ տէր երկրին՝ մեծաւ քաջութեամբ գնայ հանդէպ երեսացն սատանիկ կոտորմամբ՝ մինչև ցԳարդման, չգիտելով զայլոցն փախուստն»[55]։

Ճակատամարտից հետո մոնղոլներն ասպատակեցին Հայաստանի հյուսիսային, Վրաստանի արևելյան շրջանները և, վրաց ժամանակագրի տվյալներով, հասնելով Սամշվիլդե (Շամշուլդե), հետ դարձան[56], հավանաբար իրենց ձմեռանոց՝ Բեղամեջ, որը վրաց աղբյուրում նշվում է որպես Պարտավի հարթավայր[57]։ Իսկ հայ-վրացական ուժերի փրկված մասը վերադարձավ Տփղիս, ուր ստեղծվեց ավելի մեծ և ուժեղ բանակ, որն էլ 1222 թ. սկզբներին շարժվեց հակառակորդի դեմ։ Սակայն այլևս նոր ճակատամարտ տեղի չունեցավ։ Իրն ալ Ասիրը նշում է, թե վրացական զորքերը տեղեկանալով, որ մոնղոլները մտել են երկիրը, և այլևս ոչ մի բան չի խանգարում նրանց առաջընթացին «...վերադարձան Տփղիս (Տաֆլիս) և երկիրը դատարկեցին, իսկ թաթարներն

---

51 Նույն տեղում։

52 Նույն տեղում։

53 «Վրաց ժամանակագրություն», էջ 56, ՔԱՐԹԼՈՍ ՑՈՎՐԵՈՒԹՅՈՒՆ. I, էջ 370։

54 Վարդան Արևելցի, էջ 142։

55 Նույն տեղում։

56 Վրաց ժամանակագրություն, էջ 56։ Մեզ հայտնի չէ, թե ինչի հիման վրա է Յու. Մ. Սիխարուլիձեն գտնում, որ Գանձակի մոտ վրացական (հայ-վրացական—Հ. Ս.) զորքերը հաղթել են մոնղոլներին, և պարտված մոնղոլները դնացել են Մուղան ձմեռելու (Ю. М. Сихарулидзе, նշվ. աշխ., էջ 18)։

57 ՔԱՐԹԼՈՍ ՑՈՎՐԵՈՒԹՅՈՒՆ, I, էջ 370։

իրենց ուղածն արեցին երկրում՝ կողոպտեցին, կոտորեցին, ավերեցին, սակայն տեսնելով, որ երկիրը շատ կիրճեր ու լեռնանցքներ ունի, չհամարձակվեցին խորքը թափանցել ու ետ դարձան»[58]։ Վարդան վարդապետը, ընդհակառակը, նշում է. «Եւ ի վերայ հարիւր հօթանասուն և մի թուին կամեցան այսրէն դառնալ նոյնք. այլ զի գտին դեսպանք նոցա կազմ և հաւաք զՀայս և զՎիրս, և տարեալ զհամբաւն՝ ոչ համարձակեցան դալ, այլ անդրէն դարձեալ գնացին, յո՛ և գնացին»[59]։

Նույն ոգով է պատմում նաև Գեորգի Լաշայի ժամանակագիրը. «...Հավաքվեց նրա (Գեորգի Լաշայի—Հ. Ս.) թագավորության [զորքը], և միացան Կարին քաղաքի զորքերն էլ, կանգ առան Լոմթա-Գորիի ու Ագարայի միջև և մինչ նրանց վրա հարձակվելը փախան (մոնղոլները—Հ. Ս.) և փրկվեցին ...»[60]։

Տվյալ դեպքում ավելի արժանահավատ պետք է ընդունել հայկական ու վրացական աղբյուրների տվյալները։ Հազիվ թե մոնղոլների դեմ կրկին անգամ ճակատամարտելու նպատակով գնացած հայ-վրացական նոր ու ավելի մեծ բանակը հանդիպեր թշնամուն և առանց մարտի մեջ մտնելու ետ դառնար, մի բան, որը ընդունվել է Դ'Օսոնի կողմից[61]։ Մոնղոլներն արդեն բավականին շատ մարտեր էին վարել և հավանաբար տվել նաև զգալի կորուստներ[62]։ Չպետք է մոռանալ, որ նրանք այս անգամ, հակառակ Մ. Պերշերոնի կարծիքի, նվաճողական ծրագիր չունեին, նրանց հիմնական խնդիրը երկրամասի աշխարհագրական, ռազմաքաղաքական վիճակին ծանոթանալն էր[63], որն արդեն իրագործվել էր և ժամանակն էր հեռանալ այդտեղից։

---

58 Իբն ալ Ասիր, էջ 304։

59 Վարդան Արևելցի, էջ 142։

60 ქართლის ცხოვრება; I, էջ 370։

61 *D'Ohsson*, Դշվ. աշխ., հ. 1։ էջ 335։

62 Ընդհանրապես վկայում է, թե համարյա առանց կորստի ետ դարձան (տե՛ս ан-Насави, էջ 89), որը չափազանցված է։

63 *M. Percheron*, Gengis-khan, Paris, 1962, p. 155.

1222 թ. սկզբներին, տեղեկանալով հայ-վրացական ուժերի կազմ ու պատրաստ լինելու մասին, մոնղոլները հյուսիսարևելյան Հայաստանից շարժվեցին դեպի Շիրվան, պաշարեցին Շամախին և գրավեցին այն։ Բնակչության մի մասը սրի քաշվեց, մյուս մասն էլ գերեվարվեց, իսկ քաղաքը, ինչպես ուրիշ դեպքերում, կողոպտվեց[64]։

Դրանից հետո իրենց գործն Անդրկովկասում ավարտված համարելով՝ մոնղոլները շրջանցելով Դերբենդը, լեռնային դժվարանցանելի վայրերով հասան Հյուսիսային Կովկաս[65]։ Այնտեղ ասպատակելով ալանների ու ղիչաղների երկիրը՝ շարժվեցին առաջ և 1223 թ. Կալկայի ճակատամարտում հաղթելով ռուսական զորքերին, ետ դարձան Մոնղոլիա (1224 թ.)։

Ջեբեյի ու Սուբեդեյի արշավանքը ծանր հարված հասցրեց անդրկովկասյան երկրներին։ Եվ չնայած տեղական ժողովուրդները ցույց տվին հերոսական դիմադրություն, այսուամենայնիվ, հաղթանակը համարյա միշտ մոնղոլների կողմն էր։ Դա բացատրվում է թաթար-մոնղոլական բանակի մարտունակությամբ, արագաշարժությամբ[66], նրա տրամադրության տակ եղած ռազմական լավ տեխնիկայով, հրամանատարության ռազմական արվեստով, և, որ ավելի կարևոր է, տեղական բնակչության թույլ կազմակերպվածությամբ։

Եթե ամփոփելու լինենք այն հիմնականը, որին հասան թաթար-մոնղոլ ասպատակիչները, ապա պետք է նշենք, որ

Ռ. Գրուսեն իր հերթին գրում էր, թե արշավանքը մոնղոլների համար ունեցավ այն դրական արդյունքը, որ նրանք կայուն ձևով հաստատվեցին Կասպից ծովի ափին և Կովկասի հարավում (R. Grousset, L'Empire Mongol, p. 360).

64 Իբն ալ Ասիր, էջ 304—305։

65 Իբն ալ Ասիր, էջ 304—305, Կիրակոս Գանձակեցի, էջ 203—204, «Վրաց ժամանակագրություն», էջ 56։ Վերջինիս մեջ նշվում է, թե անցան Դերբենդով։

66 Հ. Լամբը նշում է, որ մոնղոլական այս բանակը, որն ուղարկվել էր Խորեզմշահ Մուհամմադին հետապնդելու, օրական անցնում էր 130 կմ ոչ պակաս (H. Lamb, նշվ. աշխ., էջ 109)։

նրանք լիովին կատարելով իրենց գլխավոր ծրագիրը, վերադարձան հայրենիք՝ անցած տարածքի երկրների մասին ամբողջական պատկերացմամբ։ Նրանք իմացան, որ այնտեղ տիրող քաղաքական վիճակը միանգամայն նպաստավոր է մոտ ապագայում իրենց նվաճողական արշավանքները ձեռնարկելու համար։

Արշավանքի հետևանքով իրենց հերթին Անդրկովկասի ժողովուրդներն էլ հասկացան, թե ինչ ահեղ հակառակորդի հետ են գործ ունեցել։ Անհրաժեշտ էր ստեղծել միասնական ճակատ, մի բան, որը տիրող ֆեոդալական մասնատվածության պայմաններում դժվար իրագործելի խնդիր էր։ Առաջավոր Ասիային անհրաժեշտ էր այնպիսի հզոր վարչական, զինվորական և ռազմական ունակություն ունեցող մի գործիչ, որը, ճիշտ հասկանալով ստեղծված քաղաքական կացությունը, կարողանար կազմակերպել այդ միասնական ճակատը։

Պատմական կարևոր նշանակություն ունեցող խնդիրը, ինչպես կտեսնենք, փորձեց իր վրա վերցնել Խորեզմշահ Ջալալ էդ Դինը, որին, սակայն, վերոհիշյալ հատկություններից բնորոշ էր ռազմական հմուտ զորավարի ունակությունը։

3. ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ՋԱԼԱԼ ԷԴ ԴԻՆԻ ԴԵՄ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱԿԱՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Մոնղոլների հետախուզական արշավանքից ի վեր դրությունն Անդրկովկասում շարունակում էր մնալ բարդ։

1222 թ. աշնանը հայ-վրացական զինական ուժերը հարձակվեցին Առանի Բայլական քաղաքի վրա և սրի քաշեցին նրա բնակչությանը[67]։ 1223 թ. օգոստոս-սեպտեմբերին փոխադարձ հարձակումներ էին տեղի ունենում Սուրբ Մարիի (Սուրմարիի) մահմեդական կառավարիչների և հայ-վրացական ուժերի միջև[68]։ Վերջիններս 1225 թ. հարձակ-

---

67 Իբն ալ Ասիր, էջ 311—312։

68 Նույն տեղում, էջ 312—313։

վեցին Գանձակի վրա, սակայն այն գրավել չկարողացան[69]։ Նույն թվին հայերն ու վրացիներն արշավեցին Ատրպատական[70], սակայն լսելով, որ խորեզմի սուլթան Ջալալ էդ Դինը հասել է Մարաղա, փորձեցին հաշտություն կնքել Ատրպատականի տեր Ուզբեքի հետ, ասելով. «...եթե մեզ հետ չհամաձայնեք, ապա նախ քո երկիրը կգրավի, հետո մերը»[71]։ Սակայն Ջալալ էդ Դինը կանխեց այդ[72]։

Հայտնի է, որ խորեզմշահ Մուհամմադի մահից հետո (1220 թ.) նրա որդիներից հենց Ջալալ էդ Դինն իր վրա վերցրեց հոր գործի շարունակությունը։ Նա նպատակ ուներ նախ կանխել իր գլխավոր թշնամի մոնղոլներին, ապա վերականգնել խորեզմի պետության վաղեմի դիրքերը[73]։ Այդ նպատակով Ջալալ էդ Դինը փորձեց ամրանալ հյուսիսարևմտյան Իրանում և Անդրկովկասում։ Սակայն իր ծրագրի իրականացման ճանապարհին նա թույլ տվեց կոպիտ սխալներ, որոնք էլ պայմանավորեցին վերոհիշյալ ծրագրի ձախողումը։ Փոխանակ ռազմական մի դաշնակցություն ստեղծելու, Ջալալ էդ Դինը սկսեց ասպատակել այս ու այն երկիրը, անհանդուրժողական վերաբերմունք ցուցաբերեց քրիստոնյաների նկատմամբ, հանգամանքներ, որոնք անհնար էին դարձնում տարբեր երկրների գործակցությունը նրա հետ։ Այս ընթացքում (1225—1231 թթ.) խորեզմի սուլթանը, թուլացրեց և՛ իր, և՛ հարձակման ենթարկված երկրների ուժերը՝ կանխորոշելով մոնղոլական հետագա արշավանքների հաջողությունը։ Իրավացի չէ Հ. Հ. Մանանդյանը, երբ գտնում է, թե Վրաստանը սխալ վարվեց Ջալալ էդ Դինի հետ պայմանագիր չկնքելով[74]։ Վրաստանն իրականում չէր կարող այդ քայլին դիմել, քանզի դա ոչ թե հաշտություն կլիներ, այլ պարզապես հնազանդություն օտար բռնակալին։

---

69 Նույն տեղում, էջ 317։

70 Նույն տեղում, էջ 319։

71 Նույն տեղում։

72 Նույն տեղում։

73 Հ. Հ. Մանանդյան, Գ, էջ 198—199, Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1976, էջ 602—603։

74 Հ. Հ. Մանանդյան, Գ, էջ 200։

Ջարմաղանի գլխավորությամբ՝ Ջալալ էդ Դինին հետապնդելու նպատակով կազմակերպված արշավանքի, այդ ընթացքում մղված հակամոնղոլական պայքարի և դրանից հետո էլ Անդրկովկասը մոնղոլների կողմից նվաճելու հարցերը քննարկելիս անհնար է շրջանցել Խորեզմշահ Ջալալ էդ Դինի գործունեությունը։

1225 թ. Ջալալ էդ Դինը գրավեց Ատրպատականը և վերջ տվեց Ելտկուզյանների վերջին ներկայացուցիչ Ուզբեքի իշխանությանը։ Դրանից հետո նա սկսեց իր արշավանքներն Անդրկովկասի վրա[75]։ Հայ-վրացական ուժերն Իվանե աթաբեկի գլխավորությամբ 1225 թ. օգոստոսի վերջերին Գառնի գյուղաքաղաքի մոտ ճակատամարտ տվին Խորեզմշահին[76]։ Սակայն հայ-վրացական բանակը, որը դիրք էր գրավել բլրի վրա[77], չկարողացավ օգտագործել իր գերազանցելի վիճակը՝ հապաղեց դիմել ռազմական գործողություններին, և Ջալալ էդ Դինը օգտվելով դրանից, վերադասավորելով ուժերը, մարտական գործողությունների նախաձեռնությունը վերցրեց իր ձեռքը[78]։ Իվանե աթաբեկը ախալցխայի Շալվա և Իվանե եղբայրների գլխավորությամբ 7000-ոց մի զորաբանակ ուղարկեց։ Բռնկվեց թեժ ճակատամարտ[79]։ Սակայն մարտնչող կողմերի ուժերն անհավասար էին, իսկ հայ-վրացական հիմնական ուժերն այդպես էլ կռվի մեջ չմտան և պարտություն կրեցին։ Շալվան գերեվարվեց, իսկ նրա եղ-

---

75 Ջալալ էդ Դինի՝ դեպի Անդրկովկաս կազմակերպված արշավանքների հանգամանալից պատմությունը շարադրել է Հ. Գ. Մարգարյանը (տե՛ս «Ջալալ էդ Դինի Հայաստան և Վրաստան կատարած արշավանքների պատմության շուրջ».—ՊԲՀ, 1981, № 4)։

76 Գառնիի ճակատամարտի հանգամանալից քննությունը տվել է Հ. Գ. Մարգարյանը (տե՛ս «Գառնիի ճակատամարտի պատմության շուրջ», ԼՀԳ, 1982, № 3)։

77 Ан-Насави, с. 156—157.

78 Նույն տեղում, էջ 157—158, Juvaini, II, p. 427։

79 Հավանաբար ճակատամարտի այս հատվածն է նկատի ունեցել Ղ. Հ. Բարայանը, երբ նշել է, որ այն չափազանց համառ բնույթ է կրել, կարծիք, որը ժխտվել է Հ. Գ. Մարգարյանի կողմից (Գառնիի ճակատամարտի պատմության շուրջ, էջ 75)։

ցայլ Իվանեն սպանվեց։ Ինքը՝ աթաբեկը, 10 հոգու հետ միասին, մի կերպ փրկվեց, ապաստանելով Դեղի (Քեղի) ամրոցում[80]։

Գառնիի ճակատամարտից հետո Ջալալ էդ Դինը գրավեց Դվինը[81], ապա լսելով, որ Թավրիզում ապստամբություն

---

80 «Վրաց ժամանակագրություն», էջ 60—61, ан-Насави, с. 158—159, Իբն ալ Ասիր, էջ 321, Կիրակոս Գանձակեցի, էջ 225, Juvaini, II, էջ 427, Սամփեսոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 339։

Ճակատամարտում Իվանե աթաբեկի հրամանատարության ներքո գտնվող զորքերի բոնած դիրքը պատմագրաններին կողմից տարբեր մեկնաբանության է ենթարկվել։ Ի. Ա. Ջավախիշվիլին անհավանական է համարել աթաբեկի գործողությունների նպատակադիր լինելը, ինչպես որ տեղեկացնում է վրաց ժամանակագիրը, քանի որ պարտության դեպքում հենց Իվանեն էր՝ պատասխանատվություն կրելու։ Անվանի դիտնականը վրաց ժամանակագրի «ասում են» արտահայտության հիման վրա կարծում էր, որ XIV դարում ապրած մատենագիրն օգտվել է հետագայում «քաղաքացիությունն» ստացած վարկածից։ Ի. Ա. Ջավախիշվիլին առավել հավանական է համարում, որ Իվանեն վճռական պահին չի կարողացել ճիշտ կողմնորոշվել և այդ պատճառով էլ անհրաժեշտ պահին կռվի չի նետել իր հիմնական ուժերը (տե՛ս Գառնիի ճակատամարտի պատմության շուրջ, էջ 76)։

Հ. Գ. Մարգարյանը գտնում է, որ Իվանեի գործողությունները նպատակադիր են եղել, պայմանավորված ախալցխացի իշխանների նկատմամբ ունեցած ինչամանքով՝ այնպես, ինչպես վրաց ժամանակագիրն է արձանագրել։ Մյուս կողմից էլ, ըստ հեղինակի, Իվանեն կարող էր իրեն այնքան ուժեղ համարել, որ անտեսեր Լաղուհուն (Գառնիի ճակատամարտի պատմության շուրջ, էջ 76—80)։

Հարկ է նշել, որ դժվար է միանշանակ ձևով պաշտպանել տեսակետներից որևէ մեկը։ Դրանցից յուրաքանչյուրն ունի իր տրամաբանական հիմքը։ Թեև, այնուամենայնիվ, երկրորդ տեսակետի կողմնակիցներին հարկ կլինի պատասխանել մի հարցի ևս. ինչո՞ւ նախահարձակներին նպատակադիր կերպով մարտի ուղարկելուց հետո Իվանե աթաբեկը հանգիստ կերպով չի հեռացել (իսկ դրա համար նա ժամանակ ուներ), այլ մնացել է տեղում և տվել հսկայական կորուստներ, ինքն անձամբ մազապուրծ մի կերպ փրկել իր կյանքը։ Ինչևէ, մի բան պարզ է. ճակատամարտում Ջալալ էդ Դինի հաղթանակը բացատրվում է, գլխավորապես, հայ-վրացական զորքերի անկազմակերպ, չհամաձայնեցված գործողություններով։

81 ан-Насави, с. 159.

է նախապատրաստվում, նա դարձավ այնտեղ[82]։ Իսկ Անդրկովկասում նրա թողած զորամասը երեք ամիս շարունակ ասպատակ էր սփռում երկրամասով մեկ[83]։ Թավրիզից սուլթանն Անդրկովկաս ուղարկեց Ուր-խանին, որը գրավեց Գանձակը, Բայլականը և Շամքորը[84]։ Ինքը՝ Ջալալ էդ Դինը, անձամբ գնաց Խոյ[85], որից հետո միայն մտավ կենտրոնական Հայաստան։ Գերեվարված Շալվա Ախալցխացին փորձեց յուրայիններին տեղեկացնել Խորեզմշահի արշավանքի մասին, սակայն Երասխ գետի մոտ Շալվայի նամակատարը բռնվեց, իսկ ախալցխացի իշխանը մահապատժի ենթարկվեց[86]։ Անցնելով Արարատյան դաշտավայրով՝ Խորեզմշահը հասավ Փամբակի լեռնաշղթային, որտեղ բախվեց հայ-վրացական զորքերին, հաղթեց[87], ապա շարժվեց դեպի Լոռի, այնուհետև՝ Ալիսարդ[88] ամրոցը։

1226 թ. մարտի սկզբին Ջալալ էդ Դինն արշավանք ձեռնարկեց Տփղիսի վրա։ Նախապես մի ջոկատով անցավ հարձակման, սակայն շուտով դիմեց կեղծ նահանջի։ Հայ-վրացական զորքերը հետապնդեցին հակառակորդին։ Այդ ընթացքում Ջալալ էդ Դինի զորավարներից Ուր-խանն իր զորամիավորումով թափանցեց հայ-վրացական զորքի թիկունքը։ Իսկ Խորեզմշահը միանալով իր հիմնական ուժերին շրջվեց և անցավ գրոհի։ Հայ-վրացական ուժերն ընկան ապցանի մեջ։ Տփղիսի կայազորը, տեսնելով ստեղծված վիճակը, նետվեց գրոհի, սակայն հանդիպեց հակառակորդի նետաձիգների հարվածին[89]։ Ջալալ էդ Դինը հաղթեց և գրավեց

---

82 *Juvaini*, II, էջ 428, Իբն ալ Ասիր, էջ 321—322։

83 *ан-Насави*, с. 160—161.

84 Նույն տեղում, էջ 161—163։

85 Նույն տեղում, էջ 164։

86 Նույն տեղում, էջ 167։

87 *Juvaini*, II, էջ 430։ Իբն ալ Ասիր, էջ 323։

88 *Juvaini*, II, էջ 430—431։

89 *Juvaini*, II, էջ 431—432, Իբն ալ Ասիր, էջ 323—324, *ан-Насави*, с. 167—168.

Տփղիսը տեղի մահմեդականների օժանդակությամբ[90]։ Քաղաքը կողոպտվեց, բնակչությունը սրի քաշվեց։ Առանձնապես տուժեցին վրացիները, հայերն ու հրեաները[91]։ Տփղիսի կառավարումը Ջալալ էդ Դինը հանձնեց իր վեզիր Շարաֆ ալ Մուլքին, որը շարունակեց շրջակա երկրամասերի ավերումը[92]։ Հիջրի 623 թ. (1226 թ.)ջումադա Բ ամսին (30 մայիս—27 հունիս) խորեզմշահը լուր ստացավ, որ իր նախիր (փոխանորդ) Բարախ Հաջիբը Քերմանում ապստամբել է[93]։ 17 օրվա ընթացքում Տփղիսից նա հասավ այնտեղ, սակայն չկարողացավ ապստամբին հնազանդեցնել և օգոստոսի վերջերին-սեպտեմբերերին[94] վերադարձավ Տփղիս[95], այնտեղից էլ սկսեց ասպատակ սփռել տարբեր կողմերի վրա[96]։ Նա արշավեց Անի ու պաշարեց այն, իսկ զորքի մի մասն ուղարկեց Կարս[97]։ Խորեզմշահի վերոհիշյալ քաղաքները գրավելու փորձերը մնացին ապարդյուն, քանզի տեղի բնակչությունը համառորեն պաշտպանվում էր և չէր հանձնվում։ Ջալալ էդ Դինը չկարողանալով հասնել իր նպատակին, հոկտեմբեր ամսին պաշարող զորքեր թողնելով, վերադարձավ Տփղիս ու արշավանքի մեկնեց դեպի Աբխազիա։ 10 օր շարունակ նա կողոպտեց. հրկիզեց նշված երկրամասը և վերադարձավ Տփղիս[98]։ Ապա նա արշավեց Խլաթի վրա։ 1226 թ. նոյեմբերի 8-ից մինչև դեկտեմբերի 14-ը խորեզմշահը համառ մարտերով փորձեց գրավել քաղաքը, սակայն Խլաթի բնակ-

---

90 «Վրաց ժամանակագրություն», էջ 64, Կիրակոս Գանձակեցի, էջ 226։

91 Կիրակոս Գանձակեցի, էջ 226, Ժամանակագրության տեսան Միխայելի Ասորու պատրիարքի, Յերուսաղեմ, 1871, էջ 523, «Վրաց ժամանակագրություն», էջ 64—65, Իբն ալ Ասիր, էջ 324։

92 Juvaini, II, էջ 432, ан-Насави, с. 169; «Վրաց ժամանակագրություն», էջ 66։

93 Juvaini, II, էջ 433, Իբն ալ Ասիր, էջ 326, ан-Насави, с. 168.

94 Իբն ալ Ասիր, էջ 328։

95 Նույն տեղում, էջ 327։

96 ан-Насави, с. 171.

97 Իբն ալ Ասիր, էջ 328։

98 Նույն տեղում, էջ 328—329։

շությունը հերոսաբար պաշտպանվեց, և Ջալալ էդ Դինը ստիպված եղավ ձեռնունայն հեռանալ այնտեղից[99]։ Նա արշավեց Ատրպատական և ջախջախեց Իվայի թուրքմեններին, որոնք իր բացակայությանը մտել էին նշված երկրամասն ու սպառնում էին Թավրիզին[100]։ Ապա արշավեց խամայիլական աղանդավորների դեմ, որոնց ֆիդայիները Գանձակում սպանել էին Ուր-խանին[101]։

Այս ժամանակամիջոցում, երբ Ջալալ էդ Դինը բացակայում էր Անդրկովկասից, հայ-վրացական զորքերը 1227 թ. մարտին հարձակվեցին Տփղիսի վրա և գրավեցին այն[102]։ Իսկ խաղբակյան Պռոշ իշխանը մտավ Դվին[103]։ Սակայն երկու դեպքում էլ շուտով հայ-վրացական զորքերը ստիպված էին թողնել դրանք, քանզի Ջալալ էդ Դինը մեծ զորքով վերադառնում էր Տփղիս[104]։

1227—1228 թվականներին Գանձակի ուղղությամբ բազմաթիվ հարձակումներ գործեց Վահրամ Գագեցին, մեծ անհանգստություն պատճառելով խորեզմցիներին[105]։ 1227 թ. գարնանը հայ-վրացական զորքերը պաշարեցին Շարին ու Կապաղակը, և միայն Ջալալ էդ Դինի Գանձակ վերադարձը ստիպեց նրանց հեռանալ այնտեղից[106]։ Սակայն այդ բոլորը ինչպես երևում է, լրջորեն չեն անհանգստացրել խորեզմշահին, որը Մուղան վերադառնալուց հետո երկրորդ անգամ շարժվեց Խլաթի վրա։ Այս անգամ նա չպաշարեց քաղաքը, այլ բավարարվեց Մշո դաշտը, Տոզատափը, Դուքաղը, Խարբերդը և շրջակա գավառներն ասպատակելով,

---

99 Նույն տեղում, էջ 329—330։ Աբուլ-Ֆիդան նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Խլաթի երկու պաշարում է նշում (Արաբական աղբյուրները, էջ 230—231)։

100 Իբն ալ Ասիր, էջ 330—331, ан-Насави, с. 172.

101 ан-Насави, с. 178—179; Կիրակոս Գանձակեցի, էջ 226—227։

102 ан-Насави, с. 172; Իբն ալ Ասիր, էջ 333։

103 Մխիթար Այրիվանեցի, էջ 66։

104 Իբն ալ-Ասիր, էջ 334, ан-Насави, с. 193.

105 ан-Насави, с. 226.

106 Նույն տեղում, էջ 193։

ապա վերահաս ձմռան պատճառով այնտեղից հեռացավ Ատրպատական[107]։

1228 թ. օգոստոսի 25-ին Իսպահանի մոտ Ջալալ էդ Դինը պարտության մատնեց մոնղոլական զորքերին[108]։

1229 թ. գարնանը հայ-վրացական զինական ուժերը Բատտախ լճի մոտ գիշերով հարձակվեցին և կոտորեցին Կոչ-Աբա Դյոկ-խանի հրամանատարության տակ գտնվող խորեզմցիների զորքը, որը մինչև այդ գրավել ու կողոպտել էր Լոռին[109]։ Սակայն խորեզմշահի հիմնական ուժերի և հայ-վրացական (նաև սրանց միացած հարևան երկրների) զորքերի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Մինդորի կոչված վայրում[110]։ Շնորհիվ այն բանի, որ ճակատամարտի սկզբում Ջալալ էդ Դինն իր կողմը գրավեց զվշաղական 20000-ոց բանակը, կարողացավ մարտի ելքը որոշել իր օգտին[111]։

Մինդորիի ճակատամարտից հետո խորեզմշահը շարժվեց դեպի Լոռի և ազատեց այնտեղ գերության մեջ գտնվող յուրայիններին։ Ապա առաջ ընթացավ դեպի Վահրամ Գագեցու տիրույթը։ Նախ գրավեց Շաքքան բերդը, այնուհետև՝ Ալիաբադ ամրոցը։ Դրանից հետո նա արշավեց դեպի Գադ և Գավազին ամրոցները, որտեղ հանդիպեց համառ դիմադրության։ Երկար ամիս պաշարելուց հետո նա մեծ գումարներ ստանալով հեռացավ այնտեղից[112]։

Դրանից հետո, 1229 թ. ամռանը, Ջալալ էդ Դինը ձեռնարկեց երրորդ արշավանքը դեպի Խլաթ։ Քաղաքը պա-

---

107 Իբն ալ Ասիր, էջ 336—337, Juvaini, II, էջ 435—436, ан-Насави, с. 216—217; Սամվել Անեցի, էջ 149, Արաբական աղբյուրները, էջ 231, Ջալալ էդ Դինի Հայաստան և Վրաստան կատարած արշավանքները, էջ 132։

108 ан-Насави, с. 193.

109 Նույն տեղում, էջ 224։

110 Juvaini, II, էջ 439, Рашид ад-Дин, II, с. 28; ан-Насави, с. 224—225. Վրաց ժամանակագիրը ճակատամարտը նշում է Բոլնիսի մոտ («Վրաց ժամանակագրություն», էջ 70)։

111 Juvaini, II, էջ 438—439, «Վրաց ժամանակագրություն», էջ 70, ан-Насави, с. 224—225; Рашид ад-Дин, II, с.28.

112 ан-Насави, с. 224—226.

շարվեց և, ըստ Ջուվեյնիի, գրավվեց 10 ամսվա, իսկ ըստ Իբն ալ Ասիրի՝ 8-ամսյա համառ պայքարից հետո[113]։

Վերոհիշյալ դեպքերը ծայրաստիճան սրեցին հակասությունները մի կողմից խլաթի տեր Մելիք Աշրաֆի ու Իկոնիայի սուլթան Քեյ-Կուբադի և մյուս կողմից Ջալալ էդ Դինի միջև։ Ի վերջո, 1230 թ. օգոստոսի 13-ին, Յասի Չիմանում հակառակորդ կողմերի միջև տեղի ունեցած ճակատամարտն ավարտվեց Խորեզմշահի պարտությամբ[114]։ Դրանից հետո վերջինս դնաց խլաթ, ապա՝ Խոյ, որտեղ հասու եղավ Զարմաղանի արշավանքի մասին[115]։

Ջալալ էդ Դինի բազմամյա ասպատակությունները Անդրկովկասի համար ծանր հետևանքներ ունեցան։ Նրանք ջլատեցին և թուլացրին տեղական ուժերը։ Կ. Մարքսի՝ Ջալալ էդ Դինի մղած կռիվներին տված այն բնութագիրը, թե «այդ մարտերում մոնղոլների օգտին Ասիայում ոչնչանում էին մահմեդականների գլխավոր ուժերը»[116], կարելի է վերաբերել նաև Հայաստանին ու Անդրկովկասին։ Մեծ ավերածության ենթարկվեց երկրամասը, թուլացան նրա տնտեսական և ռազմական կարողությունները։ Դրանք վատ անդրադարձան նաև երկրի սոցիալական տեղաշարժերի վրա[117] և որոշ չափով պայմանավորեցին մոնղոլներին ցույց տված թույլ դիմադրությունը։

Մոնղոլիայում, ուր ուշի ուշով հետևում էին այդ անցքերին, լավ էին հասկանում, որ Առաջավոր Ասիան նվաճելու ճանապարհին գլխավոր խոչընդոտը Խորեզմի պետու-

---

113 *Juvaini*, II, էջ 443—444, Իբն ալ Ասիր, էջ 338—339։

114 Իբն ալ Ասիր, էջ 339—340, *ан-Насави*, с. 256—257; *Juvaini*, II, էջ 450—451։

115 *Juvaini*, II, էջ 451—452, Իբն ալ Ասիր, էջ 340, *Рашид ад-Дин*, II, с. 30.

116 *К. Маркс.* От возникновения хорезмского государства до появления в Малой Азии турок-османов.—Архив Маркса и Энгельса, т. V, с. 222.

117 *Տե՛ս* Հ. Գ. Մարգարյան, *Ջալալ էդ Դինի Հայաստան և Վրաստան հատարած արշավանքների պատմության շուրջ*, էջ 135։

թյունն է։ Ուստի առաջին հերթին անհրաժեշտ էր հաղթահարել այդ արգելքը։ Դեռևս Չինգիզ խանի օրոք մոնղոլներն այդ ուղղությամբ որոշակի բայլեր էին կատարել[118]։ Այդ նպատակով էր, որ նրանք 1227 թ. մեծ զորք ուղարկեցին դեպի Իրան[119]։ Սակայն 1228 թ. օգոստոսի 25-ին, ինչպես արդեն նշվել է, Իսպահանի մոտ Ջալալ էդ Դինը պարտության մատնեց մոնղոլական բանակը։

1229 թ. իշխանության գլուխ անցնելուց հետո Ուգեդեյը (1229——1241 թթ.), համոզվելով, որ առկա ուժերով ոչնչի չի հասնի, 1230 թ. Ջարմաղանի գլխավորությամբ մի նոր բանակ ուղարկեց Ջալալ էդ Դինի դեմ[120]։

Ջարմաղանի Իրան մտնելուց հետո (1230 թ.) Ջալալ էդ Դինը լուր ուղարկեց Սիրիայի ու Ռումի սուլթաններին և տեղեկացրեց մոնղոլական նոր ու հզոր բանակի գալստյան մասին[121]։ Ապա նա փախավ Բիշքին, Առան, Մուղանի դաշտավայր։ Մոնղոլ զորահրամանատարը զորքեր ուղարկեց սուլթանին հետապնդելու համար, իսկ վերջինս, լսելով այդ մասին, շարժվեց դեպի Կապան[122]։

Մուհամմադ ան Նասավին նշում է, թե մոնղոլներն ինչ ավերածություններ էին գործել Խոյում։ Այդտեղ հավաքված շատ փախստականներ Հայաստանի և Ատրպատականի քաղաքներից էին և հետացան, Բերկրիի լեռները[123]։

Մոնղոլները Խորեզմշահի ճամբարը լքված գտնելով վերադարձան[124]։ Իսկ Ջալալ էդ Դինը 1230/31 թ. ձմեռն անցկացրեց Ուրմին և Ուշնույի վայրերում։ Հաջորդ տարում

---

118 *С. А. Козин.* Сокровенное сказание, I, с. 189—190.

119 *ан-Насави*, с. 181—186.

120 *Juvaini*, I, p. 190; *Хондемир*, с. 35; *R. Grousset*, L'Empire Mongol, p. 228.

121 *Juvaini*, II, p. 452; *Рашид ад-Дин*, II, с. 30.

122 *Juvaini*, II, p. 453; *Рашид ад-Дин*, II, с. 30.

123 *И. П. Петрушевский.* Новый персидский источник по истории монгольского нашествия.—Вопросы истории, 1946, И № 11—12, с. 124.

124 *Juvaini*, II, էջ 453։

Զարմաղանը Նայմասին և մի քանի ուրիշ էմիրների ուղարկեց Ջալալ էդ Դինին հետապնդելու[125]։ Վերջինս Ատրպատականից հեռացավ խլաթ[126], հետո Ամիդ և սպանվեց այդտեղ 1231 թ. օգոստոսի կեսերին[127]։

Իբն ալ Ասիրի վկայության համաձայն՝ մոնղոլները կողոպտեցին Ամիդի, Արծնի ու Մայափարկին-Տիգրանակերտի շրջակայքը, ապա գնացին Սղերդ, որի բնակչությունը, սակայն, համառ դիմադրություն ցույց տվեց նրանց[128]։ Տեսնելով, որ չեն կարողանում ուժով գրավել Սղերդը, մոնղոլները դիմեցին խորամանկության. Իբաշխավորեցին տեղական բնակչության ապահովությունը։ Ապա անարգել խուժեցին քաղաք, որի քաշեցին բնակչության մեծ մասին[129]։ Սղերդի պաշտպանների հերոսական պայքարը տևել է 5 օր։ Նրանց տված զոհերի թիվն, ըստ Իբն ալ-Ասիրի, հասնում էր 15000 մարդու[130]։ Դրանից հետո մոնղոլները շարժվեցին Թանզա, որի բնակչությունն էլ արժանացավ նույն ճակատագրին, ինչ որ Սղերդինը[131]։ Ապա նրանք անցան Կուրայշիների կիրճը, կոտորեցին տեղի համանուն ցեղի քրդերին, որոնք համառ դիմադրություն էին ցույց տվել և զգալի կորուստներ պատճառել հակառակորդին։ Ի վերջո մոնղոլները հեռացան այնտեղից առանց իրենց նպատակին հասնելու[132]։ Այնուհետև նրանք ասպատակեցին դեպի Մարդին, Մծբին, Սինջար, Խարբուր, Արբաան և կողոպտելով նշված վայրերը նա դարձան Ամիդ[133]։

Անանուն Եդեսացին, նկարագրելով այս անցքերը, վկայում է, որ մոնղոլները, Ջալալ էդ Դինին հալածելուց հե-

---

125 *Рашид ад-Дин*, II, с. 30.

126 Իբն ալ Ասիր, էջ 343։

127 *ан-Насави*, с. 295—296; Տե՛ս նաև *R. Grousset*, L'Empire des steppes, p. 326.

128 Իբն ալ Ասիր, էջ 344։

129 Նույն տեղում։

130 Նույն տեղում։

131 Նույն տեղում։

132 Նույն տեղում, էջ 344—345։

133 Նույն տեղում, էջ 345։

տո, համոզված լինելով, որ Խառանի, Ամիդի, Մարդինի, Մծբինի, Մայաֆարկինի ու Մոսուլի տերերը ի վիճակի չեն դիմադրելու իրենց, նույն տարում (1231 թ.—Հ. Ս.) բանակեցին Մայաֆարկինի մոտ և սկսեցին թափանցել վերոհիշյալ քաղաքների շրջանները։ Սրի քաշելով բնակչությանը և այլ ոճիրներ գործելով, նրանք մեծ ավարով ետ դարձան այնտեղից[134]։ Իբն ալ Ասիրը վկայում է այսքանից հետո Բաղդեշի հայ բնակչության՝ մոնղոլներին ցույց տված դիմադրության մասին[135]։ Մոնղոլների դեմ հնարավոր էր պայքարել։ Այդ բանը հաստատում է Իբն ալ Ասիրը՝ հաղորդելով, թե Բաղդեշի բնակիչներից մեկը պատմել է, որ եթե ունենային թեկուզ հինգհարյուր ձիավոր, մոնղոլներից ոչ մեկը չէր փրկվի, քանզի վայրը լեռնային էր, ճանապարհն էլ՝ նեղ[136]։

Իբն ալ Ասիրի ասելով թշնամուն համառ դիմադրություն է ցույց տվել նաև Բերկրիի բնակչությունը։ Մոնղոլները մեծ ճիգերի գնով այնուամենայնիվ գրավեցին քաղաքը և կոտորեցին նրա բնակչությանը[137]։ Բերկրիից մոնղոլները շարժվեցին դեպի Արճեշ[138], որի բնակչությունն էլ արժանացավ այն ճակատագրին, ինչ որ Բերկրիինը[139]։ Այդ իրադարձությունները տեղի են ունեցել 1231 թ. աշնանը[140]։

Վրաց ժամանակագիրը, անդրադառնալով այս անցքերին, իր հերթին տեղեկացնում է, որ Ջալալ էդ Դինի մահից հետո մոնղոլները ավերեցին Խլաթն ու Վաղարշակերտը[141]։

1231 թ. հիշատակարաններից մեկում կարդում ենք, որ մոնղոլները փախուստի մատնելով Պարսկաց թագավորին (նկատի ունի Ջալալ էդ Դինին), ավերեցին Պարսկաստանը

---

134 Անանուն Եղեսացի, էջ 185։

135 Իբն ալ Ասիր, էջ 345։

136 Նույն տեղում։

137 Նույն տեղում։

138 Նույն տեղում։

139 Նույն տեղում, էջ 345—346։

140 Նույն տեղում, էջ 346։

141 «Վրաց ժամանակագրություն», էջ 72։

և գնային մինչ Եդեսիա ու Սամոսատ և կոտորեցին նրանց բնակչության մի մասը[142]։

Աբուլ-Ֆիդայի տեղեկության համաձայն Ջալալ էդ Դինին պաշտության մատնելուց հետո մոնղոլները մարտերով առաջացան մինչև Եփրատ, ապա արշավեցին Դիարբեքիր և Ջազիրա, ավեր ու սպանդ գործելով[143]։

Այնուհետև նրանք վերադարձան Ատրպատական, որի բնակչությունը հնազանդություն հայտնեց՝ տալով մոնղոլների պահանջած գրանը[144]։ Ապա մոնղոլներն եկան և հաստատվեցին Մուղանի բարեբեր դաշտավայրում[145]։ 1232 թ. վաղ գարնանը նրանք շարժվեցին դեպի հյուսիս-արևմուտք և պաշարեցին Գանձակը։ Կիրակոս Գանձակեցու հաղորդումից պարզ է դառնում, որ քաղաքի գրավումը մոնղոլների համար դյուրին չի եղել, նրա բնակչությունը դիմադրություն է ցույց տվել թշնամուն։ Սակայն գանձակեցիները, համոզվելով, որ քաղաքը փաստորեն գրավվել է թշնամու կողմից և փրկության որևէ ելք այլևս չկա, հրդեհեցին իրենց տունը, որպեսզի ունեցվածքը հակառակորդին ավար չմնա։ Այդ հանգամանքն ավելի բորբոքեց մոնղոլներին, որոնք թափանցելով քաղաք ողջ բնակչությանը սրի քաշեցին չխնայելով անգամ կանանց ու երեխաներին[146]։ Պատմիչը շարունակում է. «Եւ ոչ ոք վերծաւ ի նոցանէ, բայց սակաւ գունդ մի զօրու՝ վառեալք զինու և ամենայն պատրաստութեամբ, պատուեցին զմի կողմ պարսպին ի դիշերի, և գնային փախստական. և այլ սակաւ ինչ սինլքորք, զորս պահեցին և խոշտանգեցին՝ ցուցանել զգանձսն ուր պահեալ էին։ Ապա զոմանս սպանին, և զկէսն գերի վարեցին և ինքեանք բրեցին զայրեալ տունսն և հանին զորս գտին թաքուցեալ։ Եւ զայս արարեալ զաւուրս բազումս՝ ի բաց գնային»[147]։

---

142 Գ. Հովսեփյան, Յիշատակարանք, Ա, էջ 878, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 175։

143 Տե՛ս Արաբական աղբյուրները, էջ 233։

144 Իբն ալ Ասիր, էջ 346, «Վրաց ժամանակագրություն», էջ 72։

145 Կիրակոս Գանձակեցի, էջ 234—235։

146 Նույն տեղում, էջ 236։

147 Նույն տեղում, էջ 236—237։

Գանձակը մոնղոլները գրավեցին 1232 թ. վաղ գարնանը[148]։

Դրանից հետո մոնղոլները շարունակեցին իրենց ասպատակությունները այլ վայրերում։ Համաձայն Անանուն Եղեսացու վկայության, նրանք նույն 1232 թ. դարձյալ, արշավեցին այն վայրերը, որտեղ եղել էին մեկ տարի առաջ։ Խոսքը վերաբերում է Խառանին, Ամիդին, Մարդինին, Մըծբինին, Մայափարկինին և Մոսուլին։ Մոնղոլները գրավեցին Մծբինը, ապա Սղերդը և մեծ ավարով հեռացան[149]։

Ամփոփելով պետք է նշենք, որ Ջարմաղանի այս արշավանքը ևս լիովին արդարացրեց մոնղոլների ակնկալիքները. ջախջախվեց ու վերացվեց Խորեզմի սուլթան Ջալալ էդ Դին, էլ ավելի թուլացան Հարձակման ենթակա երկրները և մասնավորապես հայերի ուժերը։ Չնայած առանձին վայրերում թշնամուն ցույց տրվեց համառ դիմադրություն, այսուհանդերձ, դա չէր կարող կասեցնել նրա հաջողությունների ընթացքը։ Մոնղոլներն Անդրկովկասում նույնիսկ չհանդիպեցին այնպիսի դիմադրության, ինչպես 10 տարի առաջ։ Առանում սկիզբ դրվեց մոնղոլական տիրապետությանը։ Անդրկովկասը դառնում էր այնպիսի վիճակում, երբ օրակարգի հարց էր դարձել նրա վերջնական նվաճումն ու թաթար-մոնղոլների տիրապետության հաստատումը։

---

148 ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 183, Գ. Հովսեփյան, Հիշատակարան, Ա, էջ 883, Մանր ժամանակագրություններ, Ա, էջ 392։

Որոշ պատմաբաններ՝ Ա. Գ. Գալստյանը Զ. Մ. Բունիաթովը, Յու. Մ. Սիխարուլիձեն և այլք, շարունակելով հենվել Վարդան Արևելցու, մի հիշատակության վրա (Վարդան Արևելցի, էջ 144) պնդում են, թե Գանձակը գրավվել է 1235 թ. (տե՛ս А. Г. Галстян. Завоевание Армении, с. 166—170; З. М. Буниятов. Государство атабеков Азербайджана (1136—1225 годы). Баку, 1978, с. 136—137; Ю. М. Сихарулидзе, նշվ. աշխ., էջ 21)։ Սակայն, դեռևս Հ. Հ. Մանանդյանը և Գ. Հովսեփյանը իրավացիորեն նշել են, որ Վարդան Արևելցու տեղեկությունը թյուրիմացություն է, և Գանձակը մոնղոլների կողմից գրավվել է 1232 թ. (Հ. Հ. Մանանդյան, Գ, էջ 463—464, Գ. Հովսեփյան, խաղբակյանք, էջ 89)։

149 Անանուն Եղեսացի, էջ 185։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԸ ԹԱԹԱՐ-ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԼՄԻ ԴԵՄ ԿՈՒՍԱԿԱԼՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1236—1256 ԹԹ.)

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԹԱԹԱՐ-ՄՈՆՂՈԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

Թեև Ջեբեյի ու Սուբեդեյի, ինչպես նաև Ջարմաղանի արշավանքները Անդրկովկասը նվաճելու նպատակներ չէին հետապնդում, այնուամենայնիվ, դրանք կարևոր էտապ էին այդ ճանապարհին և կարելի է ասել՝ դրա նախապատրաստումն ու նախերգանքն էին։ Իսկ Անդրկովկասն այդ ընթացքում (1220—1235 թթ.) լուրջ հարվածներ էր ստացել ոչ միայն մոնղոլներից, այլև Ջալալ էդ Դինի 7-ամյա արշավանքներից։ Թուլացել էր վրացական թագավորության տնտեսական և ռազմական հզորությունը, սրվել ու խորացել էին միջֆեոդալական ներդասային և միջդասակարգային հակասությունները։ Վրացական թագավորության կառավարումն անցել էր Ռուսուդան թագուհու (1222—1245 թթ.) ձեռքը, որն ի վիճակի չէր համախմբել երկրի ավատական ուժերը։ Դեռ ավելին, գահի օրինական ժառանգին՝ Գեորգի Լաշայի որդի Դավթին, մեկուսացնելով և իր որդի Դավթին 1236 թ. թագավոր օծելով նա խորացրեց միջավատական հակասությունները։

Երևոյթ նշանակությունը զգալիորեն կորցրել էին թագավորության կարևոր պաշտոնները՝ աթաբեկությունն ու մանդատուրթ-ուխուցեսությունը, որոնք դեռևս գանվում էին Զաքարյանների ձեռքում։ Եվ հասկանալի է, որ մոնղոլական

նվաճողական արշավանքների նախօրյակին երկրամասը թուլացած էր, այն պատրաստ չէր ահեղ թշնամուն լուրջ դիմադրություն ցույց տալու։ Ինչպես ժամանակի պատմիչ Կիրակոս Գանձակեցին է նշում, «...ոչ էին կարող զդէմ ունել անհնարին բքոյն, վասն այսորիկ անձնապահ եղեն ամենքեան՝ գայթակղեալք յամրոցս, ուր և կարացին»[1]։ Մինչդեռ միասնական ճակատով պայքարը կարող էր լինել թաթարմոնղոլ նվաճողների դեմ հայթանակի միակ գրավականը։ Դա լավ էր հասկացել Պլանո Կարպինին. «...եթե քրիստոնյաները,— գրում է նա,— ուզում են իրենց կյանքը, երկիրն ու կրոնն ապահովել, ապա հարկ է, որ նրանց թագավորները, իշխանները, բարոնները և շրջանների ղեկավարները միավորվեն և միահամուռ նրանց (իմա՝ մոնղոլների—Հ. Ս.) դեմ մարտի դուրս գան»[2]։

1235 թ. Ուգեդեյի կողմից հրավիրված համամոնղոլական ղուռուլթայը որոշեց արագացնել դեռևս նվաճված տարածքներին տիրելու միջոցառումները։ Խոսքը վերաբերում էր Ռուսիային և առհասարակ ողջ Արևելյան Եվրոպային, ինչպես նաև՝ Անդրկովկասին։ Մեծ խանի հրամանով Զարմագանին օգնության ուղարկվեցին Օգոտուրն ու Մունկեաուն[3]։

Ղուռուլթայի որոշման համաձայն, 1236 թ. ամռանը Զարմագանի բանակը Մուղանի կողմից ձեռնամուխ եղավ Հայաստանի և Վրաստանի նվաճման գործին։ Մոնղոլ զորավարները վիճակահանությամբ միմյանց միջև տարբեր իշխանությունները բաժանելով[4], սկսեցին իրենց ավերիչ արշավանքները։

---

1 Կիրակոս Գանձակեցի, էջ 238։ Հմմտ. նաև «Վրաց ժամանակագրություն», էջ 74։

2 «Путешествия в восточные страны Плано Карпини и Рубрука», с. 61.

3 *С. А. Козин.* Сокровенное сказание, I, с. 191.

4 Կիրակոս Գանձակեցի, էջ 237—238։

Ըստ Կիրակոսի՝ դեռևս այն ժամանակ, երբ մոնղոլները բանակել էին Մուղանում, Մոլար նոյինը սակավաթիվ մի զորաջոկատ ուղարկեց Վահրամ Գագեցու տիրույթի ծայր արևելքում գտնվող առևտրատնտեսական և ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող Շամքոր քաղաքը գրավելու համար[5]։ Շամքորի բնակչությունը, օգնության խնդրանքով դիմեց Վահրամ Գագեցուն և նրա որդի Աղբուղային՝ հայտնելով, որ մոնղոլները փոքրաթիվ են։ Սակայն Վահրամ Գագեցին չընդառաջեց շամքորցիների խնդրանքին և որդուն էլ խորհուրդ տվեց նույնպես վարվել, քանզի տեղեկացել էր, որ մոնղոլները բազմաթիվ են[6]։ Գազի իշխանը քաղաքացիներին էլ կարգադրեց չմասնակցել[7]։ Գրականության մեջ Վահրամ Գագեցու այս քայլը որակվել է որպես դավաճանություն[8]։ Սակայն, դա ոչ թե դավաճանություն էր, այլ ինչպես Շամքորը, այնպես էլ իր երկիրը (Գազը) մոնղոլների ավերածություններից զերծ պահելու նպատակ հետապնդող քայլ[9]։ Վահրամ Գագեցին այդպես վարվեց քանզի տեղեկացել էր, որ Ռուսուդան թագուհին մոնղոլների գալուստն իմանալով, լքել էր Տփղիսը և փախել Քութայիս[10]։ Հետևաբար միասնական պայքարի մասին խոսք լինել չէր կարող, իսկ միայն իր ուժերով Վահրամը ի վիճակի չէր պայքարել մոնղոլների դեմ։ Հետևաբար դիմադրությունն, ըստ նրա, անիմաստ էր և տեղիք էր տալու ավերածությունների ու կոտորածների։ Կիրակոսը վկայում է, որ մոնղոլների թիվը գնալով ավելանում էր. «Իսկ զորք

---

5 Նույն տեղում, էջ 241—242։

6 Նույն տեղում, էջ 242։

7 Նույն տեղում։

8 История Азербайджана. Баку, 1958, т. I, с. 177—178; История Грузии, I, с. 227, 228.

9 Ս. Շանազարյան, Վահրամյանների իշխանությունը մոնղոլների տիրապետության օրոք, էջ 30—31։

10 «Վրաց ժամանակագրություն», էջ 73։

Հարկ է նշել, որ Ռուսուդան թագուհու փախուստն Արևմտյան Վրաստան և միասնական պայքարի բացակայությունը Յու. Մ. Սիխարուլիձեն բացատրում է թագուհու կողմից ընդունված հատուկ տակտիկայով. յու-

այլազգեացն օր ըստ օրէ առաւելուին ի թիւն, մինչև եկն գլխաւորն իւրեանց, զոր Մոլար կոչէին....»[11]։

Չնայած Վահրամ իշխանի որոշմանը, Շամքորի բնակչությունը այդուհանդերձ որոշեց պայքարի ելնել թշնամու դեմ, կռվել ու զոհվել հանուն ազատության։ Մոլար նոյինի հրամանով մոնղոլները քաղաքի պարսպի շուրջը գտնվող խրամատները լցրին փայտով ու ծղոտով, որպեսզի հեշտությամբ ելնեն պարիսպների վրա։ Սակայն շամքորցիները դիշերը հրդեհեցին խրամատներում լցված փայտն ու ծղոտը։ Հաջորդ առավոտյան Մոլար նոյինը այդ բանին ականատես լինելով, հրամայեց փոսը հողով լցնել։ Այդպես էլ արեցին և մոնղոլներին հաջողվեց գրավել քաղաքը[12], որից հետո հարձակվեցին Վահրամ Գագեցու տիրույթի մյուս բերդերի ու ամրոցների վրա։ Կիրակոսը հաղորդում է. «եկին ամենայն ազխիւն իւրեանց ի Տաւուշ, ի Կածարեթ, և ի Նոր բերդն, և ի Գագ, և որ շուրջ գնոքօք, և ի նեղ արկեալ պաշարեցին զնոսա»[13]։ Նրանք գրավեցին Տերունականը, Երդեվանքը, Մածնաբերդը[14], Գավազինը, Գագի նշանավոր ամրոցը[15]։ Գարդման, Ջարեր և Գետաբակ գնաց Ղատաղա նոյինը[16]։ Անդրադառնալով այս դեպքերին, Գրիգոր պատմիչը գրում է. «առին զառաջինն զՇամքոր ... առին զՈւդամ,

---

բարձրյուր ամրոց, քաղաք կամ էլ բնակավայր ինքն առանձին պետք է պայքարեր թշնամու դեմ։ Ստեղծված պայմաններում, ըստ հեղինակի, այլ ելք չկար (Ю. М. Сахарулидзе, նշվ. աշխ., էջ 22)։ Բայց ռազմական գործողությունների հետագա ընթացքը չի հաստատում հետազոտողի ենթադրությունը։ Իրականում միջֆեոդալական հակասությունների և Ջալալ էդ Դինի յոթնամյա արշավանքների ծանր հետևանքներով հնարավոր չէր և երկիրն էլ պատրաստ չէր միասնական պայքարի։ Բուսուղանին դեմ էին շատ ֆեոդալներ։ Ստեղծված պայմաններում փաստորեն երկիրն անպատրաստ էր ընդդիմակայելու մոնղոլներին, և ամեն մեկն ապավինել էր իր ճակատագրին։

11 Կիրակոս Գանձակեցի, էջ 242։

12 Նույն տեղում։

13 Նույն տեղում,

14 Նույն տեղում։

15 Վարդան Արևելցի, էջ 145։

16 Կիրակոս Գանձակեցի, էջ 243։

զՔարհերթ, զՏերևեն (զՏերունական) զմեծ զղեկն թագաւորանիստ. զԳարդման, զՆրգեանքն, զՄածնաբերդ, ...զՏաւուշ»[17], Վարդանի վկայութեան համաձայն, մոնղոլները գրաւեցին և «...այլ ամրոցս և զգեօղս և զագարակս. ամենեքեան տուեալ լինէին ի ձեռս նոցա...»[18]։ Վահրամ Գագեցին իր երդի Աղբուղայի հետ միասին Գարդմանից հեռացել և գնացել էր Քութայիս[19]։

Երբ մոնղոլներն սկսել էին իրենց հարձակումները, այդ ժամանակ Տավուշ բերդի հարավային կողմում՝ Լորուտ գյուղի դիմաց, Վանական վարդապետն էր իր աշակերտների հետ մնում քարայրում ու մի եկեղեցում։ Մոնղոլական արշավանքների պատճառով շրջակա գյուղերից մեծ թանակութեամբ մարդիկ ապաստանեցին այդ վայրում։ Մոնղոլները շուտով պաշարեցին այս ապաստարանը։ Ամառային տապի, ջրի խիստ կարիքի պատճառով, տեսնելով, որ փրկության ելք չկա, Վանական վարդապետը Մարկոս և Սոսթենես քահանաների հետ միասին իջան թշնամու մոտ՝ բանակցելու։ Վերջիններս հարց ու փորձ արեցին Վահրամ Գագեցու, նրա բերդի մասին և խոսք տվեցին չվնասել բնակչությանը։ Վանականն իր աշակերտների հետ, որոնց թվում նաև Կիրակոսն էր, դեռևս մնացին։ Վարդապետին հետագայում հայերը փրկագնով ազատեցին, իսկ Կիրակոսին հաջողվեց դիշերով փախչել և վերադառնալ թշնամու կողմից մինչ այդ ավերված ու հրդեհված Գնարիկի վանքը[20]։

Մոնղոլ զորավարներից Չաղաթայ նոյինին վիճակահանությամբ բաժին էր ընկել Լոռեն ամրոցն ու նրա շուրջն ընկած գավառները։ Լսելով Լոռեն քաղաքի ամրության ու հարստության մասին, մոնղոլ զորավարն ընտիր զորամասերով ու բազմաթիվ մարտական մեքենաներով գալիս ու պա-

---

17 Գրիգոր պատմիչ, էջ 7։

18 Վարդան Արևելցի, էջ 145։

19 Նույն տեղում։ Տե՛ս նաև Կիրակոս Գանձակեցի, էջ 243, «Վրաց ժամանակագրություն», էջ 73։

20 Կիրակոս Գանձակեցի, էջ 243—252։

շարում է այն։ Լոռեում էին գտնվում Շահնշահ Զաքարյանի ընտանիքն ու գանձերը[21]։ Տեղեկանալով Զաղաթայի գալըստյան մասին երկրի մանդատուրթ-ախուցեսը նույն պատճառներով ու նպատակով, ինչ Վահրամ Գագեցին, քաղաքի կառավարման գործը հանձնելով իր աներոջ ընտանիքին հեռանում է դեպի Աճարիա[22]։

Մոնղոլները, խորտակելով պարիսպները, մտնում են քաղաք, կողոպուտի ենթարկում այն, բնակչությանը սրի քաշում, չխնայելով ո՛չ կանանց, ո՛չ երեխաներին[23]։

Լոռեից հետո Զաղաթայը գրավեց նաև շրջակա բազում ամրոցներ, այնուհետև նա տիրացավ Դմանիսին, Շամշուլդեին ու Տիղիսին[24]։

Վրաց ժամանակագիրը տեղեկացնում է, որ մոնղոլները անարգել ասպատակեցին, ավերեցին, կողոպտեցին Քարթլին, Թռեղքը, Սոմխիթը, Ջավախքը, Սամցխեն, Շավշքը, Կղարջքը, Տայքը, Կողան, Արտահանը, Անին և այլն[25], քանզի, Կիրակոս Գանձակեցու ասելով, «ոչ ոք էր, որ ընդդէմ կայր նոցա, կամ պատերազմէր ընդ նոսա»[26]։ Վրաց ժամանակագիրն իր հերթին նկարագրում է թե ինչ վայրագություններ էին գործում նվաճողները, և ինչ սարսափելի վիճակ էր տիրում ամբողջ երկրում. «...սպանվածներով լեցուն էին քաղաքներն ու գյուղերը, դաշտերը, անտառները, սարերն ու ձորերը։ Միայն ամրությունների մեջ, ուր եթե որևէ տեղ [մեկը] մնացել էր, [այն էլ]՝ կռծով լեցուն, և ողբի փոխվեցին այսկողմյան Վրաստանի բնակիչները։ Ծնողները տեսնում էին որդիներին սպանված, որդիները՝ հայրերին ու մայրերին՝ մեռած-ընկած, ուրիշները իրենց եղբայրներին,

---

21 Նույն տեղում, էջ 253։

22 «Վրաց ժամանակագրություն», էջ 73։

23 Կիրակոս Գանձակեցի, էջ 253, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 191—192։

24 Կիրակոս Գանձակեցի, էջ 253—254, Վարդան Արևելցի, էջ 144։

25 «Վրաց ժամանակագրություն», էջ 73։

26 Կիրակոս Գանձակեցի, էջ 254, նաև «Վրաց ժամանակագրություն», էջ 73։

բուլրերին, ազգակիցներին՝ գերված, նրանց կանանց, երեխաներին, ողջ հարստությունն իրենց իսկ առաջ ցաք ու ցրիվ արած։ Թաթարներն այնպիսի զարհուրանքներ արին, որ շատ վրացիք թողնում էին բերդերն ու ամրությունները և Կովկասյան լեռները փախչում»[27]։

Իվանեի որդի Ավագ Զաքարյանը, տեսնելով, որ թշնամին ողողել է երկիրը, ամրացավ Կայեն բերդում։ Շուտով դրա շուրջը հավաքվեցին գավառի բնակիչները։ Տեղեկանալով այդ մասին, Դուղատա նոյինը, որին վիճակահանությամբ բաժին էր ընկել այդ շրջանը, մեծ զորքով եկավ ու պաշարեց Կայենը[28]։ Նա Ավագի մոտ բանագնացներ ուղարկեց և առաջարկեց հանձնվել։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ մոնղոլ զորահրամանատարին հարկ է եղել պաշարված Կայեն բերդը մի քանի անգամ բանագնացներ ուղարկել նշանակում է, որ պաշարյալները մտադիր չեն եղել հանձնվել։ Թշնամին էլ ավելի սեղմեց պաշարման օղակը։ Համոզված լինելով, որ երկար չի կարող դիմանալ Ավագն իր տան վերակացու Գրիգոր Տղա Խաչենեցուն ուղարկում է Գեղարքունիքի (Սևան) լճի մոտ բանակած մոնղոլական զորքերի գլխավոր հրամանատար Զարմաղանին[29]։ Վերջինս սիրով է ընդունում Ավագի բանագնացին, որն հայտնում է նրան աթաբեկի հնազանդվելու մտադրության մասին։ Նա Դուղատա նոյինին հրամայում է դադարեցնել ռազմական գործողությունները և իր մոտ հրավիրում Ավագին[30]։ Գալով Զարմաղանի մոտ՝ Ավագը հնազանդություն հայտնեց և մնաց իր տիրույթի իշխանը։ Նա պարտավորվեց իր ուժերով մասնակցել Զարմաղանի արշավանքներին, մասնավորապես՝ գնալ Անի[31]։

Զարմաղանի՝ Ավագի նկատմամբ ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքը բացատրվում է վերջինիս վրացական ար-

---

27 «Վրաց ժամանակագրություն», էջ 74։

28 Կիրակոս Գանձակեցի, էջ 254—255, Վարդան Արևելցի, էջ 144։

29 Կիրակոս Գանձակեցի, էջ 255—256։

30 Նույն տեղում, էջ 256։

31 Նույն տեղում, էջ 256—257։

քունիքում և հայ ֆեոդալական իշխանությունների սահմաններում գրված դիրքով։ Զարմաղանին անհրաժեշտ էր առաջին հերթին Ավագին սիրաշահել, որից հետո ավելի դյուրին կլիներ հպատակեցնել մյուս հայ իշխաններին, ապա և նրանց միջոցով ազդել վրաց թագուհու վրա՝ մոնղոլ նվաճողներին ենթարկվելու[32]։ Ավագի միջոցով էր, որ հետագայում մոնղոլներին հնազանդություն հայտնեցին Շահնշահ և Վահրամ Զաքարյանները, խաչենի իշխան Հասան Ջալալը։ Այդպես վարվելով Ավագ Զաքարյանը կարողացավ ոչ միայն վերքատին տիրել իր կալվածներին, այլև պահպանել հայ և վրաց ֆեոդալների նկատմամբ իր գերիշխող դիրքը[33]։ Իրավացի չեն անշուշտ, այն հետազոտողները, որոնց համաձայն Ավագը մոնղոլներին հնազանդություն հայտնեց, երբ Վրաստանի թագուհին դեռ պատերազմական վիճակում էր[34]։ Իրականում, ինչպես տեսանք, կենտրոնական իշխանությունը ոչ միայն որևէ միջոց չէր ձեռնարկել երկիրը պաշտպանելու համար, այլև հենց ինքը երկրի թագուհին էր տվել շպայքարելու առաջին ազդանշանը։ Լքելով Տփղիսը նա ապաստանել էր Քութայիսում։ Մյուս իշխաններին, այդ թվում և աթաբեկին, ոչինչ չէր մնում, քան երկիրը ավերածությունների ու կոտորածներից փրկել, դիմելով դիվանագիտության։

Յու. Մ. Սիխարուլիձեն գտնում է, թե աթաբեկ Ավագի ենթարկվելը կապվում էր Սյունյաց էլիկում Օրբելյանի՝ մոնղոլներին հնազանդելու հետ[35]։ Իրականում այդ տարածքները մոնղոլները նվաճում էին միաժամանակ, մեկը մյուսից անկախ[36]։ Եվ Ավագի, ինչպես նաև մյուս իշխանների հնազանդվելը մոնղոլներին պետք է բացատրել նույն պատճառներով, ինչ որ Վահրամ Գագեցունը։ Այդ իսկ տեսակետից ընդունելի չէ Յու. Մ. Սիխարուլիձեի կարծիքը, որի համաձայն, Ավա-

---

32 Լ. Հ. Բաբայան, նշվ. աշխ. էջ 204։

33 Նույն տեղում։

34 История Грузии. I, с. 228; ბ. ᲗᲐᲝᲜᲣᲠᲐᲫᲔ. նշվ. աշխ. էջ 97։

35 Ю. М. Сихарулидзе, նշվ. աշխ., էջ 23։

36 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 403—404։

գը ֆեոդալական նեղ շահերից ելնելով հրաժարվեց պայքարից։ Նրա օրինակին հետևեցին մյուս իշխանները[37]։

Հարկ է հիշել, որ, ըստ աղբյուրների, իշխաններից ոմանք, ինչպես օրինակ Վահրամ Գագեցին, մեկնել էին հենց Քութայիս։ Դավաճանած իշխանը հազիվ թե համարձակվեր հայտնվել այնտեղ։ Իր հերթին, ինչպես նշվել է, Շահնշահը հեռացավ Անարիս։ Ուստի այս իշխանների բռնած դիրքը պետք է բացատրել նույն շարժառիթով, ինչ որ Ռուսուդանինը։ Արևմտյան Վրաստանն ապահով վայր էր։ Դա երևաց դեռևս մոնղոլների հետախուզական արշավանքի ժամանակ։ Թշնամին չէր կարողանում թափանցել այնտեղ նաև հետագայում՝ երկիրը նվաճելուց հետո։ Ամեն անգամ, երբ այս կամ այն գործչին անհրաժեշտ էր լինում խուսափել մոնղոլների հալածանքից, նա հեռանում էր Արևմտյան Վրաստան։

Մոլար նոյինի, Զաղաթայի ու Դուղատայի կողմից հիշյալ գործողություններից քիչ առաջ Զարմաղանն իր զորքերով հասել էր Սևանի ավազանը[38] և իրեն ենթարկել նրա շրջակայքը։

1236 թ. Զարմաղանի գլխավորությամբ մոնղոլները շարժվեցին դեպի նշանավոր Անի քաղաքը[39]։ Պետք է ասել,

---

37 Ю. М. Сихарулидзе, նշվ. աշխ., էջ 23։

38 Կիրակոս Գանձակեցի, էջ 256։

39 Մոնղոլների կողմից այս քաղաքի գրավման ժամանակի վերաբերյալ պատմագիտության մեջ տարբեր կարծիքներ են արտահայտվել։ Մ. Զամչյանը գտնում է, որ դա տեղի ունեցավ 1239 թ. (Մ. Զամչյան, նշվ. աշխ., էջ 212—213)։ Նույն կարծիքին են Ժ. Սեն-Մարտենը (նշվ. աշխ. հ. 1, էջ 384), Կ. Դ'Օսոնը (նշվ. աշխ., հ. 3, էջ 76—77), Մ. Բրոսեն (Les ruines d'Ani. SPb., 1861, p. 1[illegible]4) և Ռ. Գրուսեն (L'Empire des steppes, p. 327)։

Է. Դյուլորիեն քաղաքի գրավումը թվագրում է 1236-ով (նշվ. աշխ. հ. 1, էջ 330)։ Այդ տեսակետը բաժանել են Հ. Հ. Մանանդյանը (նշվ. աշխ., էջ 216—217), Լ. Հ. Բաբայանը (նշվ. աշխ., էջ 206)։ Անտարակույս այս հարցում իրավացի են Է. Դյուլորիեն, Հ. Հ. Մանանդյանն ու Լ. Հ. Բաբայանը, նրանց տեսակետի օգտին են խոսում սկզբնաղբյուրների մեծ մասը (Մանր ժամանակագրություններ, Ա, էջ 26, Գ. Հովսեփյան, Ցիշա-

որ դա պատահական երևույթ չէր։ Այն բխում էր մոնղոլների ռազմավարական տակտիկայից։ Մինչ խոշոր քաղաքների վրա հարձակվելը միշտ էլ մոնղոլները նախապես հարձակվում էին փոքր քաղաքների վրա, գերեվարում բնակչությանը, ապա նրանց օգտագործում պաշարողական գործողությունների համար[40]։

Անին լավ ամրացված ու ամուր պարիսպներով շրջափակված քաղաք էր։ Մոտենալով նրան, Ջարմաղանը պատգամավորներ ուղարկեց՝ առաջարկելով հանձնվել։ Սակայն Անիի հասարակ բնակիչները, իրենց վրա վերցնելով նախաձեռնությունը, կոտորեցին հակառակորդի բանագնացներին ու նախապատրաստեցին քաղաքի պաշտպանությունը[41], թեև լավ գիտեին, որ մահվան էին դատապարտված բոլոր նրանք, ովքեր չէին հնազանդվում հանձնվելու և հպատակվելու հրամանին[42]։

Տեսնելով, որ անեցիները հաստատ կերպով որոշել են առանց կռվի քաղաքը չհանձնել, Ջարմաղանը պաշարեց այն և 12-օրյա համառ մարտերից հետո գրավեց քաղաքը[43]։ Մոնղոլները անեցիներին դուրս բերեցին քաղաքից, «...բաժանեցին զնոսա յինքեանս և սուր ի վերայ եղեալ՝ կոտորեցին առհասարակ անողորմաբար՝ սակաւ կանայս և մանկունս թողեալ և սրս արուեստաւորս, զոր վարեցին ի գերութիւն»[44]։ Բնակչության հետ հաշվեհարդար տեսնելուց հետո նրանք ինչպես պատմիչն է ասում «...եղծին և ապականեցին զփառս վայելչութեան նորա»[45]։ Ծաղկուն, նշանավոր քաղաքը ողբալի մի համայնապատկեր էր բացում ականա-

---

տակարանք, Ա, էջ 905—906, 909, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 193։ Տե՛ս նաև ժամանակագրություն (XI—XVIII դդ.), էջ 260։

40 Мэн-Да бей-лу, с. 67.

41 Կիրակոս Գանձակեցի, էջ 258։

42 Мэн-Да бей-лу, с. 67.

43 Կիրակոս Գանձակեցի, էջ 258, *Simon de Saint-Quentin*, p. 59.

44 Կիրակոս Գանձակեցի, էջ 258։

45 Նույն տեղում, էջ 259։

տեսի առաջ. «Անդ էր տեսանել տեսիլ ուղորմագին. տահասարակ կատարելք ծնողքն և ծնունդք ընդ նոսին գիրգեալք ի վերայ միմեանց՝ իբրև զդերբուկս քարանց կուտեալք. քահանայք և սարկաւագունք և պաշտօնեայք եկեղեցականք, ծերք և տղայք և հասակաւ մանկունք և երիտասարդք և կուսանք շատք ...»[46]: Կանայք և աղջիկները չարաչար տանջահարության ենթարկվեցին, բռնաբարվեցին ու անարգվեցին թշնամու կողմից[47]:

Անի քաղաքը գրավելուց հետո Զաքմաղանը շարժվեց դեպի Կարս, որի բնակիչները տեղյակ լինելով անեցիներին հասած պատուհասին, ինչպես նաև գիտենալով, որ ի վիճակի չեն պաշտպանելու իրենց քաղաքը, որոշեցին հանձնվել թշնամուն[48]: Չնայած դրան մոնղոլները անողորմաբար սրի քաշեցին Կարսի բնակչությանը, կողոպտեցին քաղաքը, իսկ կենդանի մնացածներին գերության քշեցին[49]: Շարունակելով իրենց ճանապարհը մոնղոլները Ղարա բահաթուրի գլխավորությամբ հարձակվեցին Սուրբ Մարի քաղաքի վրա, գրավեցին և կողոպտեցին այն[50]:

Վիճակահանության համաձայն Սյունիքի նվաճումը պետք է իրագործեր Սալան նոյինը: Երբ վերջինս 1236 թ. իր զորքերի հետ մոտեցավ նրան, Սյունյաց էլիկում իշխանը յուրայինների հետ ամրացավ Վայոց ձորի Հրաշկաբերդ անառիկ ամրոցում[51]: Մոնղոլ զորահրամանատարը հասնելով բերդին և տեսնելով նրա ամրությունն ու անառիկությունը, պատգամավորներ առաքեց էլիկում Օրբելյանի մոտ, հնազան-

---

46 Նույն տեղում:

47 Նույն տեղում: Տե՛ս նաև Գ. Հովսեփյան, Յիշատակարանք, Ա, էջ 909:

48 Կիրակոս Գանձակեցի, էջ 260:

49 Նույն տեղում:

50 Նույն տեղում, էջ 260—261, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 191—192:

51 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 403: Գ. Մ. Գրիգորյանի կարծիքով նշված ամրոցը ներկայիս Եղեգիս և Ալայազ գյուղերի միջնամասում վեր խոյացող բլրի վրայի Ամրատարերդն է (Գ. Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 67):

դությանն կոչելով նրան։ Հակառակ դեպքում նա սպառնաց հաշվեհարդար տեսնել[52]։ Սյունյաց իշխանն էլ, համոզված լինելով, որ չի կարող դիմակայել հակառակորդին, գերադասեց հնազանդություն հայտնել[53]։ Շարունակելով իր ճանապարհը՝ Ասլան նոյինը կոտրեց տեղական բնակչության դիմադրությունը, գրավեց ողջ Վայոց ձորը[54]։

Սյունիքի նվաճման հետ միաժամանակ մոնղոլները ներխուժել էին նաև Խաչենի իշխանության տարածքը։ Խաչենցիներն ամրանալով Հավախաղաց ամրոցում հերոսաբար պայքարեցին թշնամու դեմ[55]։ Չնայած խաչենցիների ցուցաբերած համառ դիմադրությանը, մոնղոլներին, այնուամենայնիվ, հաջողվեց գրավել Հավախաղացը։ Հանկարծակի և գաղտագողի մտնելով այնտեղ նրանք սրախոխող արեցին ամրոցի պաշտպաններին։ Կիրակոս Գանձակեցին գրում է. «Եւ ի բազմութենէ անկելոցն ծածկէր երկիրն, և արիւնն առու ելեալ՝ իբրև զջուր երթայր, և ոչ յոր խնայեցին. և ոսկերքն ևս, յետ բազում ժամանակաց իբրև զդերբուկս քարանց կուտեալ երևէին»[56]։ Ապա մոնղոլները շարժվեցին Խաչենի տիրակալ Հասան Ջալալի վրա[57]։ Խաչենի տերը, տեղեկանալով թշնամու դալստյանը, բնակչության հետ միասին ամրացավ Էոխանաբերդում[58]։ Հասնելով այդտեղ մոնղոլները պաշարեցին այն։ Սակայն հանդիպելով համառ դիմադրության և համոզվելով, որ ուժի միջոցով անառիկ բերդը գրավել չեն կարող, դիմեցին իրենց ավանդական մեթոդին. հնազանդության կոչեցին Հասան Ջալալին[59]։ Վերջինս էլ դրսից օգնության հույս չունենալով և երկիրն ավելորդ ավերից ու կոտորածներից փրկելու նպատակով դերադասեց հնազանդվել

---

52 Ստեփանոս Օրբելյան, *Պատմութիւն*, էջ 403։

53 Նույն տեղում։

54 Նույն տեղում, էջ 404։

55 Կիրակոս Գանձակեցի, էջ 267։

56 Նույն տեղում։

57 Նույն տեղում, էջ 268։

58 Նույն տեղում, էջ 269։

59 Նույն տեղում։

մոնղոլներին՝ մնալով իր իշխանության տիրակալը։ Մյուս իշխանների պես Հասան Ջալալն իր զորքերով պետք է մասնակցեր մոնղոլների ձեռնարկած արշավանքներին[60]։

Այսպիսով, չնայած Խաչենի իշխանն ի վերջո ընդառաջ գնաց մոնղոլների պահանջին, ինչպես վերը ցույց տրվեց, հենց այնտեղ մոնղոլները հանդիպեցին լուրջ դիմադրության։ Թեև Հասան Ջալալը տվյալ դեպքում ստիպված եղավ հնազանդվել, բայց և այնպես դա չէր նշանակում, թե նա վերջնականապես ենթարկվեց թշնամուն։ Պայքարը շարունակվեց 1238 թ. ներառյալ[61]։

Նվաճելով Հյուսիսարևելյան Հայաստանը և ամրապնդելով իրենց դիրքերն այնտեղ, մոնղոլներն սկսեցին Հայաստանի մնացյալ մասի և Իկոնիայի սուլթանության նվաճումը։ 1242 թ. զորքի հրամանատար ունենալով համբացած Չարմաղանին փոխարինած Բաչու նոյինին, նրանք ներխուժեցին Հայաստանի հարավային ու արևմտյան շրջանները[62]։ Մոնղոլ զորավարը մեծ զորքով 1242 թ. պաշարեց Թեոդուպոլիս (Կարին) քաղաքը, ապա պատգամավորներ առաքեց պահանջելով հանձնվել։ Սակայն կարնեցիներն անարգելով պատգամավորներին՝ նա դարձրին և կազմակերպեցին քաղաքի պաշտպանությունը, որը տևեց երկու ամիս։ Պարբսպակործան մեքենաների օգնությամբ մոնղոլներն ավերեցին քաղաքը շրջապատող պարիսպը և բնակչությանն ստիպեցին հանձնվել[63]։ Գրավելով քաղաքը թշնամին կողոպտեց և հրդեհեց այն[64]։ Մոնղոլները հափշտակեցին նաև բազմա-

---

60 Նույն տեղում։

61 Խաչենի գրավումը Հ. Հ. Մանանդյան ու Լ. Հ. Բարայանը թվագրել են 1236-ով (Հ. Հ. Մանանդյան, Գ, էջ 217, Լ. Հ. Բարայան, նշվ. աշխ., էջ 206)։ Հ. Ա. Օրբելին Հասան Ջալալի հնազանդելը մոնղոլներին նշել է 1236/37 թթ. (И. А. Орбели, նշվ. աշխ., էջ 161), իսկ մոնղոլների արշավանքը Խաչենի վրա 1238/40 թթ. (նույն տեղում)։ Բ. Ա. Ուլուբաբյանը Խաչենի նվաճումը թվագրում է 1238—1239-ով, կամ մինչև 1240 թ. սկզբները (տե՛ս Բ. Ա. Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 188—189)։

62 Կիրակոս Գանձակեցի, էջ 278—279, Վարդան Արևելցի, էջ 147։

63 Կիրակոս Գանձակեցի, էջ 279։

64 Նույն տեղում։

Իսկ հայերեն ձեռագրեր, որոնք հետագայում վաճառեցին հայերին։ Վերջիններս դրանք հանձնեցին եկեղեցիներին ու վանքերին[65]։

Այժմ արդեն քաջվոր նվաճողների համար առաջնահերթ խնդիր էր դարձել Իկոնիայի սուլթանի ջախջախումը։ Բախումը երկու ուժերի միջև անխուսափելի էր։ Սուլթան Ղիաս էդ Դին Քայ Խոսրովի և Բաչուի զորքերի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1243 թ. հուլիսի 3-ին[66], Կարինի և Երզնկայի միջև գտնվող Ջմանկատուկ գյուղաքաղաքի մոտ։ Մարտն ավարտվեց մոնղոլների հաղթանակով[67]։ Դրանից հետո նրանք ասպատակեցին և պաշարեցին Կեսարիան[68], որտեղ հանդիպեցին բնակչության դիմադրությանը. «...և զի ոչ եղեն ձեռնտու բնակիչքն՝ առեալ բռնութեամբ, ի սուր սուսերի մաշեցին զբնակիչսն, և յափշտակեալ որ ինչ ի նմա, և թողեալ ամայի զքաղաքն...»,— պատմում է Կիրակոս Գանձակեցին[69]։ Գրիգոր պատմիչը, անդրադառնալով այս անցքերին, գրում է. «...ասին և զԿեսարիայ և բաղում արիւնհեղութիւնս արարին ի նմա վասն ոչ տալոյ զքաղաքն, այլ կային ընդդէմ Տաթարին կռուով, վասն զի բաղում հեծեալ կայր, բնակեալ ի նմա լցեալ ամենայն բարութեամբ, և ո՛չ տային զքաղաքն սիրով»[70]։ Կեսարիայի կառավարիչները,— գրում է Սիմոն դը Սեն-Քեն-

---

65 Վարդան Արևելցի, էջ 147, Կիրակոս Գանձակեցի, էջ 279—280։

66 Проблемы истории Турции. М., 1978, с. 12.

67 Կիրակոս Գանձակեցի, էջ 281—283։ Ջմանկատուկը նույն Քոսե գաղն է (տե՛ս Проблемы истории Турции. с. 10)։ Կլոդ Կահենը նշում է Քոսե գաղի ճակատամարտ (*C. Cahen*, Abdallatīf al- Baghdādī et les khwārizmiens. In: *C. E. Bosworth*, Iran and Islam. In memory of the late Vladimir Minorsky. Edinburg, 1971, p. 165).

68 Վարդան Արևելցի, էջ 147։ Սիմոն դը Սեն-Քենթենի տեղեկություններում քաղաքների դրավման հերթականությունը չի համընկնում հայ պատմիչների տվյալներին։ Ըստ նրա՝ մոնղոլները գրավել են Երզնկան, Սեբաստիան և ապա նոր՝ Կեսարիան (տե՛ս *Simon de Saint-Quentin*, p. 75—76):

69 Կիրակոս Գանձակեցի, էջ 283։

70 Գրիգոր պատմիչ, էջ 15։

թենը,— մոնղոլներին պատասխանում էին, որ նրանք ո՛չ իրենց մեքենաներով, ո՛չ էլ ուժով չեն կարող խլել քաղաքն իրենցից։ Կեսարիայի պաշտպաններին էր միացել նրա շրջակայքում բնակվող թյուրք բնակչությունը։ Նրանց էր փորձում օգնության գալ նաև Փոքր Հայքի թագավորը 3000 զինվորներով, բայց սակավաթիվությունի հետևանքով նրանք ոչինչ չէին կարող անել մոնղոլներին։ Եվ հաջորդ օրը կեսարացիք տեսան, որ հայոց թագավորը հեռացել է[71]։ Խորամանկությամբ Կեսարիան գրավելուց հետո մոնղոլները շարժվեցին դեպի Սեբաստիա, որի բնակչությունը, կեսարացիների տրխուր ճակատագրին քաջատեղյակ, որոշեց առանց կռվի հանձնվել Թշնամուն[72] և փրկվել։ Մոնղոլները կողոպտեցին Սեբաստիան, որից հետո վերակացու նշանակելով հեռացան[73] և շարժվեցին դեպի Երզնկա։

Թաթար-մոնղոլ նվաճողների դեմ հերոսական պայքարի վառ օրինակ է հանդիսանում երզնկացիների հերոսամարտը։ Երկար ժամանակ համառորեն պայքարելով օտար նվաճողների դեմ, տեղական բնակչությունը բազմաթիվ զոհեր ետ մղեց։ Թշնամուն ոչ մի կերպ չէր հաջողվում կոտրել Երզնկայի բնակչության համառությունը, գրավել քաղաքը[74]։ Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ քաղաքի պաշտպանները Թշնամուն զգալի կորուստներ պատճառեցին. «...բնակիչք քաղաքին բազում հարուածս հասուցեալ ի վերայ զօրացն Թաթարին»[75]։ Տեսնելով, որ ուժի միջոցով չի կարող գրավել Երզնկան, Բաչուն որոշեց դիմել խորամանկության։ Նրա գլխավորությամբ մոնղոլները «...սկսան խաբէութեամբ արտաքս կոչել սիրոյ աղաչաւ, և նոցա հաւանեալ եկին»[76]։

---

71 *Simon de Saint-Quentin, էջ 76։ Խոսքը, անշուշտ, Կիլիկիայի հայոց թագավորի մասին է, որովհետև եվրոպացի ճանապարհորդները Փոքր Հայք ասելով նկատի էին ունենում Կիլիկյան Հայքը։*

72 Վարդան Արևելցի, *էջ 147։*

73 Կիրակոս Գանձակեցի, *էջ 283,* Գրիգոր պատմիչ, *էջ 16,* Ստեփանոս Օրբելյան, *Ժամանակագրութիւն, էջ 25։*

74 Կիրակոս Գանձակեցի, *էջ 283,* Վարդան Արևելցի, *էջ 147։*

75 Կիրակոս Գանձակեցի, *էջ 283։*

76 *Նույն տեղում, էջ 283—284։*

Եվ այդ ճանապարհով միայն մոնղոլներին հաջողվեց գրավել քաղաքը[77]։ Նրանք սրի քաշեցին բնակչությանը, կենդանի թողնելով միայն սակավ թվով մանուկների ու աղջիկների, որոնց էլ գերության քշեցին[78]։ Դրանից հետո մոնղոլները, ասպատակելով ու կողոպտելով շրջակա գավառները, հասան Տիվրիկ, որի բնակչությունը, անկարող լինելով դիմակայել ահեղ թշնամուն, որոշեց առանց մարտի հանձնել քաղաքը[79]։

Մոնղոլներին չհաջողվեց կոտրել Մայաֆարկինի բնակչության համառ դիմադրությունը և գրավել քաղաքը[80]։

Բաչուի այս արշավանքին մասնակցում էին և հայ իշխանները՝ Ավագը, Շահնշահը, Վահրամ Գագեցին ու նրա որդի Աղբուղան, Հասան Ջալալը, Դոփի որդի Գրիգորը և մյուսները, որոնք երբեմն ազատում էին մեծ թվով հայ գերիների[81]։

Զմանկատուկի ճակատամարտում Իկոնիայի սուլթանի պարտությունից հետո մոնղոլական սրի վտանգը կախվեց նաև Կիլիկյան Հայքի վրա, որի կառավարիչները, քաջատեղյակ լինելով, որ ի վիճակի չեն դիմակայելու ահեղ թշնամուն, որոշեցին բանակցություններ մեջ մտնել նրա հետ և կանխել մոնղոլների արշավանքը դեպի Կիլիկիա։ 1254 թ. Հեթում Ա թագավորը գնաց Ղարաղորում և Մանգու մեծ խանի (1251—1259 թթ.), հետ հաստատեց ձեռք բերված համաձայնությունը. Կիլիկիան ճանաչեց մոնղոլների գերիշխանությունը և փրկվեց ավերածություններից ու կոտորածից։ Դրանով իսկ ի դեմս մոնղոլների, կիլիկեցիները ձեռք բերեցին հովանավորի, որը կարող էր պաշտպանել իրենց և՛ Իկոնիայի սուլթանության, և՛ Եգիպտոսի մամլուքների պետության հնարավոր ոտնձգություններից։

---

77 *Simon de Saint-Quentin*, p. 75։

78 Կիրակոս Գանձակեցի, *էջ 284*, Վարդան Արևելցի, *էջ 147*։

79 Կիրակոս Գանձակեցի, *էջ 284*։

80 Ստեփանոս Օրբելյան, *Պատմութիւն*, *էջ 404*։

81 Կիրակոս Գանձակեցի, *էջ 284*։

1245 թ. սկզբին մոնղոլներն արշավեցին Խլաթ։ Գրավելով քաղաքը՝ նրա կառավարումը հանձնեցին Ավագ Զաբարյանի քրոջը՝ Թամթային[82]։ Այստեղից նրանք շարժվեցին դեպի Ամիդ, Եդեսիա, Մծբին, Շամի երկիր և ուրիշ մի շարք տեղեր, սակայն ամառային տոթի և մեծ կորուստների պատճառով ստիպված եղան վերադառնալ իրենց ձմեռանոցը[83]։

Մոնղոլների կազմակերպած սույն արշավանքով հիմնականում ավարտվեց ողջ Հայաստանի նվաճումը[84], որն սկսել էր 1236 թ. և տևել 10 տարի։

Որո՞նք էին մոնղոլների հաջողության պատճառները, նրանց նվաճումները ի՞նչ հետևանքներ ունեցան Հայաստանի համար։

Քոչվոր նվաճողների հաջողության գլխավոր պատճառը սոցիալ-տնտեսական զարգացման այն մակարդակն էր, որում գտնվում էին նրանք։ Զարգացման ցածր աստիճանի պայմաններում մոնղոլների մոտ դեռևս դասակարգային խիստ շերտավորում չկար։ Ուստի նրանք միասնական էին, մարտունակ և կարգապահ։ Իսկ հարձակման ենթարկված երկրները, այդ թվում և Հայաստանը, գտնվելով ֆեոդալական մասնատվածության պայմաններում, չկարողացան թշնամու դեմ միասնական պայքար կազմակերպել, թեև հասարակ ընակչությունը և որոշ իշխաններ (Շամքորում, Անիում, Խաչենում և այլն), փորձում էին դիմակայել նրան։ Դեռ ավելին, ֆեոդալների մի մասը, իր դիրքը պահպանելու համար, միանում էր թշնամուն և մասնակցում նրա կազմակերպած արշավանքներին։ Մոնղոլների հաջողությունների կարևոր

---

82 Կիրակոս Գանձակեցի, էջ 292, В. Г. Тизенгаузен. Сборник материалов, относящихся к истории Золотой Орды. СПб., 1884, т. I, с. 505.

83 Կիրակոս Գանձակեցի, էջ 292—293, В. Г. Тизенгаузен. Сборник материалов, I, с. 505; Рашид ад-Дин, II, с. 125.

84 Բացառություն էր կազմում Սասունը, որը, ինչպես հետո կտեսնենք, 50-տարվա երկրորդ կեսում նվաճեց Հուլավուն։ Չէր նվաճվել նաև Մայֆարկինը, որը դարձյալ մոնղոլները պետք է նվաճեին Հուլավուի արշավանքի ժամանակ։

գործոններից էր նրանց կողմից կիրառվող զանգվածային ահաբեկության տակտիկան, որը նպատակ ուներ ոչ միայն կոտրել տեղական բնակչության ընդդիմադիր ուժը, սարսափ տարածել, այլև հոգեբանորեն ազդել առաջիկա արշավանքներին ենթարկելիք ժողովուրդների վրա։

Մոնղոլների արշավանքների հետևանքով տեղական բնակչության թիվը զգալիորեն պակասեց, որը բացասաբար անդրադարձավ քաղաքների ու գյուղերի տնտեսական կյանքին՝ արհեստագործությանն ու հողագործությանը։

Կ. Մարքսը գրել է, որ մոնղոլների լուծը «...ոչ միայն ճնշում էր, այն անարգում ու հալումաշ էր անում նրա զոհը դարձած ժողովրդի ոգին։ Թաթարները հաստատեցին սիստեմատիկ տեռորի ռեժիմ, ավերելն ու մասսայական կոտորածը սովորական երևույթ էին դարձել»[85]։

2. ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԸՆԴՎԶՈՒՄՆԵՐԸ ԹԱԹԱՐ-ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԲՌՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ XIII ԴԱՐԻ 40-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Չարմաղանի և ապա Բաչու նոյինի հրամանատարությամբ մոնղոլների նվաճած տարածքից՝ Իրանի զգալի մասից, Անդրկովկասից, Փոքր Ասիայի արևելյան շրջաններից, ստեղծվեցին մոնղոլական կենտրոնական պետության կուսակալություններ։ Վրաստանը, Հայաստանը, Առանը, Շիրվանն ու Ատրպատականը կազմեցին մեկ կուսակալություն, որի կառավարիչն էր Չարմաղանը։ Այս կուսակալության կազմում էլ Վրաստանն ու Զաքարյան Հայաստանի իշխանությունը կազմեցին վարչական մեկ ինքնուրույն միավոր, որը մոնղոլներն անվանեցին Գյուրջիստանի վիլայեթ։

Չարմաղանի նվաճումներից հետո մեծ խան Ուգեդեյը հանձնարարել էր նրան՝ մնալ տեղում և ամեն տարի մայրաքաղաք ուղարկել մեծ քանակության ոսկի և թանկարժեք այլ ապրանքներ[86]։

---

[85] *K. Marx*, Secret Diplomatic History of the eighteenth century. London, 1899, p. 78.

[86] *С. А. Козин.* Сокровенное сказание, I, с. 193—194.

Հյուսիսային Հայաստանի և Արևելյան Վրաստանի հրապարակումից հետո Զարմաղանը, տեղի ամենաազդեցիկ անձնավորությանը՝ Ավագ Զաքարյանին, ուղարկեց Ուգեդեյի մոտ[87] տեղի իշխանների մեջ իր առաջատար դիրքում հաստատվելու համար։ Այդ ուղևորության հարցում որոշակիորեն շահագրգռված էր նաև ինքը՝ Ավագը, որը նպատակ ուներ մեծ խանի միջնորդությամբ փոքր-ինչ թեթևացնել երկրի վիճակը[88]։ Մոնղոլիայում Ուգեդեյը լավ ընդունելություն ցույց տվեց Ավագին, նրան տվեց իր գրությունը՝ հասցեագրված տեղի մոնղոլ հրամանատարությանը։ Գրության մեջ պատվիրված էր Ավագին հանձնել վերջինիս ողջ տիրույթը և նրա օգնությամբ հնազանդեցնել բոլոր ապստամբ իշխաններին[89]։

Հայտնի է, որ 1236 թ. մոնղոլական արշավանքների ժամանակ Արևմտյան Վրաստան էին հեռացել Շահնշահը, Վահրամ Գագեցին և նրա որդի Ադրուզան։ Դեռևս շարունակում էր իր պայքարը խաչենի իշխան Հասան Ջալալը։ Ահա, Ավագի՝ Մոնղոլիայից վերադառնալուց հետո և նրա միջնորդությամբ մոնղոլներին հնազանդություն հայտնեցին վերոհիշյալ իշխանները, ինչպես նաև մյուսները՝ ստանալով իրենց տիրույթները[90]։

Սակայն այսուհետև էլ դրությունը երկրում շարունակում էր մնալ ծանր։ Ինչպես Կիրակոսն է վկայում, մոնղոլներն սկսեցին դաժան հարկահանության և ռազմական արշավանքներին մասնակցելու պահանջներով նեղություն պատճառել տեղացի իշխանավորներին[91]։ Անգամ մեծ իշխան Ավագը խիստ դժգոհեց, քանզի չէր կարողանում բավարարել քոչվոր նվաճողների ընչաքաղցությունը, նրանց բոլոր պահանջները։ Վերջիններս բառիս բուն իմաստով կողոպտում էին երկրի հարստությունը։ Բնակչությունից նրանք խլե-

87 Կիրակոս Գանձակեցի, էջ 262։
88 Նույն տեղում։
89 Նույն տեղում, էջ 263։
90 Նույն տեղում։
91 Նույն տեղում։

ցին բոլոր ձիերը, որոնց նկատմամբ առանձնակի ձգտում ունեին[92]։ Ի վերջո մոնղոլ հրամանատարներից մեկի՝ Ջոջ-Բուղայի կողմից բրածեծ լինելով և հալածվելով՝ աթաբեկ Ավագը հեռացավ Արևմտյան Վրաստան, Ռուսուդան թագուհու մոտ[93]։

Մոնղոլական գլխավոր հրամանատարությունը, գիտակցելով, որ Ավագ Զաքարյանի կորուստը կարող է բացասաբար անդրադառնալ իր դիրքերի ամրության վրա, դատապարտեց Ջոջ-Բուղայի արարքը և կոչ արեց Ավագին վերադառնալ։ Որպես հավաստիացում, նա երկրի աթաբեկի տիրույթը հանձնեց նրա ազգական Շահնշահին[94]։ Սակայն լրիվ ապահով զգալու համար Ավագը Մոնղոլիա մեծ խանի մոտ դեսպան առաքեց, հավաստեց իր հավատարմությունը։ Եվ այն ժամանակ, երբ տեղ հասավ Ուկեդեյի հրահանգը՝ Ավագին հանգիստ թողնելու մասին, վերջինս ետ դարձավ[95]։

Մոնղոլները փորձեցին Ավագի միջնորդությամբ հնազանդեցնել Ռուսուդան թագուհուն։ Այդ նպատակով նրանք վերջինիս մոտ աթաբեկին և մեծ խանի մոտից եկած Տոնղուս-աղա անունով մի հարկահանի առաքեցին[96]։ Սակայն թագուհին մոնղոլներին ընդառաջ չգնաց և բավարարվեց միայն նրանով, որ Ավագին տվեց մի փոքր զորամաս և ետ ուղարկեց[97]։

Իսկ Բաչու նոյինը 1243 թ. հուլիսին, Ղիաս էդ Դին Քայ խոսրովին պարտության մատնելուց հետո, Վահրամ Գագեցու միջոցով բերել տվեց Ռուսուդանի կողմից սուլթանի մոտ աքսորված Գեորգի Լաշայի որդի Դավթին, և հաստատեց վրացական գահին[98]։ Ռուսուդան թագուհին, որը մինչ այդ

---

92 Նույն տեղում, էջ 263—264։
93 Նույն տեղում, էջ 264—265։
94 Նույն տեղում, էջ 265—266։
95 Նույն տեղում, էջ 266։
96 Նույն տեղում։
97 Նույն տեղում։
98 Նույն տեղում, էջ 288—289, 316—317։

իր որդի Դավթի հետ եկել էր Տփղիս և նրան հռչակել թագավոր, ստիպված եղ փախավ Արևմտյան Վրաստան[99]։ Ապա նա Մոնղոլիայում մեծ հեղինակություն վայելող Ոսկե Հորդայի Բաթու խանի[100] միջոցով, Տփղիսում գահին վերահաստատեց իր որդուն[101]։

Գույուկ խանի (1246—1248 թթ.) իշխանության գլուխ անցնելու առթիվ Ղարաղորում էին հրավիրվել մոնղոլական ավագանու և նվաճած երկրների ղեկավար ներկայացուցիչները։ Դրանց թվում էին նաև սթաբեկ Ավագը և վրացական գահի հավակնորդներ երկու Դավիթները[102]։

Այդ ընթացքում վախճանվեց Ռուսուդան թագուհին։ Երկիրը գտնվում էր անտերունչ վիճակում։ Օգտվելով դրանից, ինչպես նաև մոնղոլական զորքերի անդադրում արշավանքներից[103], որոնց անպայման մասնակցում էին նաև հայ-վրացական զինական ուժերը, սկսեցին Հայաստան և Վրաստան ներխուժել թյուրքական զորքերը։ Սակայն վերջիններիս 60000-ոց բանակը Ղարա խանի գլխավորությամբ Վաղարշակերտում Շահնշահ Զաքարյանի հրամանատարության ներքո գտնվող 30000-ոց հայկական բանակից պարտություն կրեց։ Հայերը հետապնդեցին նահանջող թշնամուն մինչև Խլաթ՝ կոտորելով և գերեվարելով մեծաթիվ ասպա-

---

99 «Վրաց ժամանակագրություն», էջ 79, Կիրակոս Գանձակեցի, էջ 289։

100 Հարցն այն է, որ այդ ժամանակ մեծ խանի գահը թափուր էր։

101 Կիրակոս Գանձակեցի, էջ 289—290։

102 «Վրաց ժամանակագրություն», էջ 80—81, Juvaini, I, p. 250։ Վերոհիշյալ երկու Դավիթներից մեկը Գեորգի Լաշա թագավորի որդին էր, որը պատմության մեջ հայտնի է Ուլու (մոնղոլերեն՝ մեծ) Դավիթ (1246—1270 թթ.) անունով, իսկ մյուսը Գեորգի Լաշայի քույր Ռուսուդան թագուհու որդին էր։ Վերջինս պատմությանը հայտնի է որպես Դավիթ Նարին (1246—1293 թթ.) (Նարին՝ մոնղոլերեն—կրտսեր) անունով։ Նրանք երկուսն էլ վրացական գահին հաստատվեցին Գույուկ խանի կողմից, ընդ որում առաջնությունը վերապահվել էր Ուլու Դավթին (տե՛ս Juvaini, I, p. 257, Կիրակոս Գանձակեցի, էջ 316)։

103 Կիրակոս Գանձակեցի, էջ 292—293, Рашид ад-Дин, II, с. 125; «Վրաց ժամանակագրություն», էջ» 93։

տակիչների։ Շահնշահը հաղթանակած, հարուստ ռազմավարով վերադարձավ Անի[104]։

Սակայն հայ-վրացական զորքերին շուտով հարկ եղավ դիմակայել թյուրքերի մի նոր արշավանքի։ Թշնամին Ալթու և Օն խանների գլխավորությամբ ներխուժեց երկիր և ասպատակելով հասավ Տայք։

Հայ-վրացական զորքերը հակառակորդին հանդիպեցին Վանա դաշտ կոչված վայրում, որտեղ թեժ ճակատամարտ բռնկվեց և երկու կողմերն էլ զգալի կորուստներ տվեցին։ Այնուամենայնիվ հաղթանակը տոնեցին հայ-վրացական զորքերը[105]։ Սակայն թշնամին դեռ վերջնականապես ջախջախված չէր և Ուղտիքում (Օլթի) ծավալված կռիվներում հայ-վրացական զորքերը նոր հարվածներ հասցրին թշնամուն և հաղթեցին[106]։

Ստեղծված ծանր կացությունը մեծ դժգոհություն առաջացրեց հայ-վրացական ֆեոդալական դասի մեջ[107]։ Այս դրության թելադրանքով էլ տեղի ունեցավ ավատատերերի հավաքը Կոխտասթավիում։ Այստեղ իրենց զորքերով եկան

---

104 «Վրաց ժամանակագրություն», էջ 91։

105 Նույն տեղում, էջ 92։

106 Նույն տեղում, էջ 92—93։

107 Ֆրանցիսկյան միաբանության անդամ Պլանո Կարպինին, որը 1246 թ. անցել էր Անդրկովկասով («Путешествия в восточные страны Плано Карпини и Рубрука», с. 72), վկայում է վրացիների (վրացիների ու հայերի—Հ. Ս.) ապստամբական տրամադրությունների մասին (Д. И. Языков. Собрание путешествий к татарам, с. 191). Ի. Ա. Ջավախիշվիլին գտնում էր, որ Պլանո Կարպինիի վկայությունը վերաբերում է 1247 թ. Կոխտասթավիի հավաքին (որին մենք դեռ կանդրադառնանք), և որ Ֆրանցիսկյան միաբանն այդ մասին պետք է տեղեկացած լիներ Ղարաղորումում գտնվող վրացիներից, կամ էլ մոնղոլ զեկավարներից՝ դեսպերից բիչ հետո օշ. ᲯᲐᲒᲐᲫᲝᲑᲘᲐ. III, էջ 137—138)։

Թվում է, որ Պլանո Կարպինիի վկայությունը վերաբերում է 1246 թ., երբ նա անցել էր Անդրկովկասով։ Ինչպես հետո կտեսնենք, Կոխտասթավիի հավաքը տեղի է ունեցել 1247 թ. ամռանը։ Իսկ Պլանո Կարպինին Մոնղոլիայից վերադարձել էր 1246 թ. նոյեմբերին։ Հետևաբար դեռևս տեղի չունեցած հավաքի մասին նա չէր կարող վկայություն թողնել։

Արևելյան Վրաստանի, Հյուսիսարևելյան Հայաստանի, ինչպես նաև Արևմտյան Վրաստանի իշխանները։ Դրանց թվում վրաց ժամանակագիրը հիշատակում է Եգարսլանին, Յոտնե Դաղիանիին, Վահրամ Դաղեցուն, Շոթա Կուպարին, Ղըվարղվարեին, Թորելի Դամբեկելուն, Սարգիս Թմոգվեցուն[108]։ Իշխանները վրաց թագավորի բացակայության պայմաններում որոշեցին վերջ տալ միջֆեոդալական ներհակություններին և միասնական ճակատով դուրս գալ թշնամու դեմ[109]։ Պայմանավորվածություն ձեռք բերվեց Հավաքվել Քարթլիում[110]։

Մոնղոլները, տեղեկանալով հավաքի մասին, Բաչուի ու Անգուրդի գլխավորությամբ եկան Կոխտասաթավի։ Քանի որ հայ-վրացական միացյալ զորքն արդեն ցրված էր, իշխանները չկարողացան դիմադրել, և մոնղոլները նրանց բոլորին կալանավորելով տարան Շիրակավան[111]։

Բաղում օրեր տևած հարցաքննության ժամանակ մոնղոլների տված հարցին, թե ի՞նչ նպատակով են հավաքվել, իշխանները պատասխանեցին՝ հարկերը կարգավորելու համար։ Սակայն մոնղոլները չհավատացին դրան և բոլորին մերկացնելով ու թևերը կապելով, ամառվա տապին նստեցրին քաղաքի հրապարակում[112]։

Երբ ապստամբության պայմանավորվածության ժամանակը մերձեցավ, Յոտնե Դաղիանին զորքով գնաց Սամցխեի և Ղազոյի միջև գտնվող Բկինիսջվարի կոչվող վայրը։ Տեղեկանալով իշխաններին Անի քշելու մասին, Յոտնեն զորքը ետ ուղարկեց և երկու մարդկանց հետ գնաց այնտեղ։ Տեղ հասնելով նա միացավ պատժի ենթարկված ավագներին։ Մոնղոլ հրամանատարները կանչեցին Յոտնեին և հարցրին

---

108 «Վրաց ժամանակագրություն», էջ 93։ Ըստ Պ. Մ. Մուրադյանի՝ վերջինս Զաքարյան տոհմից էր («Վրաց ժամանակագրություն», ծանոթագրություններ, էջ 198)։

109 Նույն տեղում, էջ 93։

110 Նույն տեղում։

111 Նույն տեղում։

112 Նույն տեղում։

նրա արարքի պատճառների մասին։ Նա էլ վկայեց, թե հարկերը հավաքելու գործը կարգավորելու համար էին հավաքվել։ Ուստի, թե մեռնելու է, ապա պետք է ինքն էլ մեռնի մյուսների հետ, եթե ապրելու է՝ ապրի մյուսների հետ, որովհետև ինքն էլ մասնակից է եղել խորհրդակցությանը[113]։

Ի վերջո, ըստ վրաց ժամանակագրի, հավատալով իշխաններին՝ մոնղոլները նրանց ազատ արձակեցին[114]։ Սակայն հազիվ թե ձերբակալվածներին ազատելու հարցում Յոանն Դապիանիի վարքագիծն այնպիսի էական նշանակություն ունենար, ինչպես ձգտում է ցույց տալ վրաց ժամանակագիրը։ Ավելի հավանական է, որ 1247 թ. Ղարաղորումից վերադարձած Ավագի միջնորդությամբ է, որ ազատվել են ըմբոստները։

Իշխանների հավաքը ուսումնասիրողների կողմից թվագրվում է տարբեր կերպ։

Ի. Ա. Ջավախիշվիլին Կոխտասթավիի անցքերը (ըստ նրա՝ դավադրությունը) թվագրում էր 1247 թ.[115], Յու. Մ. Սիխարուլիձեն՝ 1245 թ.[116]։ Վրաստանի պատմության ակնարկներում նշվում է 1246 կամ 1247 թվականը[117]։

Ի. Ա. Ջավախիշվիլու թվագրման օգտին են խոսում հետևյալ փաստերը։ Նախ, մոնղոլական զորքերը 1245 թ. ընթացքում գտնվում էին արշավանքների մեջ[118]։ Եվ հայտնի է, որ այդ արշավանքներին անպայման մասնակցում էին հայ-վրացական զորքերը։ Այնպես որ 1245 թ. բացառվում է։ Չպետք է մոռանալ, որ ըստ նույն վրացական աղբյուրի տեղեկության՝ Կոխտասթավիի հավաքին մասնակից է եղել, ի թիվս այլոց, նաև Ջաքարյաններից Սարգիս Թմոգվեցին, որը նշվում է նաև որպես Լաշայի որդուն Ղարաղորում ուղեկցող[119]։ Եթե ընդունենք, թե Կոխտասթավիի հավաքը

---

113 Նույն տեղում, էջ 94։

114 Նույն տեղում, էջ 94—95։

115 ᲘᲐᲙᲝᲑ ᲯᲐᲕᲐᲮᲘᲨᲕᲘᲚᲘ III¹, էջ 138։

116 Ю. М. Сихарулидзе, նշվ. աշխ., էջ 26։

117 საქართველოს ისტორიის ნარკვევები, III, էջ 555—556։

118 Կիրակոս Գանձակեցի, էջ 292—293։

119 «Վրաց ժամանակագրություն», էջ 96, 99։

վերաբերում է 1245 թ., ապա առաջ է գալիս մի հակասություն։ 1245 թ. ամռան վերջերին Ղարաղորումում գտնվում էին նաև երկու Դավիթները[120] և Սարգիս Թմոգվեցին։ Այդ դեպքում վերջինս ինչպե՞ս կարող էր մասնակցել վերոհիշյալ հավաքին։ Գալիս ենք այն համոզման, որ Սարգիս Թմոգվեցին Ղարաղորումից վերադառնալուց (ըստ երևույթին 1247 թ. սկզբին)[121] հետո միայն կարող էր մասնակցել Կոխտասթավիի հավաքին։

1247 թ. ամռանը Ավագը վերադարձավ Ղարաղորումից։ Այս իրողության օգտին է խոսում Դոմինիկյան միաբանության անդամ Ասցելինը, որը 1247 թ. մայիսի 24-ից մինչև հուլիսի 25-ը գտնվել է Բաչուի զորաբանակում[122], և վկայում է, որ Ավգուտ (Ավագ—Հ. Ս.) անունով մի մարդ էր գալու Մոնղոլիայից, որը նշանակվել էր Վրաստանի կառավարիչ, և նրան անհամբերությամբ էին սպասում։ Վերջապես նա գալիս է և Բաչուի կողմից լավ ընդունելության արժանանում[123]։ Ամենայն հավանականությամբ ձերբակալված իշխանները հենց այս ժամանակ՝ 1247 թ. ամռանը, Ավագի միջնորդությամբ էլ ազատվել են։ Ինչպես հետո կտեսնենք, նման մի միջնորդություն էլ եղել է երկու տարի անց՝ 1249 թ. հայ-վրացական առաջին ապստամբությունից հետո թաթար-մոնղոլական տիրապետության դեմ։

---

120 *Рашид ад-Дин*, II, с. 118—119.

121 Ղարաղորումից Անդրկովկաս վերադառնալը, որպես կանոն, մի քանի ամիս էր տևում։ Եվ նկատի ունենանք, որ Սարգիս Թմոգվեցին ամենաշուտը Գույուկ խանի գահ բարձրանալուց հետո՝ 1246 թ. աշնանը, կարող էր վերադառնալ, ապա 1247 թ. սկզբին նրա հայրենիք հասնելու ենթադրությունը հավանական է դառնում։ Իսկ վրաց ժամանակագրի՝ Կոխտասթավիի վերոհիշյալ դեպքերը նկարագրելիս տեսանք, որ այն եղել է շոգ եղանակին՝ ամռանը։

122 *R. Grousse*', L'Empire des steppes, p. 421.

123 *P. Bergeron*, I, p. 77—79; *Д. И. Языков*. Собрание путешествий к татарам. с. 253—257; «Վրաց ժամանակագրություն», էջ 100։

Վրաց ժամանակագրի մոտ Ուլո (Հուլավու—Հ. Ս.) անվանումը թյուրիմացություն է։ Ավագը վախճանվել է 1250 թ.՝ մինչ Հուլավուի գալը։ Նա ընդունվել է Բաչու նոյինի կողմից։

Անդրկովկասում ստեղծված ծանր դրությունն առավել վատթարացավ 1247——1248 թթ. Մերձավոր արևելքում անցկացված հարկահանության կապակցությամբ[124]։ Հարկային դաժան քաղաքականությունը թելադրված էր մոնղոլական լայնածավալ կայսրության պահպանման շահերով։ Թե որքան ծանր էր մոնղոլների հարկահանությունը, վկայում են ժամանակի պատմիչները։ Դեպքերին ականատեսը՝ Կիրակոս Գանձակեցին նշում է, որ երբ Գույուկ խանն անցավ իշխանության գլուխ, իսկույն այս ու այն կողմ ուղարկեց խստապահանջ հարկահավաքներ, որոնց կամայականություններն անսանձ էին ու անզուսպ։

Իրանի և Անդրկովկասի հարկահանման գործը հանձնված էր Արղունին և Բուղային[125]։

Օտար բռնակալների կամայականությունների մասին է վկայում նաև Գրիգոր պատմիչը[126]։

Հարկահանության դեմ մեծ դժգոհություն առաջացավ Խաչենում։ Բուղան մեծ զորքով շարժվեց այնտեղ, քարուքանդ արեց տեղի գլխավոր ամրոցը՝ Խոխանաբերդը[127]։ Ջընջված Կիրակոս Գանձակեցին այս ծանր միջադեպը փորձում է բացատրել Խաչենի գահերեց իշխան Հասան Ջալալի քրիստոնեական բարեպաշտության հանգամանքով, որն, իբր, չէին կարող հանդուրժել մահմեդական Բուղան ու նրա մոլեռանդ հարկահանները, մենք համոզված ենք, որ նման պատճառաբանությունը թերի ու միակողմանի է, մոնղոլ բռնավորներին Խաչենում վայրագության մղած պիտի լինի ծանր հարկահանության դեմ տեղացիների ընդվզումը։ Ըմբոստները պատրաստարվել էին անառիկ Խոխանաբերդում, որի դեմ մոնղոլ ասպատակիչները ոչ ունեին դեռևս 30-ական թվականներից, երբ մեծ դժվարությամբ կարողացան կոտրել նրա պաշտպանների դիմադրությունը։ Ուստի նրանք այժմ ստիպ-

---

124 *Рашид ад-Дин*, II, с. 120; *Juvaini*, II. p. 512.

125 Կիրակոս Գանձակեցի, *էջ 312—313*։

126 Գրիգոր պատմիչ, *էջ 20*։

127 Կիրակոս Գանձակեցի, *էջ 313*։

ված էին խորտակել ոչ միայն խորանաբերդը, այլև՝ «...զԴեղրն, զՄիրանաքարն, և զայլ ամրոցս»[128]։ Կիրակոսի վկայությամբ՝ այս բերդերն այնպես հիմնահատակ խորտակվեցին «...մինչև հետք անգամ ոչ երևէին, թէ բնաւ չէն լեալ իցէ»[129]։ Իսկ Հասան Ջալալը շատ ոսկի ու արծաթ տալով միայն հազիվ փրկվեց մահից[130]։

1248-ին դրությունն այն աստիճան էր սրվել, որ նույնիսկ Ավագ Զաքարյանը դուրս եկավ Բուղայի դեմ «բազում զօրաք»[131]։ Վերջինս տեսնելով իր դիմաց կանգնած մեծ զորքը, փորձեց մեղադրել Ավագին խանի դեմ ապստամբելու մեջ։ Եվ մինչ Բուղան դավեր էր նյութում Ավագի հանդեպ, հիվանդացավ «յանկարծակի և հեղձամաղձուկ սատակեցաւ չարն չարեաւ»[132]։

1247—1248 թթ. դեպքերը նախերգանքն էին 1249 թ. ավելի բուռն իրադարձությունների։ Նշենք, որ 1248 թ. Ղարաղորումից վերադարձել էին երկու Դավիթ Բագավորները[133]։ Եվ հենց նրանցից մեկը՝ Դավիթ Նարինը՝ գլխավորեց պայքարը մոնղոլների դեմ։

1249 թ. անցքերին անդրադառնալով՝ Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ հանկարծակի «...խորհուրդ արարեալ ամենայն աւագանին թաթար զօրուն, վառեցան զինու և կազմեցան առ հասարակ կոտորել զաշխարհս Հայոց և Վրաց՝ զհնազանդեալս իւրեանց, վասն այսպիսի պատճառի, թէ ապստամբել կամի Բագաւորն Վրաց ամենայն իշխանօքն, և զօրաժողով են զալ կոտորել զնոսա, քանզի երևէր իսկ, զի զօրաժողով եղեն ամենայն իշխանքն առ Բագաւորն Վրաց Դաւիթ ի Տփղիս»[134] (ամենայն հավանականությամբ

---

128 Նույն տեղում։

129 Նույն տեղում։

130 Նույն տեղում։

131 Նույն տեղում, էջ 314։

132 Նույն տեղում։

133 Ստեփանոս Օրբելյան. Ժամանակագրութիւն, էջ 26, «Վրաց Ժամանակագրություն», էջ 100։

134 Կիրակոս Գանձակեցի, էջ 319։

Դավիթ Նարինի մոտ)։ Պատմիչը նշում է նաև ապստամբության դրդիչ պատճառը. հավաքի ժամանակ իշխաններից ոմանք ասել են՝ «Ընդէ՞ր ծառայեմք մեք սոցա՝ ունելով զայսքան բազմութիւն զօրաց, այլ եկայք յանկարծակի անկցուք ի վերայ նոցա, և կոտորեալ՝ ջնջեսցուք զնոսա, և մեք կալցուք զաշխարհս մեր»[135]։

Գրիգոր պատմիչը նույնպես վկայում է, թե ինչպես մի անգամ հավաքի ժամանակ իշխաններից մեկը «...համարեց Թագաւորին զայլ իշխանս, և ասաց զԲՒ իշխանացն Ռ (=1000) ձիաւոր պատերազմող, կայր որ ունէր Շ (=500) և անկաւ բանս այս ի լոյս ամենայն Թագաւորութեան, ...և յորժամ հաշուեցան և համար արարին զօրացն հայոց և վրաց, ասացին զիւրեանցն յաղթող լինել ի վերա զօրաց Տաթարին, և բաժանեցին զզլխաւորսն ի վերա իւրեանց...»[136]։

Սակայն ապստամբություն բարձրացնելու դեմ էր երկրի աթաբեկ ու ամիրսպասալար Ավագ Զաքարյանը։ Կիրակոսը, ավարտելով ապստամբության նպատակով հրավիրված խորհրդակցության մասին իր տեղեկությունը, ավելացնում է. «Եւ խափանեաց զայս խորհուրդ մեծ իշխանն Աւագ...»[137]։ Իսկ ինչո՞վ բացատրել երկրի աթաբեկի ու ամիրսպասալարի՝ քաղաքական մեծ կշիռ ունեցող այդ իշխանի, նման դիրքորոշումն ապստամբության նկատմամբ այս ժամանակ։ Հավանաբար այստեղ կարևոր նշանակություն է ունեցել, նախ, Ավագ Զաքարյանի գրաված կարևոր դիրքը մոնղոլների մոտ։ Ապա և՝ նրա համոզմունքը, որ ապստամբությունը հաղթական վախճանի չի հանգելու և անպայման տեղիք է տալու մոնղոլների կողմից նորանոր ասպատակությունների ու հալածանքների։

Տեղեկանալով նախապատրաստվող ապստամբության մասին, մոնղոլներն սկսեցին անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել այն խեղդելու համար։ Կիրակոս Գանձակեցին վկա-

---

135 Նույն տեղում։

136 Գրիգոր պատմիչ, էջ 20։

137 Կիրակոս Գանձակեցի, էջ 319։

յում է. «...և թաթար զօրուն պատահեալ ի տեղւոջն՝ լուան զայն և աղդեցուցին գլխաւորացն։

Եւ իբրև ցրուեցան զօրք իշխանացն յիւրաքանչիւր տեղիս, ապա նոցա այսպէս դիմեալ՝ կամէին առ հասարակ կոտորել զամենեսին։ Եւ յիշխանացն, զորս գտան առ իւրեանս, ի կալանս արարին. և որք ո՞չ էին անդ, հրաւիրակս առաքեցին փութով առ իւրեանս կոչելով»[138]։

Ձերբակալվածների թվում էր նաև Դավիթ Նարին թագավորը, որին մոնղոլները բանտարկել էին Ջագեձորի (Գորիս) բանտում[139]։ Թեև Ավագ Զաքարյանը լավ փոխհարաբերության մեջ էր մոնղոլ Ջաղաթայ զորավարի հետ, այնուամենայնիվ նա էլ ապստամբությանը մասնակից լինելու կասկածի տակ էր։

Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ Ավագը նիրկայացավ մոնղոլներին, ապացուցեց իր անմեղակցությունը, ապա միջնորդեց կալանավորված իշխաններին ազատելու համար, որն էլ իրականացվեց՝ մեծ փրկագնի միջոցով միայն. «Եւ դնացեալ առ նոսա մայրն Աւագին, որում անուն էր Խոշաք, երաշխաւոր լինէր վասն որդւոյն իւրոյ միամտութեան առ նոսա, և թէ ինքն իսկ ընդ հուպ գալոց է առ նոսա, որ եղեն իսկ, զի եկն վաղվաղակի իշխանն Աւագ և եցոյց նոցա զիւր մտերմութիւնն առ նոսա բազում վկայիւք։

---

138 Նույն տեղում։

139 Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 405—406։ Ստեփանոս Օրբելյանի սույն վկայությունը թույլ է տալիս կարծելու, որ 1249 թ. պայքարը ղեկավարել է Դավիթ Նարինը։ Այդ պատճառով էր նա ձերբակալվել ու բերվել Ջաղեձոր, որտեղից հետագայում նրան հաջողվեց փախչել։ Իսկ այն, որ ապստամբության նախապատրաստությունը տեղի է ունեցել Տիղիսում, դա ոչնչով չի հակասում վերն ասվածին, որովհետև Ղարաղորումից նոր դառնալուց հետո երկու Դավիթ թագավորներին էլ Ավագի միջնորդությամբ ազատեցին Տիղիսում գահ բարձրացրին։ Եվ օրենքներն ու հրովարտակներն էլ երկուսի անունից էին հրապարակվում («Վրաց ժամանակագրություն», էջ 101, Կիրակոս Գանձակեցի, էջ 316—317)։ Հետևաբար Տիղիսում նախապատրաստված ապստամբության ղեկավարը կարող էր լինել հենց Ուսուդանի որդին, մանավանդ, որ Բաչուն հովանավորում էր Ուլու Դավթին։

Եկն և թագաւորն Դաւիթ, և այլ իշխանքն. և կապեալ զամենեսեան ուժգին, ըստ օրինի իւրեանց զձեռս և զոտս բարակ չուանօք, և թողեալ այնպէս կապեալ զերիս աւուրս՝ ձաղէին և անարգէին զնոսա վասն հպարտութեանն և ապստամբ խորհրդոյն։ Եւ ապա առեալ զամենայն երիվարս և զդինս գլխոց նոցա, թողին զնոսա...»[140]։

Ձերբակալված իշխանների ազատմանը նպաստել է մոնղոլ զորավար Ջաղաթայը[141]։ Սակայն նա այդ արել է ոչ միայն Սվագի հետ ունեցած բարեկամական հարաբերություններից ելնելով։ Ջաղաթայն ավելի շուտ ձգտել է բարեկամական հարաբերություններ հաստատել նվաճված երկրների ֆեոդալական վերնախավի հետ։ Չնայած դրան, մոնղոլները չդադարեցրին իրենց դաժանությունները Հայաստանի և Վրաստանի բնակչության հանդեպ[142]։ Դա, հնարավոր է, որոշ չափով կապված էր նաև Դավիթ Նարին թագավորի՝ կալանավայրից փախչելու հետ։

1249 թ. իրադարձությունների մասին որոշ պատկերացում է տալիս 1251 թ. Մեծ Հայքի բնակչությանը Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի առաքած «խրատական թուղթը»[143]։ Նրանում, կապված վերոհիշյալ իրադարձությունների հետ, խոսվում է մոնղոլների վայրագությունների մասին. «և հանին (մոնղոլները—Հ. Ս.) զսուսերս ի պատենից և լարեցին զաղեղունս իւրեանց, և ծայրաքաղ արարին ի բաղում տեղիս զմարդ և զանասուն և զստացուածս, որպէս առ մեզ էհաս համբաւն»[144]։ Կոստանդին Բարձրբերդցին, ելնելով քաղաքական որոշակի նկատառումներից, մոնղոլների հետ Կիլիկիայի դաշն կնքելու մտադրությունից, կոչ էր անում հայերին՝ հնազանդվել մոնղոլներին և չապստամբել նրանց դեմ։ Այդ կոչն ինքնին արդեն վկայում է այն պայքա-

---

140 Կիրակոս Գանձակեցի, էջ 320։

141 Նույն տեղում։

142 Վարդան Արևելցի, էջ 148։

143 Լ. Ս. Խաչիկյան, Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը, էջ 279—284։

144 Նույն տեղում, էջ 280։

րի մասին, որ 1249 թ. տեղի է ունեցել, և որն այդքան անհանգստացրել էր Կոստանդին կաթողիկոսին։ Եվ բոլորովին պատահական չէ, որ հոգևոր առաջնորդը, չնայած այն ծանր պայմաններին, որոնցում գտնվում էր բուն Հայաստանը, կոչ էր անում. «Արդ, զուր մեզ լսեցէք և ի բարին դարձիք և ի ձեր պարկեշտ վարքն ըստ պատուիրանին աստուծոյ՝ և մեք երաշխաւոր եմք, որ ամենայն ճշմարտութեամբ աստուած առ ձեզ դառնայ գթութեամբ և ողորմութեամբ յաւդոց և յեղանակաց տարւոյ, բարեխառնութեամբ երկինք երկնաւորաւքն տայէ զքաղցրութիւն իւր ի վերա ձեր և երկիր առատութեամբ տայէ ձեզ պտուղ իւր, և զանին կամքն արձականայ և թեթևացուցանէ զմարն...»[145]։

Կոստանդին Բարձրբերդցին փորձում է բուն Հայաստանի բնակչությանը համոզել, թե դրությունն աստիճանաբար փոխվել է (հավանաբար նկատի ունի մոնղոլական ավերիչ ու սարսափելի արշավանքները), և որ ապստամբություններ բարձրացնելը օգուտ չի կարող բերել։ Այդ միտքն իր արտացոլումն է գտել նրա հետևյալ տողերում. «Եւ այդ ես առաւել հիացումն և մեծ զարմանք, որ այդպէս մոռացայք զպատուհասն զոր կրեցիք՝ հարուածեալք և դանեալք գաւազանաւ ցասմանն աստուծոյ, և տեսանէք աչաւք ձերովք զլերինս և զդաշտս ձեր, որ սակաւ մի յառաջ լի էին դիակոյտ ոսկերաւք սպանելոցն, և զայրս և զխորաձորս, որ լցեալ էին փախստականաւք, և ուտէք և ըմպէք զհաց և զգինի ի գեանոյդ, զոր տեսէք առոգեալ արեամբ սիրելեաց ձերոց»[146]։

Գիտական գրականության մեջ 1249 թ. իրադարձությունները տարբեր կերպ են բնութագրվել։

Ի. Ա. Զավախիշվիլին գտնում էր, որ 1249 թ. ապստամբական ելույթներ եղել են[147]։

---

145 Լ. Ս. Խաչիկյան, *Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը, էջ 280։*

146 *Նույն տեղում, էջ 279։*

147 ՕՅ ՀՕՅԺՕՇՅՕԼՕ, III, *էջ 141։*

Ն. Ա. Բերձենիշվիլին, անդրադառնալով 40-ական թվականների հակամոնղոլական ելույթներին, դրանք բնութագրում է որպես դավադրություններ[148]։ Հասկանալի է, որ այն վերաբերում է նաև 1249 թ. անցքերին։

Հ. Հ. Մանանդյանն իր հերթին գրում էր. «Դավադրության այս փորձը մոնղոլական զորքին առիթ ծառայեց վերսկսելու կողոպուտները, ավերածությունները և կոտորածները գլխավորապես, Սամցխեում և վրացական այլ գավառներում, որոնց մի մասը ապստամբել էր։ Նրանք ավերեցին նաև Հայաստանի մի քանի շրջանները»[149]։

Լ. Ս. Խաչիկյանը, անդրադառնալով Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսի «Խրատական թղթին», գտնում էր, որ «...1249 թ. Հյուսիսային Հայաստանի շրջաններում ու Վրաստանում մոնղոլական տիրապետության դեմ բռնկվում է ապստամբություն»[150]։

Լ. Հ. Բաբայանն այս հարցի առթիվ գրում էր. «Վարդան Վարդապետի և Վրաց Անանուն պատմիչի վկայություններից, մեր կարծիքով, պարզ երևում է, որ թերևս վրաց և հայ ֆեոդալները ապստամբելու մասին սոսկ որոշումով չեն սահմանափակվել, ինչպես ասում են Կիրակոս Գանձակեցին և Գրիգոր պատմիչը (Մաղաքիա), այլ դիմել են կոնկրետ քայլերի, որպիսի հանգամանքը առիթ է ծառայել նվաճողների կողմից նորանոր ավերածությունների ու կոտորածների»[151]։

---

148 *Н. А. Бердзенишвили.* Очерк из истории развития феодальных отношений в Грузии (XIII—XVI вв.). Тбилиси, 1938, с. 8.

149 Հ. Հ. Մանանդյան, Գ, էջ 234։

Ցավոք, անվանի հայագետի մոտ հետևողական մոտեցում չկա 1249 թ. դեպքերի գնահատման հարցում։ Հայրենիքի ազատագրման նպատակով նախապատրաստվող զինված ելույթը չպետք է «դավադրություն» բնութագրել։

150 Լ. Ս. Խաչիկյան, *Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը*, էջ 271։

151 Լ. Հ. Բաբայան, *նշվ. աշխ.*, էջ 261։

Յու. Մ. Սիխարուլիձեն ևս 1249 թ. բաղաքական ելույթն անվանում է դավադրություն[152]։

Պատմագիտության մեջ այն հաճախ համարվում է սոսկ ապստամբության փորձ[153]։

Մեզ հիմնավոր է թվում այն տեսակետը, ըստ որի՝ ապստամբության նախապատրաստումը չի սահմանափակվել նախնական քայլերով, այլ վերաճել է նաև կոնկրետ գործողությունների, որպիսի հանդամանքն էլ հալածանքների ու ասպատակությունների տեղիք է տվել։ Հարկ ենք համարում ավելացնել, որ միայն Վարդան Վարդապետի վրկայությունը չէ, որ նման կարծիքի հիմք է դառնում[154]։ Այդ մասին կոնկրետ տվյալներ ունեն նաև Անանուն ժամանակագիրն ու Կիրակոս Գանձակեցին։ Վերջինս, երբ խոսում է ապստամբ իշխաններին փրկագնով ազատելու մասին, ավելացնում է, որ դրանից հետո մոնղոլները «...ինքեանք յարձակեցան ի կողմանս Վրաց ի վերայ բաղում դաւառաց, ո՛րք ապստամբք և ո՛րք ոչ, և զբաղումս կոտորեցին և զհս բաղմագոյնս գերի վարեցին»[155]։

Անանուն ժամանակագիրն իր հերթին վկայում է, որ 1249 թ. Բաչուն և մյուս մոնղոլ հրամանատարները ստացան վրաց թագավորի ու իշխանների ապստամբության լու-

---

152 Ю. М. Сихарулидзе, նշվ. աշխ., էջ 28։

153 Հայ ժողովրդի պատմություն, հ. 2, Երևան, 1965, էջ 189, Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1975, էջ 585։

154 Վրաց ժամանակագրի տեղեկությունը վերաբերում է 1247 թ. անցքերին։ Առհասարակ պետք է նշել, որ պատմագիտության մեջ ցարդ մի շարք պատմաբաններ (Լ. Հ. Բարայան, Ն. Ֆ. Շոշիաշվիլի), ինչպես արդեն նկատվել է (տե՛ս Գ. Մաօնսուրաձե, նշվ. աշխ., էջ 105), վրաց աղբյուրի հաղորդած տեղեկությունները Կոխտասիավիի հավաքի վերաբերյալ վերագրել են 1249 թ. ապստամբությանը։ Ըստ Ա. Շահնազարյանի՝ Կոխտասիավիի հավաքը տեղի է ունեցել 1245 թ. և կապված է վրացական պետությունում ավատական ներհակությունների խորացման հետ։ Թեև, քիչ անց հեղինակը նույն հավաքի վերաբերյալ վրաց ժամանակագրի հաղորդած տեղեկությունը՝ կապված Վահրամ Գագեցու հետ, վերագրում է 1249 թ. ապստամբությանը (տե՛ս Վահրամյանների իշխանությունը մոնղոլների տիրապետության օրոք, էջ 35—38)։

155 Կիրակոս Գանձակեցի, էջ 320։ (Ընդգծումը իմն է—Հ. Ս.)։

բը[156]։ Այնուհետև մոնղոլները «...բազում կոտորածս արարին յարուս և խայտառականս ի կանայս»[157]։

Հայ-վրացական առաջին ապստամբությունը մոնղոլական տիրապետության դեմ պարտություն կրեց։ Դրա գլխավոր պատճառն այն էր, որ ապստամբ ֆեոդալների մեջ միասնություն չկար։ Ապստամբությանը մասնակցում էին ոչ բոլոր ֆեոդալները։ Հատկապես խիստ բացասաբար անդրադարձավ երկրի սթաբեկ և ամիրսպասալար Սվազ Զարբայանի հրաժարումն ապստամբելուց։ Զինված ելույթները չվերաճեցին կազմակերպված համաժողովրդական մեծ պայքարի, ժողովուրդն անհրաժեշտ ակտիվությամբ չներգրավվեց շարժման մեջ։ Սա, անշուշտ, չի նշանակում, թե նա պայքարից դուրս մնաց։ Ուստի ապստամբությունը բացառապես ֆեոդալական ուժերի ընդվզում չէր։ Ստեղծված կացությունից գժգոհ էին հասարակության բոլոր խավերը։

40-ական թվականների ընդվզումները բողոքի լուրջ արտահայտություն էին թաթար-մոնղոլ տիրապետողների բռնությունների ու կամայականությունների դեմ։ Դրանք նաև նպատակ էին հետապնդում թոթափելու մոնղոլական ծանր լուծը և վերականգնելու երկրի քաղաքական ինքնուրույնությունը։

---

156 Անանուն ժամանակագրություն, էջ 21։

157 Նույն տեղում։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԸ ԹԱԹԱՐ-ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԼԾԻ ԴԵՄ ԻԼԽԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (1256—1353 թթ.)

1. ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԹԱԹԱՐ-ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Ինչպես արդեն նշել ենք, թաթար-մոնղոլական տիրապետության հենց սկզբնական շրջանից սկսած հայերն ու վրացիները, ենթարկվելով դաժան շահագործման, ընդվզում էին, իրենց դժգոհությունն արտահայտում բռնակալների դեմ։ Ժողովրդական ընդվզումները դրսևորում էին զանազան ձևերով։ Չդիմանալով ստեղծված դժվարին պայմաններին, տեղական բնակչության մի մասը թողնում-հեռանում էր հայրենի վայրերից։ Մյուսները դիմում էին զինված պայքարի։ Դրա վառ արտահայտությունն էր, ինչպես տեսանք, 1249 թ. բռնկված հայ-վրացական առաջին ապստամբությունը թաթար-մոնղոլական տիրապետության դեմ։

1251 թ. մոնղոլական ղուռուլթայը (ցեղային առաջնորդների մեծ ժողովը) Չինգիզ խանի թոռ Մանգուին հռչակեց խաքան։ Որոշվեց ավարտել Մերձավոր արևելքի ու Հեռավոր արևելքի դեռևս մոնղոլական լծին չենթարկված երկրների նվաճումը։ Այդ նպատակով կազմվեց երկու բանակ, որոնցից մեկը խուրիլայի հրամանատարությամբ պետք է շարժվեր դեպի Արևելյան Չինաստան, իսկ մյուսը՝ Հուլավուի առաջնորդությամբ՝ դեպի Իրան։

Հուլավուն 1256 թ. հասավ Իրան և, կոտորելով իսմայիլական աղանդավորների դիմադրությունը, ավարտեց այդ երկրի հյուսիսային տարածքի նվաճումը։ Նույն թվականին փաստորեն հիմք դրվեց մի նոր մոնղոլական ուլուս-պետության, որը մոնղոլ այս հրամանատարի անունով հայտնի է որպես Հուլավյան։

Հուլավուի այս արշավանքի ժամանակ էր, որ նրա հրամանով մոնղոլական զորքերն արշավեցին Իկոնիայի սուլթանի դեմ և պարտության մատնելով նրան՝ կրկին հարձակվեցին Կարինի, Երզնկայի, Սեբաստիայի, Կեսարիայի, ինչպես նաև նրանց շուրջն ընկած գավառների վրա[1]։ 1258 թ. Հուլավուն գրավեց Բաղդադը և պատմության թատերաբեմից վերացրեց Բաղդադի խալիֆայությունը։

Թաթար-մոնղոլներին համառ դիմադրություն ցույց տվեցին Մայաֆարկինի բնակիչները։ Նրանք երկու տարի (1258—1260 թթ.) քաջաբար մարտնչում էին մոնղոլների դեմ[2]։

Ապա թշնամին արշավեց նաև Մարդինի վրա։ Մոնղոլները կողոպտեցին այն, ապա Դունայսերն ու Արզնը[3]։

Դեպի Միջագետք ու Սիրիա կազմակերպված սույն արշավանքի ժամանակ էր միայն, որ Հուլավուին հաջողվեց հնազանդեցնել ազատատենչ սասունցիներին[4]։

Ներառտեղծ մոնղոլ-իրանական պետությունն ստացավ «Իլխանություն» անունը (իլխան, էլ-ջան-ժողովրդի տեր)։

---

1 Կիրակոս Գանձակեցի, էջ 375։ Է. Մ. Բաղդասարյանը ցույց է տվել, որ մոնղոլների 1256 թ. արշավանքը դեպի Երզնկա՝ պայմանավորված է եղել սուլթանության ապստամբությամբ (հասկանալի է, որ նման վիճակ է տիրել նաև Գանձակեցու կողմից նշված մյուս վայրերում)։ Է. Մ. Բաղդասարյանը միևնույն ժամանակ նշում է, որ վերոնշյալ վայրերում հայկական իշխանությունների վերականգնման մոնղոլների քաղաքականությունը պայմանավորված էր դեպի մահմեդականության միջնաբերդ Բաղդադի վրա արշավելուց առաջ իր թիկունքն ամրապնդելու մոնղոլների ձգտումով (տե՛ս Է. Մ. Բաղդասարյան, նշվ. աշխ., էջ 14—17)։

2 Կիրակոս Գանձակեցի, էջ 384—385։

3 Рашид ад-Дин, III, с. 56.

4 Կիրակոս Գանձակեցի, էջ 386։

Նրա կազմի մեջ էին մտնում ներկայիս Աֆղանստանը (բացի Բալխի երկրամասից), Իրանը, Ատրպատականը, Առանը, Շիրվանը, Հայաստանը, Աղեհիյան Վրաստանը, Իումը, Ջազիրան (Վերին Միջագետք) և Արաբական Իրաքը։ Արևմտյան Վրաստանը, Տրապիզոնի հունական կայսրությունն ու Կիլիկյան Հայքը Հուլավյանների վասալներն էին։

Իլխանությունը ռազմաֆեոդալական բռնապետություն էր, մոնղոլական ֆեոդալականացած տափաստանային պետականության և իրանական զարգացած ֆեոդալական հասարակայնության այլասերված ու ներքնապես հակասական համակարգ։

Նոր տիրակալի օրոք հայ և վրաց ժողովուրդների ծանր դրությունը էլ ավելի վատթարացավ 1254 թ. աշխարհագրի կենսագործման և Իլխանության կողմից մղվող նոր պատերազմների պատճառով։ Հետևանքը եղավ այն, որ հայ ու վրաց ֆեոդալները որոշեցին ապստամբել մոնղոլների դեմ և թոթափել ծանր լուծը։

1259 թ. Հուլավուի մոտ գտնվող Դավիթ Նարինը, չկամենալով մասնակցել մոնղոլ հրամանատարի դեպի Սիրիա կազմակերպված արշավանքին, փախավ Վրաստան և ապրստամբություն բարձրացրեց։ Դավիթ Նարինի դեմ արշավեց էմիր Արղունը։ Շիդա Քարթլիում տեղի ունեցած ռազմական ընդհարումներից հետո ապստամբ թագավորը հեռացավ Քութայիս, իսկ Արղունը վերադարձավ Հուլավուի մոտ[5]։

1260 թ. աշնանը Դավիթ Նարինի սկսած ապստամբությունը շարունակեց Ուլու Դավիթը[6]։

Վրաց ժամանակագիրը հանգամանորեն նկարագրում է ապստամբության շարունակությունը[7]։ Սակայն նրա վկա-

---

5 Տե՛ս «Վրաց ժամանակագրություն», էջ 102—103։ Juvaini. II, p. 524—525; Ю. М. Сахарулидзе, նշվ. աշխ., էջ 33։

6 Juvaini, II, p. 525.

7 Սույն ապստամբության մասին, ցավոք, հայկական աղբյուրներում քիչ տեղեկություններ կան։ Կիրակոս Գանձակեցին է որոշ վկայություններ թողել, որոնք, սակայն, անհամեմատ ավելի հանգամանորեն են շարադրված վրաց ժամանակագրության մեջ։

լությունների ապստամբության թափի և ընդգրկած շրջանների մասին ամբողջական պատկերացում չենք կազմում, քանզի նա հիմնականում կանգ է առնում լոկ Դավիթ թագավորի գործունեության վրա։ Այսպես, նա տեղեկացնում է, որ երբ Հուլավուն Դավիթ թագավորին կանչում է Եգիպտոս արշավելու, վերջինս թեև երկմտում է, բայց և այնպես ուղևորվում է արշավանքի։ Սակայն «երբ հասավ Ջավախք երկրին, վճռեց ապստամբել, կանչեց իր համախոհներին ու ասաց. «Ովքեր կամենում են, թող թողնեն տիրությունը և գան ինձ հետ, իսկ եթե չեն կամենում՝ թող գնան Մսերք՝ (իմա՝ Եգիպտոս—Հ. Ս.) խանին ծառայության, որպեսզի պաշտպանվի (ապահովվի) նրա կալվածը [խանի կողմից]։ Կամոք առ մեկը կողմնորոշվեք, իսկ ես խոջա Աղիզի բռնությունների պատճառով, որը [ավելացրեց] Արղունի կողմից իմ հանդեպ սահմանած [հարկերը], այլևս չեմ ուզում ծառայել թաթարներին, ուստի չեմ հանդուրժի այսպիսի ստրկություն»։

Թագավորությանը ենթակա իշխաններից ոմանք պաշտպանեցին [վճիռը], ոմանք՝ ոչ. այնուամենայնիվ [թագավորը] վճռեց ապստամբել»[8]։

Ջուվեյնին, խոսելով Ուլու Դավթի ապստամբելու մասին, դարձյալ պատճառ է նշում հարկային լծի ծանրացումը[9]։

Ինչպես երևում է վրաց ժամանակագրի հաղորդումներից, Ուլու Դավթի բարձրացրած ապստամբությանը մասնակցել է ամիրսպասալար Զաքարեն. «Այս ընթացքում Ուլո (Հուլավու—Հ. Ս.) խանի դեմ ապստամբեց Շանշեի (Շահնշահի—Հ. Ս.) որդի Զաքարիա ամիրսպասալարը, որ ամենայն առաքինությամբ օժտված ու նշանավոր մարդ էր, և փախավ Նարին Դավթի մոտ՝ Քութայիս ... Իսկ Դավիթ թագավորը սիրով ընդունեց (նրան—Հ. Ս.)...»[10]։

---

8 «Վրաց ժամանակագրություն», էջ 111։

9 Juvaini, II, p. 25.

10 «Վրաց ժամանակագրություն», էջ 122։ Ա. Գ. Հովհաննիսյանը Զաքարեի ապստամբելու պատճառների մասին գրել է. «բոլոր պարագա-

Ապստամբությանը միացավ նաև Զաքարեի անները՝ Ուխտիքի իշխան Սարգիսը[11]։

Այս ապստամբությանը մասնակից է եղել նաև Խաչենի իշխան Հասան Ջալալը, որի նոր քայլը բռնավորների կողմից գնահատվեց որպես ծանրագույն հանցանք, և նա գլխով վճարեց[12]։

Ուլու Դավիթն իր կողմնակիցների հետ ամրացավ Սամցխեում, որը հայաբնակ էր[13]։ Սորև կտեսնենք, որ ապստամբության ժամանակ այդ բնակավայրն աչքի ընկնող տեղ է գրավել։ Իսկ թագուհի Գոնցային ու իր կրտսեր որդի Դեմետրեին թագավորը թողեց Բջնիում[14]։

ներում Շահնշահի որդին պատճառ ուներ զգոն լինելու մոնղոլներից։ ...անձամբ Զաքարիայից նրանք խլել էին Ավագի կալվածները և հանձնել վրաց Ուլու-Դավիթ թագավորի հետ ամուսնացած Գոնցային՝ Ավագի այրուն։ Երբ 1260 թվականին վրաց թագավորի և էլիսաննների դեմ ըմբոստացավ վրաց գահաժառանգ Դավիթ Նարինը, Զաքարիան միացավ սրան, որի համար թաթարները մահապատժեցին Զաքարիային (1261 թ.)» (Ա. Գ. Հովհաննիսյան, *Դրվագներ, Ա, էջ 183*)։

Շահնշահի որդին, իհարկե, պետք է զգոն լիներ մոնղոլներից՝ Ավագի տիրույթը Գոնցային հանձնելու պատճառով։ Սակայն սխալ կլիներ մտածել, թե Զաքարեն օգտվել է Դավիթ Նարինի և Ուլու Դավիթի վատ փոխհարաբերություններից, միացել է մոնղոլների դեմ ապստամբած Ռուսուդանի որդուն և հանդես է եկել Ուլու Դավիթի և նրան հովանավորող մոնղոլների դեմ, ինչպես հետևում է զիտնականի կարծիքից։ Իհարկե բացառված չէ, որ Զաքարեն, մեզ համար հասկանալի պատճառով, Դավիթ Նարինի կողմն անցներ։ Սակայն դա ուրիշ հարց է։ Բացի այդ, չպետք է մոռանալ, որ Ուլու Դավիթը նույնպես ապստամբել էր մոնղոլների դեմ։

Հարկ է նշել, որ մի որոշ ժամանակ անց մոնղոլները ձերբակալեցին Զաքարեին և մահապատժի ենթարկեցին 1261 թ. (Ստեփանոս Օրբելյան, *Ժամանակագրություն, էջ 26*)։

11 Կիրակոս Գանձակեցի, *էջ 393։ Հ. Աճառյանը չի բացառել Սարգիս իշխանի հայ լինելու հնարավորությունը (տե՛ս* Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան, Երևան, 1918, հ. Դ, էջ 429)։ Այդ կարծիքը ընդունելի է թվում այն պատճառով որ Ուխտիքը ճնշող մեծամասնությամբ բնակեցված էր հայերով։*

12 *Այս իշխանը նույնպես մահապատժի ենթարկվեց մոնղոլների կողմից 1261 թ.* (Վարդան Արևելցի, *էջ 153,* Կիրակոս Գանձակեցի, *էջ 390—391*)։

13 Ա. Գ. Հովհաննիսյան, *Դրվագներ, Ա, էջ 164։*

14 *«Վրաց ժամանակագրություն», էջ 111—112։*

Վերադառնալով արշավանքից՝ Հուլավուն (1256—1265 թթ.) եկավ, հասավ իր ամառային կայան Ալադաղ, իսկ այնտեղից էլ՝ Մուղան և հարցուփորձ արեց Դավթի բարձրացրած ապստամբության մասին[15]։ «Կանչեց Արղունին ու երկու հարյուր իշխանների, զորավար նշանակեց ու քսան հազար զորք տվեց և հրամայեց իրեն հնազանդ վրացիներին, որպեսզի առաջնորդեն Արղուն Օյրիդին[16] և Սամցխե գնան թագավորի դեմ կռվելու»[17]։

Հուլավուն Արղունին տրամադրեց մեծ ուժ, այդ թվում նաև նոր զորամասեր Իրաքի թումանից[18]։ Արղունը 20000-ոց զորքով անցավ Գանձակը, Սոմխիթն ու հասավ Տփղիս[19]։

Տեղեկանալով Արղունի և նրա կողմն անցած վրաց իշխանների գալու մասին, Դավիթ թագավորը համախմբում է իր կողմնակիցներին՝ թվով 8000 մարդ և նրանց հրամանատար նշանակում Սարգիս Ջաղելուն։

Արղունն իր հերթին անցնում է Քարթլին, կանգ առնում Սուրամում և առանձնացնելով 6000 զինվորներ, նրանց ուղարկում է հակառակորդի դեմ։ Ինքը մնացած զորքի հետ մնում է Շինդարում։ Առաջապահ զորամասն առաջ է շարժվում դեպի Տաշիս-Կարի և կանգ առնում Շողա(Շուլա) գետի եզրին։

Սարգիս Ջաղելին թշնամու դեմ ուղարկեց 1500 զինվորներ հավանաբար հետախուզական նպատակներով։ Վերջիններս, չգիտենալով Արղունի առաջապահ զորամիավորման գալու մասին, անցան Ախալդարայի կամուրջը և շուտով տեսան մոնղոլներին։ Բախումը դարձավ անխուսափելի։ Ապստամբները քաջաբար մարտի նետվեցին ու սկսեցին կո-

---

15 Նույն տեղում, էջ 113։

16 Օյրիդ իմա մոնղոլական օյրիդ տոհմին պատկանող։ Հմմտ. «Վրաց ժամանակագրություն», էջ 216։

Հիշատակված տոհմի անունը Ռաշիդ էդ Դինը նշում է օյրաթ (տե՛ս Рашид ад-Дин, I, кн. I, էջ 118)։

17 «Վրաց ժամանակագրություն», էջ 112։

18 Juvaini, II. p. 525.

19 «Վրաց ժամանակագրություն», էջ 112։

տարել հակառակորդին, որը, չդիմանալով հարձակման նման-օրինակ թափին, դիմեց նահանջի[20]։ Ապստամբների առաջապահ զորամիավորումը հետապնդեց թշնամուն մինչև Գորիի Շինդար, որտեղ այս անգամ բախվեց մոնղոլների հիմնական ուժերի հետ և ժամանակագրի վկայության համաձայն «...նշանավոր հաղթությամբ վերադարձան, բաղում անվանի թաթարների իրենց հետ [կերի] վերցրած՝ դիմավորեցին Սարգսին ու զորքին»[21]։

Առաջապահ զորամիավորման հաջողությունից հետո Սարգիսը իր համայն զորքով հարձակման անցավ Արղունի դեմ։ Բռնկվեց թեժ ճակատամարտ, որը, սակայն, ավարտվեց հակառակորդի հաղթանակով։ Ապստամբների բանակը, զգալի կորուստներ տալով, դիմեց նահանջի, իսկ մոնղոլները հետապնդեցին նրան մինչև Ախալդաբայի կամուրջը և նույնիսկ դրանից էլ այն կողմ, ու, ինչպես ժամանակագիրն է վկայում. «Այսպես հաղթանակած վերադարձավ Արղունը Ուլո խանի առաջ, մինչդեռ Սարգիսն ու մնացածները թագավորի մոտ Աձղուր եկան՝ [կորցրած] սիրելիների համար արտասվելով, որովհետև մեծ մասը ոչնչացել էր, քիչը՝ մնացել»[22]։

1260—1261 թթ. ձմռան կեսը Դավիթ թագավորը մնաց Սամցխեում, իսկ այնուհետև անցավ Շավշք ու Կղարջք և գնաց Նիգալիսխևի[23]։

1261 թ. մայիս ամսին Հուլավուն Արղունին մեծաքանակ զորքով դարձյալ ուղարկեց թագավորի դեմ։ Նույն թվականի հունիսին Արղունը հասավ Սամցխե ու սկսեց ավերել այն։ Դրանից հետո նա շրջապատեց Ցխիս-Ջվարը, որտեղ, սակայն, հանդիպեց համառ դիմադրության։ Համոզվելով, որ այն գրավել չի կարող, Արղունը ստիպված եկա քաշվեց ու

---

20 «Վրաց ժամանակագրություն», էջ 112—113։

21 Նույն տեղում, էջ 113։

22 Նույն տեղում, էջ 114։

23 Նույն տեղում։

հենց այդ ժամանակ էլ Հուլավուից հրաման ստացավ վերադառնալ իր մոտ[24]։

Արղունի հեռանալուց հետո Դավիթ թագավորը վերադառնում է Սամցխե և հետագա տեղեկությունների մասին խորհրդակցում իր համախոհների հետ։ Սարգիս Ջաղելին նրան խորհուրդ է տալիս գնալ Լիխտ-այնկողմ[25], Ռուսուդանի որդի Դավթի մոտ։ Այդ առաջարկն էլ արժանանում է թագավորի հավանությանը, որը դեսպաններ է առաքում Դավիթ Նարինի մոտ։ Ստանալով վերջինիս համաձայնությունը՝ Ուլու Դավիթն անցնում է Լիխտ-այնկողմ և այնտեղ մնում շուրջ մեկ տարի[26]։ Ապստամբությունը սրանով փաստորեն ավարտվեց։ Այժմ բանակցություններ սկսեցին Դավիթ թագավորի և Հուլավուի միջև։

Իսկ նախկինում Ավագ Զաքարյանի կին ու այդ ժամանակ Վրաստանի թագուհի Գոնչան, ինչպես նաև թագաժառանգ Դեմետրեն, Արղունի կողմից գերեվարվել և տարվել էին Հուլավուի մոտ։ Եվ, ահա, վերջինս էլ թագուհու միջոցով փորձում է հնազանդության բերել թագավորին։ Այդ նպատակով նա դեսպաններ է առաքում Դավթի մոտ։ Վերջինս խոստանում է հնազանդվել՝ առաջարկելով իր պայմանը. ինքը խանի մոտ պատանդ պիտի ուղարկեր իր անդրանիկ որդուն՝ Գեորգիին, որի դիմաց խանը պետք է վերադարձներ թագուհուն և Դեմետրեին, ինչպես նաև իր դատաստանին հանձներ խոջա Ազիզին[27], որը Արղունի օգնականն էր հարկահանության գործում։

Առաջարկն արժանացավ Հուլավուի հավանությանը։ Գործին միջամտեց նաև ծագումով հայ Ենուք Արքունը[28]։

---

24 Նույն տեղում։

25 Լիխտ-այնկողմ էր անվանվում Լիխտից արևմուտք ընկած տարածքը՝ Արևմտյան Վրաստանը, իսկ Լիխտ-այնկողմ՝ Արևելյան Վրաստանը։

26 «Վրաց ժամանակագրություն», էջ 114—115։

27 Նույն տեղում, էջ 116։

28 Այս գործիչը նախնին էր հետագայում հայ-վրաց փոխհարաբերություններում նշանակալից դեր խաղացած, ծագումով զարաբաղցի,

Եվ ահա Ենուք Արքունն անձամբ գնաց թագավորի մոտ, վերցրեց Գեորգիին, որի հետ վերադարձավ Տփղիս։ Այդ ժամանակ մայրաքաղաքի կառավարիչն էր հայազգի Շադինը[29]։ Վրաց ժամանակագիրը մեծ գրվատանքով է խոսում Ենուք Արքունի մասին՝ նրան անվանելով «...պատվավոր ու արդար, հավատով Քրիստոսի խաչը երկրպագող մարդ»[30]։ Ենուքը, հարգված լինելով խանի կողմից, ամեն բան անում էր ապստամբներին օգնելու, նրանց փրկելու համար։ Վրաց ժամանակագիրը վկայում է, որ «նա էր երաշխավորում խանին, որ չվնասի Դավթին ու նրա որդի Գեորգիին»[31]։ Ենուք Արքունն ապստամբներին պաշտպանելու գործում հմտորեն օգտագործում էր Հուլավուի կնոջ՝ Տողուզ խաթունի քրիստոնյա լինելու հանգամանքը, և «...պատվով էր վերաբերվում Տողուզ-խաթունը Ենուք Արքունին, որը նույնպես քրիստոնյա էր»[32]։

Ենուքը Գեորգիին ներկայացրեց Արղունին, Տողուզ խաթունին, Հուլավուին, որոնք լավ ընդունելություն ցույց տվեցին թագաժառանգին։

Այնուամենայնիվ, Հուլավուն բավարարված չէր այդ բոլորով և պահանջում էր, որ Դավիթն անձամբ ներկայանա իրեն։ Այդ նպատակով նա մի նոր դեսպան առաքեց թագավորի մոտ։ Սակայն վերջինս մերժեց դեսպանին, պատճառաբանելով, որ իրեն չի հանձնվել Խոջա Ազիզը։ Դավթի վարքագիծն առաջ բերեց խանի խոր զայրույթը, մի բան, որից փորձեց օգտվել Արղունը։ Նա Հուլավուին խորհուրդ տվեց

Ենիկոլոպյանների, որոնք գործել են Վրաստանում։ Ենուք Արքունի հայ լինելու մասին հանգամանորեն տե՛ս «Վրաց ժամանակագրություն», ծանոթագրություններ, էջ 202։

29 Տե՛ս «Վրաց ժամանակագրություն», էջ 117։ Հ. Գ. Մարգարյանը գտնում է, որ սույն անձնավորությունը հայկական աղբյուրներում հիշատակվող Շահարադին, Շնորհավորն է (А. Г. Маргарян. К вопросу о личности и деятельности «некоего Шадина».—Кавказ и Византия, вып. 3. Ереван, 1982, с. 64—71).

30 «Վրաց ժամանակագրություն», էջ 117։

31 Նույն տեղում։

32 Նույն տեղում։

մահապատժի ենթարկել թագաժառանգ Գեորգիին և իրեն զորքով ուղարկել թագավորի դեմ։ Տեղեկանալով Արղունի խարդավանքներին՝ Ենուք Արքունը դիմեց Տողուզ խաթունի օգնությանը, և նրանք երկուսով ներկայացան խանին, բացատրեցին, որ նման քայլի հետևանքով Դավիթը կարող է անցնել Ոսկի Հորդայի խան Բերքայի կողմը, որի հետ Հուլավուն թշնամական հարաբերությունների մեջ էր։ Այդ բանախոսությունն այն արդյունքն ունեցավ, որ Հուլավուն հրաժարվեց Գեորգիին մահապատժի ենթարկելու մտադրությունից[33]։

Ապա Ենուք Արքունի ջանքերի շնորհիվ բավարարվեց նաև Դավիթ թագավորի պահանջը՝ նրա դատին հանձնվեց խոջա Ազիզը։ Վերջինիս, ինչպես նաև թագաժառանգներ Գեորգիի ու Դեմետրեի հետ միասին Ենուքը գնաց Տփղիս, դեսպաններ ուղարկեց թագավորի մոտ և հայտնեց իր ու թագաժառանգների դատաստան։ Դավթի ու Ենուք Արքունի հանդիպումը կայացավ Քվիշխեթի ու Սուրամի միջև, որտեղ Ենուքը թագավորին հանձնեց երկու թագաժառանգներին և խոջա Ազիզին։ Վերջինս թագավորի հրամանով մահապատժի ենթարկվեց[34]։

Ի վերջո, Ուլու Դավիթը Ենուք Արքունի հետ ուղևորվեց Պարսաստ՝ խանի մոտ։ Նրանց հետ էր նաև Սարգիս Ջաղելին։ Երբ նրանք ներկայացան Հուլավուին, վերջինս սկսեց հարցաքննել ապստամբելու պատճառների մասին։ Խանի և հարցաքննվողների միջև որպես թարգման հանդես էր գալիս հայազգի Սադուն Մահկանաբերդցին, որի մասին մեծ համակրանքով է խոսում ժամանակագիրը, նշելով որ նրան «...Ուլան շատ էր սիրում, մեծապես պատիվ տալիս, որովհետև խելացի մարդ էր, քաղցրալեզու, խանի մոտ ճարտասանությամբ հաջողակ»[35]։ Խանի հարցին Դավիթն ու Սարդիսը պատասխանեցին, որ ապստամբելու պատճառը եղել

---

33 Նույն տեղում, էջ 117—118։

34 Նույն տեղում, էջ 118—119։

35 Նույն տեղում, էջ 120։

են խոջա Աղիզի բռնություններն ու կամայականությունները։ Եվ երբ թվում էր, թե Հուլավուն թագավորին մահապատժի կենթարկի, լուր ստացվեց, որ հյուսիսից հարձակման է անցել Ոսկե Հորդայի Բերքա խանը[36]։ Անդրկովկասում իր դիրքերը չթուլացնելու համար իլխանը Դավթին մահապատժի չենթարկեց։

Իսկ Բերքան հարձակման էր անցել 1262 թ. ամռան վերջին[37]։

Հասկանալի է, որ Դավիթն ու նրա կողմնակիցները մինչ այդ արժանացել են Սադուն Մահկանաբերդցու, Ենուք Արքունի և վերջինիս միջնորդությամբ նաև Տողուլ խաթունի հովանավորությանը։ Վրաց ժամանակագրերը հիշատակում է, թե ինչպես հարցաքննության ընթացքում Սադունը զգալի ծառայություն է մատուցել թագավորին. «իսկ Սադունը բարվոք թարգմանում էր, ձևակերպում թագավորի ասածները, որովհետև թագավորը փոքր ինչ կարկամում էր. Սադուն Մահկանաբերդցին լավ էր ճարտասանում»[38]։

Այսպիսով, 1259—1261 թթ. հայ-վրացական ապստամբությունը դաժանորեն ճնշվեց։ Այս ապստամբության պարտության պատճառները և ունեցած հետևանքները փաստորեն նույնն էին, ինչ 1249 թվինը։

2. ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԹԱԹԱՐ-ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ XIII ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ XIV ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Դեռևս հայ-վրացական առաջին ապստամբությունից ի վեր Անդրկովկասի քաղաքական կյանքում գերիշխող դիրք գրավելու համար համառ պայքար էր ծավալվել Զաքարյանների և Օրբելյանների միջև։ 1250 թ. Ավագ Զաքարյանի մահից հետո Օրբելյանների դեմ պայքարը շարունակեց Սադուն

36 Նույն տեղում, էջ 119—121։

37 Рашид ад-Дин, III, с. 59.

38 «Վրաց ժամանակագրություն», էջ 120։

Արծրունին։ Բոլորովին պատահական չէ, որ ֆեոդալական այդ երկու տների ներկայացուցիչները հովանավորվում էին տիրապետողների կողմից։ Դրանով վերջիններս կենսագործում էին իրենց ավանդական քաղաքականությունը, ինչպես Կ. Մարքսն է գրել՝ «Դրդռել իրար դեմ իշխաններին, պահպանել անմիաբանություն նրանց մեջ, հավասարակշռել նրանց ուժերը. թույլ չտալ նրանցից որևէ մեկին ուժեղանալ,— այս բոլորը թաթարների ավանդական քաղաքականությունն է եղել»[39]։

1270 թ. Ուլու Դավիթ թագավորի մահից հետո գահն անցավ նրա մանկահասակ որդուն՝ Դեմետրեին (1270—1289 թթ.), իսկ խնամակալ նշանակվեց Սադուն Արծրունին։ Վերջինս այնքան էր ամրապնդել իր դիրքերը, որ փաստորեն գործել էր երկրի առաջին դեմքը[40]։ Դա, ինչ խոսք, ձեռնտու չէր Դեմետրեին, և պատահական չէ, որ 1281 թ. Սադունի մահից հետո նա երկրի ամբարեկությունը հանձնեց Տարսայիճ Օրբելյանին[41], Սադունի որդի Խութլու-Բուղային թողնելով միայն ամիրսպասալարությունը։

Թեև հայ-վրացական երկրորդ ապստամբությունը դաժանորեն ճնշվել էր, բայց այն անհետևանք չէր մնացել։ Տեղի ֆեոդալները և առհասարակ ժողովուրդը գիտակցում էին, որ միայն պայքարը կարող էր բարելավել ստեղծված ծանր կացությունը։ Ուստի այն շարունակվում էր նաև Հուլավուի հաջորդ Աբաղա խանի (1265—1282 թթ.) օրոք։ Եվ դա այնքան նշանակալից էր, որ ինչպես Անանուն ժամանակագիրն է վկայում, իլխանն անձամբ («...ի Վրաց տուն մտաւ և զՋալալ թաւրայն և զՌաթի պապան սպանին ի Քայիթուն լեառն որ է ի սահմանս Անոյ»[42]։

1282 թ. Աբաղա խանի մահից հետո Իլխանությունն իր ձեռքը վերցրեց նրա եղբայր Թագուդարը (1282—1284 թթ.),

---

39 *K. Marx*, Secret Diplomatic History of eighteenth Century, p. 38.

40 «Վրաց ժամանակագրություն», էջ 142։

41 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 426։

42 Անանուն ժամանակագրություն, էջ 25։

որն ընդունեց մահմեդականություն, անվանվեց Ահմեդ և քրիստոնյաների դեմ հալածանքներ սկսեց։ Բաղդադի դեմ պայքարի ելավ Աբաղայի որդին՝ Արղունը, որը, արյունահեղ մարտերից հետո գահընկեց անելով իր հորեղբորը, ստանձնեց գահը 1284-ին։

Արղունի (1284—1291 թթ.) տիրակալության շրջանում պետության ղեկը գտնվում էր «Չինքսան»[43] տիտղոսը կրող Բուղայի ձեռքում։ 1289 թ. մեծ էմիր Բուղան իր եղբոր՝ Բաղդադի կառավարիչ էմիր Արուկի հետ, իլխանի դեմ դավադրություն կազմակերպեց, որը, սակայն, հաջողություն չունեցավ, բացահայտվեց ու ճնշվեց[44]։ Դավադրությանը մասնակից լինելու մեղադրանքով մահապատժի ենթարկվեց նաև Դեմետրե Թագավորը[45], որը Բուղայի հետ լավ փոխհարաբերության մեջ էր[46]։

Խութլու-Բուղայի միջնորդությամբ Արղունը վրաց գահը հանձնեց Ռուսուդանի թոռանը՝ Վախթանգին։ Սակայն վերջինս շարդարացրեց ամիրապասալարի հույսերը և այդ էր պատճառը, որ երկու տարի էլ դեռ չէր անցել, երբ Վախթանգի և Խութլու-Բուղայի միջև թշնամություն առաջացավ։ Բայց ահա այդ սուր իրադրության պայմաններում էլ 1292 թ. վախճանվեց Վախթանգը, և գահը 1293 թ. անցավ Խութլու-Բուղայի առաջադրած թեկնածու, կառափնված Դեմետրեի որդի Դավթին։ Իլխանի նկատմամբ դավադրության մեջ մեղադրված և մահապատժի ենթարկված թագավորի որդուն գահը հանձնելն, ինչ խոսք, դուր չեկավ մոնղոլներին և այն դիտվեց իրրև ըմբոստության դրսևորում։

Եվ ահա, ինչպես արդեն նկատվել է, վրացական գահի շուրջ սկսած այս պայքարը փաստորեն ուղղված էր իլխան-

---

43 Ռ. Կ. Կիկնաձեն նշում է, որ այդ բառը մոնղոլները փոխ էին առել չինայիներից (չիներեն «ջինսյան»—«մինիստր» (տե՛ս Ռ. Կ. Кикнадзе, նշվ. աշխ., էջ 79)։

44 «Վրաց ժամանակագրություն», էջ 154։

45 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 430։

46 «Վրաց ժամանակագրություն», էջ 153։

ների վարած քաղաքականության դեմ[47] և շարժման գլուխ էր անցել Խութլու-Բուղան, որի համար էլ 1293 թ. նա մահապատժի ենթարկվեց։ Խաչատուր Կեչառեցին իր «Ողբում» նշում էր «գաւառաց երերումը» և 1293 թ. կառուցված Խութլու Բուղային.

«Տես ըզգաւառս ի յերերմանի ...
Զխութլու-Բուղէն յարեան հալածի
Զիւր աննըման պատկերն ի հողի.
Զարքայն չիշխեմ հիշել ըզվրացի
Զաղլաս երեսն ըզԴէմէտրէի»[48]։

Քեյղաթու իլխանի (1291—1295 թթ.) կառավարման ժամանակ Անդրկովկասում սկսված ապստամբական շարժումը շարունակվեց նաև Բայդուի (1295 թ.) և ապա նաև՝ Ղազան խանի օրոք։ Ռաշիդ էդ Դինը վկայում է, որ «վրացիները չեն ճանաչում Ղազան խանի իշխանությունը»[49]։

Ա. Դ. Հովհաննիսյանն իրավացիորեն գրում էր. «Թանկարժեք այս վկայությունը վերաբերում է ոչ միայն Վրաստանին, այլև Հայաստանին, ...Ռաշիդ ադ Դինի գրքում հայերը կամ նրանց ֆեոդալները, օրինակ՝ Մահկանաբերդի և Կայենի Սադուն Արծրունին, կամ սրա որդին՝ Հաղբատի իր որմնանկարներով հայտնի Խութլու-Բուղան, թյուրիմացաբար վրացիներ են անվանված՝ ելնելով, անշուշտ այն հանգամանքից, որ հայ այս իշխանները վրացադավան էին կամ վրաց թագավորի աթաբեկներ ու սպարապետներ»[50]։

Վրաց ժամանակագիրը նշում է, որ մոնղոլ զորավար Տաշարն ու օսերի թագավոր Փարեջանը այդ ընթացքում օժանդակում էին Դավթին[51], որը Խութլու-Բուղայի մահապատժից հետո էլ շարունակում էր իր հակամոնղոլական պայքարը։ Իսկ մոնղոլներից Թուքալի և Ղազանի միջև մղվող

---

47 Լ. Հ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 332։
48 Ա. Դ. Հովհաննիսյան, Ֆրիկը պատմաքննական լույսի տակ, էջ 51։
49 Рашид ад-Дин, III, էջ 271։
50 Ա. Դ. Հովհաննիսյան, Դրվագներ, Ա, էջ 253—254։
51 «Վրաց ժամանակագրություն», էջ 161։

պայքարում վրաց թագավորը պաշտպանում էր առաջինին[52]։

Եվ ահա Ղազան խանը որոշում է վճռական պայքար սկսել ապստամբների դեմ։ Նա նախ 1297 թ. հնազանդության կոչեց Դավիթ թագավորին։ Սակայն վերջինս ոչ միայն չգնաց դրան, այլև ամրանալով Ծիծիլեթում, փորձեց կապ հաստատել իլխանների հակառակորդ Ոսկե Հորդայի Թոխթա խանի հետ[53]։ Ղազան խանն իմանալով այդ մասին՝ մեծ զորքով ապստամբների դեմ ուղարկեց Խութլուշահ զորավարին։ Սակայն այս արշավանքը մոնղոլներին որոշակի հաջողություն չբերեց և իլխանը նույն զորավարին հաջորդ տարում դարձյալ ուղարկեց Դավիթ թագավորի դեմ[54]։ Խութլուշահն իր արշավանքի ընթացքում մեծ ավերածություններ ենթարկեց երկիրը, զգալի թվով մարդկանց սրի քաշեց[55]։ Սակայն դրությունը դրանով չփոխվեց։ Եվ ահա մոնղոլները, ի հակակշիռ Դավթի, գահը 1299 թ. հանձնեցին նրա կրտսեր եղբորը՝ Դեորդիին[56], իսկ 1302 թ. Վախթանգին։ Այնուհետև Խութլուշահը մի քանի անգամ ևս արշավեց ապստամբների դեմ[57]։

Այսպիսով, XIII դարի 90-ական թվականներին Վրաստանում լուրջ պայքար էր ծավալվել[58]։

---

52 Նույն տեղում, էջ 164—167։

53 Նույն տեղում, էջ 169։ Նկատենք, որ իլխանների դեմ իրենց պայքարի հարցում վրաց թագավորները միշտ էլ ձգտում էին օգտագործել նրանց հակառակորդ Ոսկե Հորդայի խանների և եգիպտական սուլթանների հովանավորությունը։ Այս դեպքերից որոշ ժամանակ անց էլ՝ 1316—1317 թթ. և 1320 թ., ըստ ալ Մարկիզիի, ան-Նուվեյրիի և ալ Այնիի Եգիպտական սուլթանն իր մոտ էր հրավիրել Ուղբեկի և Վրացական թագավորի դեսպաններին (Տե՛ս В. Г. Тизенгаузен. Сборник материалов I, էջ 169—170, 437, 520)։

54 «Վրաց ժամանակագրություն», էջ 168։

55 Նույն տեղում։

56 Նույն տեղում, էջ 168—170։

57 Նույն տեղում, էջ 170—174։

58 Памятник эриставов /Пер., исследование и примеч. С. С. Какабадзе. Тбилиси, 1979, с. 24—26. Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է նաև Հյուսիսային Հայաստանին։

Դավիթ Բագավորը մինչև կյանքի վերջը մոնղոլների հանդեպ փաստորեն մնաց ապստամբ[59]։

Հարկ է նշել, որ 90-ական թվականների սկզբներին սկիզբ առած վրաց-հայկական ապստամբական շարժման հետագա խորացման գործում կարևոր նշանակություն են ունեցել նաև քրիստոնյաների հանդեպ Ղազան խանի մեծ էմիր Նովրուզի սկսած հալածանքները[60]։

90-ական թվականներին ծավալված վրաց-հայկական ապստամբական շարժումները, նշել է Ա. Գ. Հովհաննիսյանը, ունեցան այն գրական նշանակությունը, որ Թավրիզում, Մարաղայում և այլուր սկսած եկեղեցիների ավերումը չտարածվեց Անդրկովկասի վրա[61]։ Ապա հեղինակը վկայակոչում է Ստեփանոս Օրբելյանին. «...բայց մեծ գլխաւորին ոչ թողացուցին քակել զեկեղեցիսն ակնածեալ ի Վրաց զօրացն»[62]։ Ա. Գ. Հովհաննիսյանի կարծիքը հիմնականում չմերժելով հանդերձ, պետք է նկատել, որ Անդրկովկասն, այնուամենայնիվ, զերծ չմնաց այդ ավերածություններից[63]։

XIII դարի 90-ական թվականներին և XIV դարի սկզբում՝ Իլխանության մեջ ճգնաժամի սրման ժամանակաշրջանում, վրաց-հայկական ապստամբական շարժումների[64]

Հարկ է նշել, որ օգտվելով Զաքարյան Հայաստանում և Վրաստանում տիրող խառն իրավիճակից, կրկին զլուխ բարձրացրին Բյուրքական ցեղերը, որոնք Աղատ-Մոսեի գլխավորությամբ ասպատակեցին, ավերեցին Բասենը, Տայքը՝ սրի քաշելով բնակչության մի զգալի մասը։ Սակայն շուտով նրանք մի շարք մարտերում պարտություն կրեցին հայ-վրացական զորքերից, որոնք դրավեցին Սպեր, Նորա ու Բարերդ քաղաքները և հաղթանակած վերադարձան այնտեղից («Վրաց ժամանակագրություն», էջ 175—179)։

59 Տե՛ս «Վրաց ժամանակագրություն», էջ 180—181։

60 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 472—473։

61 Ա. Գ. Հովհաննիսյան, Դրվագներ, Ա, էջ 255։

62 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 473։

63 Նույն տեղում։

64 Լ. Հ. Բարայանն առանձնացնում էր 1293—1297 թթ. ապստամբություն (տե՛ս Լ. Հ. Բարայան, նշվ. աշխ., էջ 574)։ Ա. Գ. Հովհաննիսյանի կարծիքով ապստամբությունը սկսել է 1291 թ. (Դրվագներ, Ա, էջ 255) և ըստ վրաց ժամանակագրի շարունակվել է ավելի քան մեկ տասնամյակ

կարևոր նշանակությունը կայանում էր նրանում, որ դրանք, ինչպես որ նախորդ ապստամբությունները, նպաստում էին Իլխանության թուլացմանը։ Այդ պայքարը հատկանշական էր առանձնապես իր քաղաքական ուղղվածությամբ։ Իսկ դա ուրվագծում էր օտարերկրյա ծանր լծի կործանման հեռանկարը։ Այդ հանգամանքը լավ էր հասկացել թաթար-մոնղոլական դաժան լծի դառնությունը ճաշակած, ժամանակի հայ նշանավոր բանաստեղծ Ֆրիկը։ Նա գրել է.

«Այս այլ չի մընայ հանցեղ,
Ու ֆալաքն ոչում կարևոր,
Զարնու և ձրգէ ի վայր՝
Չհամարէ զոչ սք թագաւոր»[65]։

Ֆրիկի վերոհիշյալ տողերում իր արտացոլումն է գտել հայ ժողովրդի լավատեսությունն իր ապագայի հանդեպ, այն, որ պիտի գա Հայրենիքի ազատագրման ժամանակը։ Այդ նպատակով նա դիմում էր ազգապահպանման ամեն մի միջոցի, օգտագործում էր ամենաչնչին իսկ թվացող հնարավորությունը։

(տե՛ս «Վրաց ժամանակագրություն», էջ 161—182)։ Ուստի, դինված այս շարժումները, ըստ երևույթին, ավելի ճիշտ կլիներ դիտել որպես մոնղոլական տիրապետության դեմ առաջացած ապստամբական շարժումներ։ Դրա օգտին են խոսում ապստամբական շարժումների վերաբերյալ և՛ վրաց ժամանակագրի վերոհիշյալ տեղեկությունները և՛ խաչատուր Կեչառեցու վկայությունը, և՛ Ռաշիդ էդ Դինի՝ նույնպես արդեն հիշատակված վկայությունը վրացիների (վրացիների և հայերի—Հ. Ս.)՝ Ղազան խանի իշխանությունը չճանաչելու մասին։ Իսկ վրաց ժամանակագրի այն տեղեկությունը, որ Ղազան խանի ժամանակ, ի հակադրություն Դավթի, Վախթանգին թագավոր դարձրին և որ հինգ տարի է, ինչ տևում էր երկրի ավերումը («Վրաց ժամանակագրություն», էջ 174—175), ասվածի հաստատումն է։ Հիշատակված 5 տարին տրամաբանական է, պետք է սկսել 1297 թ., երբ, ինչպես արդեն վերևում ասվեց, Ղազանը հնազանդության կոչեց Դավթին, մինչև 1302 թ. այն ժամանակ, երբ գահը հանձնվեց Վախթանգին։

65 Ա. Դ. Հովհաննիսյան, Ֆրիկը պատմաքննական լույսի տակ, էջ 70։

3. ՀՈՂՈՎՐԴԻ ՊԱՐՏԻԶԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԻԼԽԱՆԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Թաթար-մոնղոլական տիրապետության անցյալ տասնամյակներում, Իլխանության կազմավորումից հետո էլ, մինչև նրա կործանումը, հայ ժողովուրդը շարունակում էր պայքարը նկվոր բռնակալների տիրապետության դեմ։ Եվ քանի որ Հայաստանն այդ ժամանակ կազմում էր Իլխանության մի մասը, այդ իսկ պատճառով էլ նրա մղած պայքարը թաթար-մոնղոլական տիրապետության դեմ այս ժամանակաշրջանում կարելի է ուսումնասիրել հարևան երկրների պատմության հետ սերտ փոխկապակցվածության մեջ։ Հարցն այն է, որ, գտնվելով միևնույն պետության սահմաններում, կառավարվելով մեկ միասնական կենտրոնից և ենթարկվելով նույն օրենքներին, այդ երկրների պատմության մեջ, բնականաբար, պետք է լիներին, և իրոք կային, որոշակի ընդհանրություններ և՛ սոցիալ-տնտեսական, և՛ քաղաքական ոլորտներում։ Այդ իսկ տեսակետից բացառություն չի կազմում նաև նրանց ժողովուրդների՝ մոնղոլական լծի դեմ մղած ազատագրական պայքարի պատմությունը։ Պայքարի այն ձևերը, որ տարածում էին գտել Իլխանության կազմի մեջ մտնող երկրներից որևէ մեկում, ոչ մեծ տարբերություններով, հաճախ էլ նույնությամբ, դրսևորվում էին մյուս երկրներում։

Արդեն նշել ենք, որ հպատակ ժողովուրդներին զենքի ու պայքարի էին դրդում առաջին հերթին ծանր հարկերը։ Այդպես էր նաև Իլխանության շրջանում։

Սակայն, բացի ծանր հարկերից և այդ ընթացքում կիրառվող հարկադրման դաժան մեթոդներից ու ձևերից, հրպատակ ժողովուրդների զայրույթն ու դիմադրությունն էին առաջ բերում մոնղոլական տարբեր ուլուսների միջև մղված պատերազմները։ Անդրկովկասի պայմաններում դա արտահայտվեց 1262 թ. Իլխանության և Ոսկե Հորդայի միջև սկսած պատերազմի ժամանակ, որի ընթացքում երկրամասը վեր էր ածվել պատերազմական գործողությունների թատե-

բաբեմի, որը ենթակա էր կալող կողմերի հարվածներին ու պատճառած ավերածություններին[66]։

Բնակչության համար ծանր բեռ էին նաև Իլխանության կողմից ձեռնարկվող շինարարական-կառուցողական աշխատանքները, որոնք, ժամանակակից հեղինակների վկայությամբ, անպայման ծանրանում էին տեղական բնակչության ուսերին, անասելի բարդ կացության մեջ դնում նրան, առանձնապես գյուղացիությանը։ Կիրակոս Գանձակեցին և Վարդան Արևելցին վկայում են, թե ինչպես էր տառապում տեղական բնակչությունը Հուլավուի կողմից 60-ական թվականների առաջին կեսին Դաստան դաշտում ձեռնարկած ամառանոց-բնակատեղիի շինարարության ժամանակ[67]։ Ռաշիդ էդ Դինն իր հերթին տեղեկացնում է, որ Հուլավու, Արաղա, Արղուն, Քեյղաթու և Ղազան խանների օրոք Ալադաղում, Ուրմիայում, Առանում և այլ վայրերում շինարարական աշխատանքների պատճառով ամայացվում էին շատ շրջաններ և հարկադրաբար ուրիշ վայրերից այդտեղ էին քշվում մեծ թվով ռայաթներ (գյուղացիներ—Հ. Ս.)[68]։

Հայտնի է, որ մոնղոլների հիմնական զբաղմունքը անասնապահությունն էր, որի համար անհրաժեշտ էին ընդարձակ արոտավայրեր։ Դրանից էլ բխում էր նվաճված երկրներն ամայացնելու նրանց քաղաքականությունը։ Ըստ Մարկո Պոլոյի մոնղոլները իրենց անասնահոտերով թափառում էին Հայաստանով մեկ[69]։ Այդպես էր վիճակը Անդրկովկասում, Ռուսիայում, ամենուր։ Կ. Մարքսը նշել է, որ «...մոնղոլները վարվում էին իրենց արտադրության եղանակին համապատասխան, երբ ամայացնում էին Ռուսիան. անասնապահության գլխավոր պայմանն են մեծ անմարդաբնակ տարածությունները...»[70]։ Կ. Մարքսի սույն դրույթը վերաբերում է նաև Հայաստանին։

---

66 *В. Г. Тизенгаузен.* Сборник материалов, I, с. 74, 326, т. II, с. 92, 143; *«Վրաց ժամանակագրություն», էջ 126։*

67 Կիրակոս Գանձակեցի, *էջ 396—397, Վարդան Արևելցի, էջ 151։*

68 *Рашид ад-Дин,* III, с. 309; *նույնի,* Переписка, с. 281.

69 *Марко Поло,* с. 18.

70 *К. Маркс* и *Ф. Энгельс.* Соч., т. XII, с. 724.

Եվ պատահական չէ, որ Քոբայրի եկեղեցու վրա Շահընշահ Զաքարյանի որդի Գևորգի 1276 թ. փորագրած արձանագրության մեջ ժամանակաշրջանը բնութագրված է որպես «...մեծ նեղության մեջ (եղած) ժամանակ...»[71]։

XIII դարի վերջերից սոցիալ-տնտեսական դաժան շահագործմանը գումարվեցին նաև կրոնական հալածանքները։

Ահա այս բոլորի պատճառով էր, որ մարդիկ ստիպված թողնում-հեռանում էին հայրենի բնակավայրերից՝ դրանով արտահայտելով իրենց պասսիվ բողոքը։ Սակայն ոչ բոլորն էին այդպես վարվում։ Սրանց մի մասն էլ բարձրանում էր լեռներն ու անմատչելի վայրերը և այնտեղից պայքար մղում տիրող բռնության դեմ։

Հարկ է նշել, որ իլխանական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած պարտիզանական բնույթի պայքարը պատմագիտության կողմից դեռևս հատուկ ուսումնասիրության ու լուսաբանման չի ենթարկվել։ Դրան անդրադարձել է միայն Լ. Հ. Բաբայանը[72] առաջ քաշելով ենթադրություն Հայաստանում պայքարի հիշյալ ձևի առկայության հնարավորության վերաբերյալ։ Նա գրել է. «Մեզ թվում է հայկական աղբյուրներում, հատկապես, հիշատակարաններում, պահպանված այն վկայությունները, որտեղ ասվում է, թե քաղաքներից և գավառներից բնակչությունը մասսայական ձևով լքում էր հայրենի տունն ու տեղը, փախչում էր դեպի լեռները, կիրճերը, անանցանելի վայրերը, վերաբերում է հենց պայքարի մեջ հետաքրքրող ժամանակաշրջանում ընդունված այս ձևին»[73]։

Ցավոք, հարցի ուսումնասիրության համար սկզբնաղբյուրները քիչ նյութ են տալիս։ Սակայն, ինչպես ճիշտ կերպով նկատել է արևելագետ Ս. Ի. Ֆալինան, հենց այն, որ ո՛չ Ռաշիդ էդ Դինը, ո՛չ Համդուլլահ Ղազվինին և ո՛չ էլ

---

71 Պ. Մ. Մուրադյան, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Երևան, 1977 (այսուհետև՝ «Հայաստանի վրացերեն արձանագրությունները»), էջ 173, 175, 177։

72 Լ. Հ. Բաբայան, նշվ. աշխ., էջ 572—575։

73 Նույն տեղում, էջ 573։

վասսաֆը չեն կարողացել լռել ժողովրդական դժգոհության մասին, ինքնին արդեն նշանակալից է[74]։

Իլխանության սահմաններում, այդ թվում և Հայաստանում, ծավալված պարտիզանական բնույթի պայքարի մասին պատկերացում ենք կազմում հիմնականում Ռաշիդ էդ Դինի «Տարեգրության» և նամակագրության մեջ պահպանված որոշ անուղղակի տեղեկություններից։ Ղազան խանի արքունիքի սահեբ դիվան և առաջին վեզիր Ռաշիդ էդ Դինն, ինչ խոսք, իր վավերագրական երկերում ու գրագրություններում հանդես էր գալիս որպես խանի և առհասարակ Իլխանության շահերի պաշտպանը, նրա հիմքերն ամրապնդողը։ Առանց իր համակրանքներն ու հակակրանքները թաքցնելու, նա ամեն կերպ ջանում էր հակաիլխանական ամեն տեսակ շարժումների մասնակիցներին ներկայացնելու իբրև գողեր, ավազակներ, այլ կերպ ասած՝ հակահասարակական տարրեր։ Բայց և այնպես հենց այս հեղինակի նկարագրությունից էլ պարզ երևում է, որ դա գյուղացիների և մյուս շահագործվող տարրերի պայքարն է ընդդեմ օտար լծի։

Համաձայն Ռաշիդ էդ Դինի, լեռներում և անտառներում թաքնված ապստամբների ջոկատները, որոնց անդամներին նա անվանում է «գողեր», «ավազակներ», կազմված էին փախստական գյուղացիներից, քաղաքային բնակչության ստորին խավերից։ Գյուղական բնակիչները հանդես էին գալիս որպես ժողովրդական ընդվզողների ուղեկիցներ։ Ամեն մի բնակավայրում ապստամբներն ունեին իրենց բարեկամները, որոնք օգնում էին նրանց։ Գեղջավագների միջոցով գյուղերում ապստամբների համար պատրաստվում էին պարենամթերք և այն ամենը, ինչ որ անհրաժեշտ էր պայքարի ելածների համար։ Քաղաքներում ևս նրանք ունեին կողմնակիցներ, որոնց մոտ կարող էին ապաստան գտնել[75]։

Ապստամբներն ամենուրեք շրջապատված էին ժողովրդի համակրանքով։ Ամենուր, նրանց սիրով էին ընդունում,

---

74 *Л. И. Фалина.* Реформы Газан-хана.—Ученые записки Института востоковедения. М., 1959, т. XVII, с. 53.

75 *Рашид ад-Дин,* III, *էջ 268։*

թաքցնում, կերակրում և փառաբանում նրանց քաջագործությունները։ Ոչ ոք չէր ուզում մատնել ժողովրդական վրիժառուներին, և իշխանությունների համար շատ դժվար էր պայքարել նրանց դեմ։ Իսկ եթե նրանցից որևէ մեկին բռնում էին ու տանում մահապատժի, ապա ժողովուրդը զայրանում էր, թե ինչպես կարելի է գլխատել նման հերոսին[76]։ Սակայն պետությունը դաժան պայքար էր մղում այդ ջոկատների դեմ և երբեմն պատժիչ արշավանքներ ձեռնարկում դրանք վերացնելու համար։

Ապստամբներին հետապնդելու, քարավանային ճանապարհները հսկելու և պաշտպանելու նպատակով Ղազան խանը ստեղծել էր բազմաթիվ ջոկատներ, որոնց ծառայողները կոչվում էին թարխաններ[77]։

Դեռևս Ջարմաղանի 1236 թ. արշավանքների ժամանակ Երկրի բնակչության մի մասը ստիպված թողնում-հեռանում էր իր բնակավայրից և ամրանում լեռներում ու անտառներում։ Այսպես, վրաց ժամանակագիրը վկայում է. «...հերացիք, կախեցիք, սոմխիթացի-քարթլեցիք, մեսխերը, տայեցիք թորեցի-արտահան-կողացիք՝ բոլորը ներփակվեցին բերդերում ու լեռներում, կովկասյան [լեռների] անտառներում և ամրություններում...»[78]։

Երկիրը նվաճելուց հետո էլ ստեղծված ծանր կացության հետևանքով բնակիչները նույն կերպ էին վարվում։ 1248 թ. հիշատակարաններից մեկում կարդում ենք. «սակայն զյոլովս տեսաք աչաք մերովք ի նախաձայնեալ աղետից սուրբ նահատակին Ներսիսի. դեկեղեցիս մեր նսեմացեալ, զսեղանն սուրբ կործանեալ. զմատեանս աստուածային այրեցեալ և առ ոտն կոխեալ... զաշխարհս մեր անապատացեալ, զքաղաքս՝ բնակութիւն լեալ գազանաց, քանզի լցան լերինք և անապատք մեր անզգեծ փախստեիւք»[79]։

---

76 Նույն տեղում։

77 История Азербайджана, т. I, с. 184.

78 «Վրաց ժամանակագրություն», էջ 74։ (Ընդգծումն իմն է.—Հ. Ս.)։

79 Գ. Հովսեփյան, Հիշատակարանք, Ա, էջ 994, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 247։ (Ընդգծումը իմն է Հ. Ս.)։

Կոստանդին Բարձրբերդցի կաթողիկոսը հայ-վրացական առաջին ապստամբության առթիվ բուն Հայաստանի բնակչությանն ուղղված իր շրջաբերականում, հիշելով մոնղոլական արշավանքների հետևանքով երկրին հասած մեծ վնասները, նշում է. «և զայրս և զխորաձորս, որ լցեալ էին փախստականաւք»[80]։

Ռաշիդ էդ Դինը վկայում է, որ դաժան հարկահանության հետևանքով ռայաթի մեծ մասը թողնում-հեռանում էր հայրենի բնակավայրերից, և քաղաքներն ու գյուղերը դատարկվում էին[81]։ Ու թեև կառավարությունը փորձում էր այդ մարդկանց վերադարձնել իրենց բնակավայրերը, բայց դա նրան չէր հաջողվում[82]։ Ինչպես Ռաշիդ էդ Դինն է նշում, հեռացած մարդկանցից յուրաքանչյուրը մեծ արգահատանք էր տածում տիրության նկատմամբ[83]։ Ահա այդ մարդիկ էլ, ամրանալով անմատչելի վայրերում, պայքարել են օտար տիրապետողների դեմ։ Եվ դա ոչ այլ ինչ է, եթե ոչ պայքարի այն ձևը, որի մասին հիշատակում է Ղազան խանի սահեր դիվանն ու առաջին վեզիրը։

Ռաշիդ էդ Դինի ներկայացրած պայքարը նշանակալից թափ է ստացել հատկապես իլխանական տիրապետության հաստատումից հետո։ Եվ այդ ժամանակներից է, որ այն լուրջ անհանգստություն է պատճառել մոնղոլներին, որոնք և լուրջ պայքար են սկսել ապստամբների դեմ։

Նշանավոր պատմագիրը վկայում է, որ մոնղոլ-իրանական պետության իլխան Արղուն խանը 1275—1276 թթ. ձմեռն անց էր կացնում Առանում։ Մի օր նա իր թիկնապահների հետ որսի էր դուրս եկել։ Եվ երբ խանը գտնվում էր Շահուդից 5 փարսանգ (մոտ 25—30 կմ) հեռավորության վրա, զինված տեղացիների մի խումբ հարձակվում է խանի ու նրա մարդկանց վրա։ Տեղի է ունենում ընդհա-

---

80 Լ. Ս. Խաչիկյան, *Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը*, էջ 729։

81 *Рашид ад-Дин*, III, էջ 251։

82 Նույն տեղում։

83 Նույն տեղում։

ռում, որից հետո ըմբոստության մասնակիցներն, ըստ պատմիչի, թողնում-փախչում են։ Եվ, այնուամենայնիվ, Աբաղա խանը կարգադրում է գործողության վայրը բերել նահանգի աշխարհազորը՝ ըմբոստներին ջախջախելու համար։ Զինական այս նախապատրաստությունից անհանգրվատացած ըմբոստների հաքիմը (ղեկավարը) խանին է ներկայանում սրով ու պատանքով և հայտնում իր հնազանդությունը[84]։

Պարտիզանական բնույթի պայքարը, որ սկզբնավորվել էր մոնղոլական տիրապետության հենց սկզբնական շրջանում և զարգացել հետագա տասնամյակներում, առավել լայն տարածում գտավ հատկապես XIII դարի 80—90-ական թթ., երբ Իլխանությունը տնտեսական ճգնաժամի մեջ էր։ Ապըստամբական շարժումներն այնքան են տարածվում, որ ըստանում են ծավալուն պայքարի բնույթ։ Այդ մասին է վկայում նույն Ռաշիդ էդ Դինը։ Նրա նամակագրությունից ավելի որոշակի և պարզ է երևում, որ զինված ջոկատների անդամները ոչ թե «գողեր» են կամ «ավազակներ», այլ՝ զինված գյուղացիներ ու քաղաքացիներ, որոնք պայքար էին մղում տիրող բռնակալության դեմ։ Այդ իսկ պատճառով պետությունը դաժան պայքար էր մղում նրանց դեմ և երբեմն նույնիսկ ստիպված էր ռազմական խոշոր արշավանքներ ձեռնարկել։ Ռաշիդ էդ Դինի նամակներից մեկը տեղեկացնում է, որ պարտիզանական բնույթի շարժումները տարածված են եղել Կեսարիայում և նրա շրջակայքում, որի պատճառով իլխանական կառավարությունը մեծ զորքեր է ուղարկել ըմբոստներին հնազանդեցնելու[85]։

---

84 *Նույն տեղում, էջ 91։*

Մեզ հիմնավոր է թվում Լ. Հ. Բաբայանի և Բ. Ա. Ալուբարյանի այն տեսակետը, որ ըմբոստության մասնակիցները եղել են հայեր, քանզի պատմիչի վկայությամբ զինական բախումը տեղի է ունեցել ոչ քաղաքային վայրում, իսկ տվյալ ժամանակաշրջանում Առանի բնակչության և հատկապես՝ գյուղացիության, հիմնական էթնիկական տարրը հայությունն էր կազմում (հանգամանորեն տե՛ս Բ. Ա. Ալուբարյան, նշվ. աշխ., էջ 281—282)։

85 *Рашид ад-Дин.* Переписка, с. 196—197.

Իր որդիներից Խոջա Սադ էդ Դինին հասցեագրած նամակից տեղեկանում ենք, որ ապստամբական ջոկատներ են գործել նաև Եփրատի ավազանում։ Իլխանության սահերդիվանն իր որդուն, որը նշված տարածքի հաքիմն էր, հանձնարարում էր հնազանդեցնել լեռներում և անմատչելի բերդերում ամրացած ըմբոստների ջոկատներին[86]։

Արզինջանից (Երզնկայից—Հ. Ս.) մալիք Մուին էդ Դին Փարվանեի՝ Ռաշիդ էդ Դինին գրած նամակից տեղեկանում ենք, որ ապստամբական մեծաքանակ զորքեր են գործել Երզնկայի շրջակայքում և Ռումի այլ լեռնային շրջաններում։ Այդ իսկ պատճառով հսկայական բանակով Երզնկա է ժամանել մոնղոլ Տուկի Նոյոն զորավարը՝ լեռնային վայրերում գտնվող անհնազանդներին ջախջախելու նպատակով։ Ըստ նամակագրի՝ մոնղոլ զորահրամանատարը հաջողությամբ է կատարել իրեն հանձնարարված առաջադրանքը[87]։

Ռաշիդ էդ Դինի վկայությունից տեղեկանում ենք, որ 1301 թ., երբ Ղազան խանը գտնվում էր Առանում, այդ ժամանակ Լեզգիստանի էմիրները, որ վաղուց ի վեր խռովություններ ու ապստամբություններ էին բարձրացրել, թաքնվում էին անմատչելի լեռներում։ Սակայն նրանք շուտով հնազանդվեցին տիրակալին և ծառայության մտան նրա մոտ[88]։ Սույն վկայությունը ցույց է տալիս, որ տիրապետողները այս հարցում էլ լեզու գտան իրար հետ։ Սակայն ժողովրդական մասսաները շարունակում էին իրենց պայքարը։ Ռաշիդ էդ Դինը, շարունակելով իր վկայությունը, ավելացնում է, որ գողերի ու թափառաշրջիկների ամբոխը, որ

---

86 Նույն տեղում էջ, 89։

87 Նույն տեղում, էջ 307—308։

Պետք է հիշել, որ Ռումի կազմի մեջ էին մտնում Երզնկայից բացի նաև Սասունը, Սվազը (Սեբաստիա), Բարերդը, Խարբերդը և այլն (տե՛ս Рашид ад-Дин, Переписка, с. 268—269).

88 Рашид ад-Дин, III, с. 189.

Ադրբեջանից[89] փախել և պատսպարվել էր այդ լեռներում, բռնվում ու կոտորվում է[90]։

Ռաշիդ էդ Դինն իր որդիներից Վրաստանի հաքիմ Փիր-Սուլթանին հասցեագրած նամակում տեղեկացնում է, որ մի խումբ մոնղոլ էմիրներ այն ժամանակ, երբ Ղազան խանը պետք է արշավեր Շամ և Միսր[91], իրենց հերթին 120000-ոց զորքով ուղևորվեցին դեպի Վրաստան, «որպեսզի պատժեն անհնազանդներին, հաշվեհարդար տեսնեն ընդվզողների ջոկատների հետ, որոնք բնակություն էին հաստատել Սանսունի (Սասուն—Հ. Ս.), Աբխազիայի և Տրապիզոնի լեռների բարձունքներում և բլուրների լանջերում ու նրանց բոլորին կապել հնազանդության և նվիրվածության դատիով»[92]։

---

89 Հարկ է նկատի ունենալ, որ Ադրբեջան անվան տակ Ռաշիդ էդ Դինը նկատի ունի ոչ միայն Ատրպատականը, այլև Նախիջևանը, Ղարաբաղը և Հայաստանի որոշ այլ շրջաններ (տե՛ս Рашид ад-Дин, Переписка, էջ 269—270)։

90 Рашид ад-Дин, III, с. 189.

91 Ուսումնասիրող Ա. Ի. Ֆալինան գտնում է, որ խոսքը վերաբերում է Ղազան խանի առաջին սիրիական արշավանքին (1299—1300 թթ.) (Рашид ад-Дин, Переписка, с. 418).

92 Рашид ад-Дин. Переписка, с. 297—298. (ընդգծումը իմն է—Հ. Ս.)։ Թավրիզից դուրս եկած մոնղոլական մեծ բանակը շարժվելով դեպի Սասուն, Աբխազիա և Տրապիզոն, տեղերում ապստամբական ջոկատներին ջախջախելուց հետո խնդիր ուներ միանալու Ղազան խանին Հալեպում և մասնակցելու նրա արշավանքին (նույն տեղում, էջ 298)։

Ընթերցողի մոտ տեքստը կարդալիս կարող է այն տպավորությունը ստեղծվել, թե խոսքը հնարավոր է, որ Տրապիզոնի կայսրության կազմում գտնվող Սամսունի (Ամիսոս) մասին է։ Սակայն Ռաշիդ էդ Դինի նամակագրության քննական տեքստի հրատարակող Մուհամմադ Շաֆին գտնում է, որ խոսքը տվյալ դեպքում Սամսունի մասին չէ (տե՛ս رشيد الدين ' مكاتبات محمد شفيع ' لاهور ' سال ١٩٤٧

Իրոք հիշատակված Սանսունը պետք է հայկական Սասուն ընդունել և ոչ թե Սամսուն։ Դրա օգտին են խոսում հետևյալ հանգամանքները. ա) ժամանակի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում Սանսուն և Սասուն անվանումները համարժեք են (տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 245, 671)։ Իսկ ահա Սամսունը Սանսուն անունով չի հիշատակվում (տե՛ս С. П. Карпов. Трапезундская империя и западноевропейские государства в XII—XV вв., М., 1981). բ) Ռա-

Քանի որ մոնղոլական մեծաքանակ բանակը շարժվել է դեպի վերոհիշյալ շրջանները, կարելի է պատկերացում կազմել այն մեծ թափի մասին, որ ընդունել էր պարտիզանական բնույթի պայքարն այստեղ:

Ռաշիդ էդ Դինի՝ իր մյուս որդուն՝ Խոջա Իբրահիմին գրած մի այլ նամակից երևում է, թե ինչպիսի իրարանցում էր տիրում Իլխանության մեջ. «Քանի որ էմիրները և զինվորները, որոնք գտնվում են նորին մեծության ծառայության մեջ, ինչպես նաև մեր ծառաներն ու մեր որդիները ժամանակի մեծ մասը զբաղվում են երկրների և քաղաքների ենթադրեցմամբ, ամրոցների և շրջանների ազատագրմամբ և նրանց անհրաժեշտ է զենք, իսկ պահեստներում, ինչպես մենք իմացանք, զենք քիչ է մնացել, ապա դրա համար մենք սուրհանդակներ և դեսպաններ ուղարկեցինք տարբեր երկրների կողմերը և պահանջեցինք տարբեր տեսակների զենքեր»[93]:

Ռաշիդ էդ Դինն այս նամակում որոշակի որևէ երկիր չի նշում, այլ տալիս է Իլխանության մեջ տիրող ընդհանուր անհանգիստ դրությունը: Ելնելով վերը շարադրածից կարելի է ենթադրել, որ նման անհանգիստ վիճակ, վերոհիշյալ վայրերից բացի կարող էր լինել նաև Հայաստանի շատ շրջաններում:

Եզրափակելով կարող ենք նշել, որ, բացի հարևան վրացիների հետ բարձրացրած զինված ապստամբություններից, հայ ժողովուրդը մղում էր նաև պարտիզանական բնույթի պայքար, որը թեև նկատելի արդյունքների չէր հանգեցնում, այնուամենայնիվ ոգևորում էր ժողովրդին օտար նվաճողներին դիմադրելու և հավատ էր ներշնչում տեսական պայքարի հաջողության ու վերջնական հաղթանակի նկատմամբ:

շիդ էդ Դինի՝ վայրերի թվարկման նման հերթականությունը՝ Սանսուն, Ուրմագիա և ապա Տրապիզոն, նույնպես դեմ է Սանսուն—Սամսուն համարժեքությանը:

93 Рашид ад-Дин. Переписка, էջ 348—349 (ընդգծումն իմն է— Հ. Ս.): Իհարկե, այդ զենքերն անհրաժեշտ էին ոչ միայն ապստամբների դեմ պայքարելու, այլև նորանոր ռազմական գործողությունների համար:

4. ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐՆ ԸՆԴԴԵՄ ԹԱԹԱՐ-ՄՈՆՂՈԼ ԲՌՆԱԿԱԼՆԵՐԻ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԻ

Հայտնի է, որ դեռևս Ղազան խանի իշխանության գլուխ հանցնելուց առաջ, ինչպես իլխանական տիրապետության տակ գտնվող մյուս ժողովուրդները, այնպես էլ հայերը, ենթարկվում էին սոցիալ-տնտեսական դաժան շահագործման։

XIII դարի վերջերից քրիստոնյա ժողովուրդների առանց այդ էլ անմխիթար վիճակն առավել վատթարացավ՝ կապված կրոնական հալածանքների հետ, որոնք սկսեցին Ղազան խանի օրոք, երբ վերջինս իլխանական իշխանությունը պահպանելու և ամրապնդելու նպատակով մերձեցավ տեղական (պարսկական) ֆեոդալական վերնախավին և ընդունեց մահմեդականություն[94]։ Ժամանակակիցների ձեռագրերի հիշատակարաններում, ժամանակագրություններում բազմաթիվ վկայություններ ենք հանդիպում մոնղոլների կրոնական հալածանքների, եկեղեցիների ավերման և հոգևոր գործիչների նկատմամբ ծավալված հալածանքների մասին[95]։

Սակայն, որոշ ժամանակ անց Ղազան խանը քաղաքական որոշակի նկատառումներով, հատկապես՝ հայ-վրացական զինվորական ուժն օգտագործելու, ինչպես նաև Անդրկովկասում ծավալված ապստամբական շարժումներն ու դժգոհությունները կանխելու համար, մեղմացրեց իր հալածանքները[96]։

Քրիստոնյա ժողովուրդների հանդեպ կրոնական հալածանքները սաստկացան Ղազանի հաջորդ՝ Ուլջեյթու (1304—1316 թթ.), կամ ինչպես նա անվանվում էր նաև՝ Մուհամ-

---

94 Рашид ад-Дин, III, с. 164.

95 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 784, 787, 810, Մանր ժամանակագրություններ, Ա, էջ 106, Սամվել Անեցի, էջ 164։

96 Դա էր պատճառը, որ մի շարք գրիչներ սկսեցին գրվատանքով խոսել նրա մասին՝ նշելով, որ, իբր, նրա օրոք դրությունն այնքան էր բարելավվել, որ նրա մահը սպացին անգամ քրիստոնյաները (տե՛ս ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 23, 24, 26)։

մեղ Խուդաբանդա (-«ծառա Աստծու») խանի օրոք։ Պարսիկ պատմագիր Խոնդեմիրի տեղեկության համաձայն Չինգիզ խանի բոլոր հետնորդների մեջ նա առանձնանում էր մահմեդական կրոնի հաստատման ջանքերով[97]։

Վրաց ժամանակագրի վկայությամբ՝ կործանվում էին եկեղեցիները։ Նույնիսկ զորքեր էին ուղարկվում երկրամաս, որպեսզի ստիպեին քրիստոնյաներին հրաժարվելու իրենց հավատից և մահմեդականություն ընդունելու[98]։ Կրոնական հալածանքները շարունակվել են Ուլջեյթուի հաջորդ Աբու Սաիդի (1316—1335 թթ.) և վերջինիս հաջորդած մյուս իլխանների կառավարման օրոք, ընդհուպ մոնղոլ-իրանական պետության կործանումը՝ XIV դարի կեսը[99]։

Հայոց հավատի, ուրեմն և ազգային ինքնուրույնության դեմ թաթար-մոնղոլ բռնակալների ձեռնարկած այս դաժանությունները, հալածանքներն ու այլազան կամայականությունները չէին կարող անհետևանք մնալ։ Եվ բնական է, որ նախորդ տասնամյակներին ծայր առած զժգոհությունները ու ընդվզումները առավել բորբոքվեցին, ընդունեցին ավելի մեծ ծավալ։

Ստեփանոս Օրբելյանը վկայում է, որ դեռևս Ղազան խանի իշխանության գլուխ անցնելուց հետո քրիստոնեության և քրիստոնյաների դեմ ծավալված կատաղի պայքարի ժամանակաշրջանում Նախիջևանում բռնավորները, վախենալով վրաց (վրաց-հայկական) զորքերից, չհամարձակվեցին քարուքանդ անել եկեղեցիները[100]։ Ապա պատմիչը վկայում է, որ Սյունիքում էլ տեղացիները կաշառքի և նույնիսկ բռնի ուժի միջոցով թույլ չեն տվել եկեղեցիներին վնաս հասցնել[101]։ Այդ ժամանակ անվնաս մնացին նաև Երասխ գետի

---

97 Хондемир, с. 75.

98 «Վրաց ժամանակագրություն», էջ 184—185։

99 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 41, 51, 67—68, 154, 249, 255, 268, 325, 368 և այլն։

100 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, էջ 473։

101 Նույն տեղում։

մյուս կողմում գտնվող եկեղեցիները[102]։ Ժամանակի ձեռագիր հիշատակարանների տեղեկության համաձայն քրիստոնյաների մեծ մասը սկսած հալածանքների պայմաններում իրենց հույսը շարունակել է կապել իր հավատի հետ[103]։ Վրաց ժամանակագիրն էլ վկայում է, որ քրիստոնյաների դեմ ծավալված պայքարի պայմաններում, երբ նրանց դեմ նույնիսկ զինական մեծ ուժեր էին ուղարկվում, քրիստոնյաները շարունակում էին հավատարիմ մնալ իրենց հավատին և դիմադրում էին ուղարկված զինական ուժերին[104]։

Բայց և այնպես, չդիմանալով ստեղծված ծանր պայմաններին, բնակչության մի մասը ստիպված հավատափոխ էր լինում։ Ոմանք էլ, վաճառելով իրենց կայքը հեռանում էին իրենց բնակավայրից[105]։ Սակայն հայրենի վայրերից տեղական բնակչության հեռանալու փաստը հենց ինքնին տիրապետողների դեմ պայքարի յուրատեսակ արտահայտություն էր, պասսիվ մի բողոք, որը լայն տարածում էր գտել մոնղոլական տիրապետության շրջանում։ Անշուշտ, ժողովրդի՝ հայրենի բնակավայրերից հեռանալու փաստը կապված էր ոչ միայն կրոնական հալածանքների, այլև դաժան հարկային քաղաքականության հետ[106]։

Դեռևս XIII դարի վերջերից քրիստոնյաների վրա ջիզյա (այլադավանության հարկ) էր սահմանվել[107], որը գոյություն ուներ նաև Ղազանին հաջորդած Ուլջայթու իլխանի օրոք[108]։

Չնայած կիրառվող հալածանքներին, ժողովուրդն իր մեծամասնությամբ կերպասել է վճարել հարկը, հաճախ նաև

---

102 Նույն տեղում։

103 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 832։

104 «Վրաց ժամանակագրություն», էջ 184—186։

105 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 102։

106 Նույն տեղում, էջ 66, 92, Հ. Հ. Մանանդյան, Գ, էջ 327։

107 История Мар Ябалахи III и Рабан Саумы, с. 114. Համաձայն նույն աղբյուրի դա պարզապես ոչ թե հարկ էր, այլ իսկական կողոպուտ (նույն տեղում)։

108 Ժամանակագրություն (XI—XVIII դդ.), էջ 263, Խաչատուր Ջուղայեցի, Պատմութիւն պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 84, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 46։

դիմադրել, քան հավատափոխ լինել։ XIV դարի հիշատակարաններից մեկում կարդում ենք. «...Ընդունել զքրիստոնեայսն դառն տանջանօք նեղէին ուրանալ զքրիստոնական հաւատն՝ որ ի Հայր և յՈրդի և յամենասուրբ Հոգի։ Դարձեալ տեղի եւոուն՝ և եդին հարկս ի վերայ քրիստոնէից և յամենայն գլխոյ առնուին եօթն ութ դահեկան՝ յամենայն ամի, կամ ուրանալ զՔրիստոս, կամ տալ զդահեկանն՝ որ է խարաճ. զոր ոչ ճնազանդեցան Մաջանաւատքն և աւիրն խաբեբայ ազանդից նոցա, այլ յանձն առին տալ զհարկն յամենայն ամի։ Եւ մերայինս սեռս ի քրիստոսադաւան քրիստոնեայք մատանէին ի լուծ հարկացն և զոհութեամբ տային զինչս և զստացուածս վաճառէին և տային յամենայն ամի և յերկուտասանամեայ մանկանէ առնուին զհարկն. և բազումք տարագիրք եղեալ վասն հարկին։ Իսկ Քրիստոնէիցն տալով զայս ամենայն՝ անվրդով կացին ի հաւատս որ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս»[109]։

Հավատափոխության քաղաքականությունը չէր սահմանափակվում միայն դավանանքի համար հարկ սահմանելով։ Այն գնում էր ավելի հեռուն։ Մարդիկ, որոնք հավատարիմ էին մնում քրիստոնեությանը և վճարում դրա համար սահմանված հարկը, հաճախ ենթարկվում էին մարմնական պատժան տանջանքների, ծաղրուծանակի, ընդհուպ մահապատժի։ Ասորական աղբյուրների համաձայն՝ քրիստոնյաները սպանվում էին փողոցներում, հրապարակներում և այլուր։ Երիտասարդ աղջիկներին մերկացնում էին և տանում փողոցներով։ Սպանում էին նաև հղի կանանց[110]։ Սակայն, այդուհանդերձ, շատերը դիմադրում էին և հավատարիմ մնում իրենց դավանանքին։ Հիշատակարաններից մեկում կարդում ենք. «Իսկ անօրէն եւ անբարիշտ խարբանտայ խանն, իրրեւ ետես եթէ այնու ոչ կարաց յաղթել Քրիստոնէիցն, յաւել այլ եւս հարուածս ի վերայ քրիստոնէից. կամ զամենեսեան ներքինիս առնել, կամ զմի ակն հանել, կամ դառնալ ի

---

109 Հայոց նոր վկաները, էջ 121—122։ (Ընդգծումները իմն է—Հ. Ս.)։

110 История Мар Ябалахи III и Рабан Саумы, с. 127—128.

...կրօնն Մահմէտի, որոյ վասն բազումք մեռան, վասն անուանն Քրիստոսի»[111]։

Երբեմն պայքարի վերոհիշյալ պասսիվ մեթոդից ժողովուրդը անցել է ակտիվին՝ ընդվզել է օտարների դեմ, հրաժարվել պահանջվող հարկերը վճարելուց։ Հարկահանությունը նման դեպքերում վեր է ածվել փոքր ծավալի ռազմական գործողության, որին մասնակցել են մեծաքանակ զինվորներ։ 1318 թ. Հակոբ գրիչը Վարագա վանքից (Վասպուրական) վկայում է, որ հարկահանության նպատակով եկել էին «...ոմն անուն Աղլաղու, Սինթամուր և Հասան-թամուր ՌԳՃ. (1300) մարդով»[112]։ Նրանք, ովքեր ընդվզել են, հրաժարվել պահանջվող հարկը վճարելուց, բարձրացել են լեռնային անառիկ վայրերը, ամրացել այնտեղ, պատրաստվել դիմադրության։ Իսկ դա նշանակում է, որ որոշակի կապ գոյություն ունի տվյալ ժամանակաշրջանում թաթար-մոնղոլների կրոնական հալածանքների քաղաքականության և հայ ժողովրդի պարտիզանական բնույթի պայքարի միջև այն առումով, որ վերոհիշյալ հալածանքների հետևանքով հայրենի եկեղեցիները լքած-հեռացածների մի մասը լրացրել են իսլամական տիրապետության դեմ պայքարող ժողովրդական վրիժառուների շարքերը։ Հակադրվելով բռնի մահմեդականացմանը՝ ըմբոստները ոչ միայն հեռացել են լեռները ու զինված պայքար մղել, այլև հենց իրենք են ձերբակալել մահմեդականներին և, հավանաբար, որպես պատանդներ տարել իրենց հետ։ Այսպես, Երզնկայից մալիք Մուին էդ Դին Փարվանեի՝ Ռաշիդ էդ Դինին հասցեագրած նամակից պարզվում է, որ մոնղոլ Ցուկի նոյոնը զորավարը հսկայական բանակով գալով Երզնկա, այնուհետև շարժվել է լեռնային շրջաններում գտնվող ապստամբական մեծաքանակ ջոկատների դեմ, անհավատներին (իմա՝ քրիստոնյաներին— Հ. Ս.) ջախջախելու, մահմեդական գերիներին ազատելու և

---

111 Տե՛ս Ժամանակագրություն (XI—XVIII դդ.), էջ 263, նաչատուր Ջուղայեցի, էջ 84։ (Ընդգծումները իմն է—Հ. Ս.)։

112 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 188։

ջիղիան հավաքելու նպատակով։ Ըստ նամակագրի՝ Տուկի նոյոնն իր խնդիրը հաջողությամբ է կատարել, տեղի ունեցած մարտերում հաղթել ապատամբական ուժեղ ջոկատներին։ Դրանից հետո միայն ռայաթը (այստեղ՝ մահմեդական ազգաբնակչությունը) համարձակվել է վերադառնալ իր բնակավայրերը և զբաղվել աղոթքով[113]։

Երկրի հայրենասեր հոգևոր առաջնորդները, կանխատեսելով մահմեդականացման քաղաքականության կործանիչ հետևանքները, հավատի և ազգային ավանդների պաշտպանության նպատակով, իրենց ստեղծագործություններով, փաստորեն, պայքարել, ժողովրդին մղել են համառ դիմադրության ընդդեմ եկվոր բռնակալների, նրանց կրոնական անհանդուրժողականության ու ազգային հալածանքների։ Այդպիսին է Ստեփանոս Օրբելյանի «Ողբը»[114], որը գրվել է մոնղոլների՝ իսլամին հարելու և քրիստոնյաների հանդեպ հալածանքներ սկսելու ժամանակ։ Այն կարևոր նշանակություն ունի խնդրո առարկա ժամանակահատվածում հայ ժողովրդի հոգևոր որոնումների ու հայրենասիրական բաղձանքների ուսումնասիրության համար[115]։

Օրբելյանը և ի դեմս նրա՝ ժամանակի հայրենասեր հայ հոգևորականությունը, երազում էին երկրի անցած փառքի ու ազատության, նրա թագավորությունը վերականգնելու մասին։ Հայրենասիրական գաղափարներով տոգորված «Ողբը»,

---

113 *Рашид ад-Дин.* Переписка, с. 307—308.

Այստեղ հարկ չենք համարում հատուկ կանգ առնել հայ ժողովրդի մղած պարտիզանական բնույթի պայքարին, քանզի այդ հարցերը քննվել է ուսումնասիրության նախորդ էջերում։

114 Ստեփանոս Օրբելյան, *Ողբ։*

115 *Կ. Կոստանյանցը գտնում էր, որ Օրբելյանի «Ողբը» պատմական նշանակություն ունի և պատկերում է անցած ժամանակների ծանր ու անտանելի զրությունը (տե՛ս* Ստեփանոս Օրբելյան, *Ողբ, էջ 21)։ Պ. Մ. Խաչատրյանն իրավացիորեն գրել է, որ պատմական ողբերը, պատմությունն ուսումնասիրելու համար կարևոր սկզբնաղբյուրներ լինելով օժտված են վավերականությամբ և խստաշունչ պատմականությամբ (տե՛ս* Պ. Մ. Խաչատրյան, *Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ—ԺԷ դդ.), Երևան, 1969, էջ 37)։*

Արշակունյաց և Բագրատունյաց հարստությունների հիշատակումը նրանում[116], ասվածի վկայությունն է։ Եվ պատահական չէ, որ այն ավարտվում է լավատեսորեն, ապագայի հանդեպ հույսի զգացումով։

«Նա նորոգումն մեզ կրկին,
Որ բնաւ չյիշեմք զփառսն առաջին.
Կանգնել զաթոռ Բագատրին
Եւ զգաւազան պատրիարքին,
Ամենեցունց բոլոր իւր կարգին,
Ուղղել զդահոյս տիրականին.
Նոր զարդարել փառաւքն հին
Եւ առաւվել քան զոր էին.
Տայ մեզ զոչել ձայնիւ ուժգին.
Վերջինս է մեծ քան զառաջին»[117]։

Թաթար-մոնղոլ բռնակալների կողմից վարվող բռնի մահմեդականացման քաղաքականության պայմաններում Օրբելյանն ու նրա համախոհներն իրենց հույսը կապում էին հայ ժողովրդի քրիստոնեական հավատին անսասան մնալու հետ։

«Եւ մեր ամենս ի միասին
Տամք զոհութիւն մեր փրկողին
Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն»[118]։

Հայ հոգևորականության մեծամասնությունը հայրենասիրության դասեր էր տալիս ժողովրդին։ Եվ հենց նրա վաստակն էր նաև, որ Իլխանության կողմից պարտադրվող մահմեդականացումը հանդիպում էր հայ ժողովրդի դիմադրություններ։ Ըստ Ա. Գ. Հովհաննիսյանի՝ մոնղոլների բռնակալական քաղաքականության դաժանացումը բոլորովին էլ կապ չի ունեցել նրանց իսլամացման հետ։ «Հաճախ XIV դարի սկզբներից նկատելի դարձող մոնղոլ քաղաքականության հոսքը... ընթացքը վերագրվել է իսլամի ազդեցությանը. իբր՝

116 Ստեփանոս Օրբելյան, *Ողբ*, էջ 35։
117 Նույն տեղում, էջ 48։
118 Նույն տեղում։

ընդունելով մարգարեի կրոնը՝ էլխանները որդեգրեցին օտարադավանների դեմ ուղղված «իսլամի ռազմական ոգին» և կրոնական մոլեռանդությունը։

Մոնղոլների կրոնափոխությանը այսքան վճռական նշանակություն վերագրել,— շարունակում է Ա. Գ. Հովհաննիսյանը,— կնշանակեր անգիտանալ պատմական իրողությունները։

Ընդունելով Մահմեդի կրոնը՝ էլխանները և նրանց զորքերը չդադարեցին իրենց թշնամանքն ու պատերազմները մահմեդական հարևանների և առաջին հերթին՝ մահմեդականության ամրոց հանդիսացող Եգիպտոսի դեմ»[119]։

Իսկապես մահմեդականություն ընդունելուց հետո Հուլավյանները շարունակում էին իրենց վաղեմի պայքարը Եգիպտացիների դեմ և դա, ինչպես ճիշտ եզրակացնում էր Ա. Գ. Հովհաննիսյանը, բոլորովին էլ չի կարելի բացատրել կրոնական պատճառներով։ Դա պետության արտաքին քաղաքականությանը վերաբերող հարց էր[120], որը ոչ մի դեպքում չի բացառում այն հնարավորությունը, որ միևնույն դավանանքին պատկանող պետությունները թշնամաբար տրամադրված լինեն միմյանց հանդեպ։

Այդուհանդերձ, չպետք է թերագնահատել մոնղոլների կողմից մահմեդական կրոնի ընդունելու նշանակությունը վերոհիշյալ հարցում, քանի որ, ինչպես արդեն ցույց տրվեց, սկզբնաղբյուրները զգալի նյութ են տալիս այն մասին, որ իսլամն ընդունելուց հետո մոնղոլները դաժան հալածանքներ սկսեցին քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում և հայերի հանդեպ, որը հանդիպեց հայ ժողովրդի զանգվածային դիմադրությանը։

Էլխանության կողմից վարվող կրոնական հալածանքների ու բռնի դավանափոխման քաղաքականության դեմ հայ ժողովրդի պայքարն ուներ կարևոր նշանակություն։ Այն ոչ թե սովորական մի դիմադրություն էր՝ թելադրված քրիստո-

---

119 Ա. Գ. Հովհաննիսյան, Երկեր, Ա, էջ 405։

120 Տե՛ս նաև A. A. Алиев, նշվ. աշխ., էջ 300։

նական դավանանքին հարելուց, կրոնական զգացումներից ու պատկերացումներից, այլ բուն Հայաստանում, հայկական թագավորության բացակայության պայմաններում, դա փաստորեն հայ ժողովրդի պայքարն էր իր ազգային ինքնուրույնության պահպանման համար։

* * *

Ուլջեյթուին հաջորդած Աբու-Սայիդ բահադուր-խանը վերջին իլխանն էր, որի իշխանությունը ճանաչվում էր բովանդակ պետության սահմաններում։ Մոնղոլ-իրանական պետությունն անխուսափելիորեն գնում էր դեպի կործանում։ Դրա հիմնական պատճառներից մեկը սոցիալ-տնտեսական հակասությունների սրումն էր։ Ղազան խանի ռեֆորմները սոսկ դանդաղեցրին, բայց չկանխեցին այդ պրոցեսը։ Հայերեն ձեռագրերի XIV դարի հիշատակարաններում, ինչպես նաև պարսիկ պատմագիր Վասսաֆի երկում վկայություններ են պահպանվել տվյալ ժամանակաշրջանում հարկերի չափերի բարձրացման ու ապրանքային արտադրության անկման վերաբերյալ[121]։

Աբու-Սայիդ իլխանի կառավարման ժամանակ էր, որ գլուխ բարձրացրին կենտրոնախույս ուժերը։ Իսկ նրա մահից հետո այլևս իլխանի իշխանությունը չէր ճանաչվում ամբողջ երկրով մեկ։ Պետությունը երերում էր ֆեոդալական տարբեր խմբավորումների միջև մղվող արյունահեղ կռիվներից[122]։ Արդյունքը եղավ այն, որ 1335—1344 թվականների ընթացքում իրար հաջորդեցին 8 իլխաններ[123]։ Այս առումով ուշագրավ է ժամանակակիցներից Մելքիսեդեկ գրչի հետևյալ

---

121 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 46, 104, Татаро-монголы в Азии и Европе, с. 250.

122 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք, էջ 205, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 138—139, 164, 171, 215—216 և հետ., Սամվել Անեցի էջ 158, 167, 168, В. Г. Тизенгаузен. Сборник материалов, I, с. 338.

123 Հ. Հ. Մանանդյան, Գ, էջ 333։

յալ վկայությունը. «Գրեցաւ (հիշատակարանը—Հ. Ս.) ի թուականի հայոց ՉՁԷ (1338), ի ժամանակս որ ոչ զան կայր և ոչ սուլտան, և աշխարհս էր իբրև զնաւ յերերման»[124]։ Միջֆեոդալական տարբեր խմբավորումների պայքարը շարունակվեց մինչև 1353 թվականը, երբ Գուրգանում սպանվեց վերջին իլխան Տուղա Թիմուր խանը։ Այս թիվն էլ հենց Իլխանության վախճանն էր գծում։

Անդրադառնալով այս անցքերին, Կ. Մարքսը նշել է, որ իշխանների մեկը մյուսի դեմ և դերագույն կառավարիչների դեմ պատերազմների հետևանքով դինաստիաներից մեկը XIV դարի կեսին կործանվեց[125]։

Իլխանության կործանմանը ոչ պակաս չափով նպաստեց նաև նրա կազմում գտնվող բոլոր ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի, հերոսական պայքարը, որը նրանք մղում էին օտար տիրապետության ամբողջ ժամանակաշրջանում։

Թնջթար-մոնղոլական բռնատիրության դեմ հայ ժողովրդի մղած պայքարն ուներ կենսական նշանակություն։ Դրա շնորհիվ էր, որ հայ ժողովուրդը, բուն Հայաստանում, թեկուզ և զրկված իր թագավորությունից, կարողացավ պահպանել ազգային ինքնությունն ու մշակութային կերպարանքը։ Ճիշտ է, զգալի հարված էր հասցվել և՛ նրա բնակչությանը, և՛ մշակութային կյանքին, և՛ քաղաքական կացությանը, բայց և այնպես նա տոկաց, դիմացավ պատմական ճակատագրի հերթական դաժան փորձությանը։ Չնայած հայկական ֆեոդալական տներին զգալի հարված էր հասցվել, նրանցից շատերը քայքայվել էին կամ թուլացել, սակայն մի մասը գոյատևեց՝ մոխիրների տակ անթեղված կրակի պես պահպանելով հայ հին պետականության բեկորները, որոնց միշտ էլ պիտի փարեր ազատասիրաձգ հայ ժողովուրդը։

---

124 ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 306։

125 *К. Маркс.* Турция и византийская история до завоевания Константинополя.—Архив Маркса и Энгельса, т. VI, с. 169.

Սակայն հայ ժողովրդի ֆիզիկական ու հոգևոր գոյությունը սպառնացող դեռ շատ փորձություններ էին սպասում։ Իլխանության կործանումից հետո Հայաստանի տարածքը վերածվեց Ջոբանյանների և Ջելայիրյանների ասպատակությունների թատերաբեմի։ Մոնղոլական այդ երկու խմբավորումների քաղաքականության հետևանքով ուժեղ հարված հասցվեց տեղական ֆեոդալական տներին։ Վիճակը պակաս ծանր չէր լինելու Թիմուրի ավերիչ արշավանքների և ապա նաև թուրքմենական ցեղերի ասպատակությունների ու նվաճումների շրջանում։ Եվ եթե ազգային ու մշակութային սեփական կերպարը պահպանելու համար հայ ժողովրդի գործադրած անօրինակ ջանքերն այս պատմաշրջանում ևս ունեցան հաջողություն, ապա դրա մեջ անշուշտ կարևոր դեր ու նշանակություն ունեցան թաթար-մոնղոլ նվաճողների դեմ մղած պայքարի փորձն ու պատմական դասերը։

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

XIII—XIV դարերը կազմում են հայ ժողովրդի պատմության կարևոր փուլերից մեկը։ Դա անցումային մի շրջան էր զարգացած ֆեոդալական հարաբերություններից դեպի ֆեոդալիզմի աստիճանական քայքայումն ու իշխանական տների մանրացումը կամ փոշիացումը։ Այս շրջանի էական առանձնահատկությունները՝ քաղաքական անկախության կորուստը, տնտեսական ու մշակութային կյանքի անկումը, հիմնականում հետևանք էին թաթար-մոնղոլական ավերիչ արշավանքների, ապա հաստատված տիրապետության, որը տևեց ավելի քան մեկ հարյուրամյակ (1220—1353 թթ.)։

Թաթար-մոնղոլական դժնդակ տիրապետության ժամանակաշրջանը ոչ միայն կասեցրեց մինչ այդ Հայաստանում հաջողությամբ ընթացող քաղաքական-տնտեսական և մշակութային վերելքը, այլև պայմանավորեց երկրում ֆեոդալական պարզունակ հարաբերությունների հաստատումն ու բազմադարյան քաղաքական-տնտեսական և մշակութային հետագա դեգրադացիան։

Զաքարյան իշխանապետների ջանքերով վերականգնված և հզորացած հայկական իշխանությունները, Վրաց թագավորության ուժերի հետ դաշնակցած, համառ գոտեմարտի բռնվեցին ամենուր և ամենքին ահաբեկած ահեղ թշնամու հետ։

Ջեբեյի և Սուբեդեյի հրամանատարությամբ մոնղոլների ձեռնարկած արշավանքը (1220—1224 թթ.) կրում էր հետախուզական բնույթ և նախնական քայլն էր Անդրկովկասի ու հարևան երկրների հետագա նվաճման գործում։ Հայ-վրացական ուժերի պայքարը թաթար-մոնղոլական վե-

բոհիշյալ զորամիավորման դեմ, այդ ընթացքում տեղի ունեցած չորս ճակատամարտերը՝ (1220 թ. դեկտեմբերի վերջին Գուգարքի դաշտավայրային մասերից մեկում, 1221 թ. հունվարի սկզբին Բալիի մոտ, նույն ամսվա երկրորդ կեսին Տփղիսի շրջակայքում և դեկտեմբերի կեսերին Կոտման գետի ափին, որից քիչ հեռու էր Խունանի դաշտավայրը) ցույց տվեցին, որ ահեղ թշնամու դեմ միայնակ պայքարելը գրեթե անհնար է, որ անհրաժեշտ է համախմբել ոչ միայն Անդրկովկասի, այլև բովանդակ Առաջավոր Ասիայի ուժերը, մի բան, որ ֆեոդալական մասնատվածության պայմաններում անիրագործելի էր։

Մոնղոլների հեռանալուց հետո վերոհիշյալ տարածքում է՛լ ավելի խորացան հակասությունները։ Դրան գումարվեցին Խորեզմի սուլթան Ջալալ էդ Դինի 7-ամյա ասպատակությունները (1225—1231 թթ.), որոնք ավելի ջլատեցին հիշյալ երկրների ուժերը։ Եվ բնական է, որ Ջարմաղանի գլխավորությամբ մոնղոլների 1230 թ. կազմակերպած արշավանքի ժամանակ Անդրկովկասը, Հայաստանի մյուս շրջանները՝ գտնվում էին ավելի խղճուկ վիճակում, քան տասը տարի առաջ։ Ու թեև թշնամուն այս անգամ ևս առանձին դեպքերում ցույց տրվեց համառ դիմադրություն (Սղերդում, Բաղեշում և Բերկրիում՝ 1231 թ. աշնանը, Գանձակում՝ 1232 թ. վաղ գարնանը), բայց և այնպես դա առավել անկազմակերպ դիմադրություն էր, քան հակառակորդին ցույց էր տրվել նախորդ արշավանքի ժամանակ։

Ջարմաղանի սույն արշավանքով փաստորեն սկիզբ դրվեց Անդրկովկասի նվաճմանը։

Երկրամասում խորացող ֆեոդալական մասնատվածության պրոցեսն ու միջֆեոդալական հակասությունները պայմանավորեցին նրա համեմատաբար հեշտ նվաճումը մոնղոլների կողմից։ Լրացուցիչ օգնական ուժեր ստանալուց հետո վերջիններս Ջարմաղանի գլխավորությամբ 1236 թ. սկսեցին իրագործել իրենց հիմնական խնդիրը՝ երկրամասի վերջնական նվաճումը։ Այս անգամ էլ մոնղոլներին առանձին դեպքերում հերոսական դիմադրություն ցույց տրվեց (1236 թ.

Անիում, 1236—1238 թվականներին Խաչենում, 1242 թ. Կարինում և այլն)։ Դեռ ավելին. քոչվոր նվաճողները ոչ մի կերպ չկարողացան կոտրել ազատասեր սասունցիների դիմադրությունը և գրավել Հայաստանի այդ շրջանը։ Այդ բանին նրանք հասան միայն 50-ական թվականների երկրորդ կեսին՝ Հուլավուի արշավանքի ժամանակ։

Թաթար-մոնղոլ նվաճողների դեմ մղված պայքարում աչքի ընկան հատկապես ժողովրդական զանգվածները։ Դա, անշուշտ, չի նշանակում, թե երկրի իշխանական դասը չեզոք դիրք էր բռնել։ Սակայն սեփական թագավորության բացակայության, ապա և վրաց արքունիքի կողմից թշնամու դեմ միասնական ճակատ չկազմակերպելու պայմաններում, իշխանական զինված ջոկատների դիմադրությունը կրում էր դիպվածային և անկազմակերպ բնույթ։ Եվ հենց այդ ցաքուցրիվ, ոչ միասնական դիմադրությունն էլ պայմանավորեց երկրամասի համեմատաբար հեշտ նվաճումը թշնամու կողմից։

Թեև հայ ժողովուրդն ընկավ թաթար-մոնղոլ բռնակալների լծի տակ, սակայն հլու հնազանդ չկրեց այդ լուծը։ Օտարերկրա բռնակալների տիրապետության հենց սկզբնական շրջանից նա համառ պայքար ծավալեց իր անկախության և ազգային ու հոգևոր ինքնության համար։ Դրա ակնառու դրսևորումներն էին հայ և վրաց իշխանների 1247 թ. Կոխտասթավիի հավաքը՝ մոնղոլական տիրապետության դեմ ապստամբություն նախապատրաստելու նպատակով, 1248 թ. մոնղոլների հարկահանության դեմ երկրում առաջացած մեծ դժգոհությունն ու զինական ընդհարումները (հատկապես Խաչենում) և 1249 թ. Դավիթ Նարին թագավորի գլխավորությամբ բռնկված հայ-վրացական առաջին ապստամբությունը։

Թաթար-մոնղոլական բռնատիրության դեմ բռնկած ավելի հզոր ելույթ էր 1259—1261 թթ. հայ-վրացական ապըստամբությունը։ Այս երկրորդ ապստամբության հնչումից հետո, պարտված Ուլու Դավիթ թագավորի և նրա կողմնակիցների փրկության հարցում կարևոր դեր են խաղացել հայ

նշանավոր գործիչներ Ենուք Արքունն ու Սադուն Մահկանա-բերդցին։

Հայ-վրացական առաջին և երկրորդ ապստամբությունները նպատակ ունեին թոթափել օտարերկրյա դաժան լուծը և վերականգնել երկրի քաղաքական ինքնուրույնությունը։ Պայքարի այս ձևին՝ զինված ապստամբությանը, մասնակցում էին և՛ իշխանները, և՛ ժողովրդական զանգվածները։

XIII դարի 90-ական թվականներին և XIV դարի սկզբին՝ Իլխանության տնտեսական ճգնաժամի խորացման ժամանակաշրջանում, Անդրկովկասում ծավալված ապստամբական շարժումներին բնորոշ էր քաղաքական ուղղվածությունը։

Թաթար-մոնղոլական տիրակալների լծին ենթարկված ժողովուրդների մղած պայքարի ձևերից մեկը պարտիզանական բնույթի պայքարն էր։ Ժողովրդական վրիժառուները Սասունում, Երզնկայի շրջակայքում և Հայաստանի այլ վայրերում, ապավինելով անառիկ ու անմատչելի լեռներին, հերոսաբար մարտնչում էին երկրում հաստատված դաժան տիրապետության դեմ։ Պայքարի այս ձևը, սկիզբ առնելով մոնղոլական տիրապետության նախնական շրջանում, առավել խորացավ XIII դարի վերջին քառորդում և XIV դարի առաջին տասնամյակներում և շարունակվեց մինչև մոնղոլիրանական պետության կործանումը։ Իլխանական կառավարությունը ստիպված էր զգալի ուժ ու հոանդ ներդնել պարտիզանական բնույթի այդ շարժման դեմ պայքարելու համար։

1295 թ. Ղազան խանի օրոք մոնղոլների մահմեդականություն ընդունելու և քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ ծավալած կրոնական հալածանքների պայմաններում հայ ժողովուրդը համառ պայքարի ելավ իր հավատի պաշտպանության համար, որը դրսևորվում էր ինչպես պասիվ, այնպես էլ ակտիվ պայքարի ձևերով։ Այն, որ ընդհուպ մինչև Իլխանության կործանումը շարունակված այս պայքարին մասնակցում էին հայ հասարակայնության ամենատարբեր շերտերը, ուներ իր ծանրակշիռ հիմքը։ Դավանափոխության դեմ ժողովրդի կողմից մղվող պայքարը սոսկ քրիստոնեա-

կան դավանանքի հանդեպ ունեցած զգացումների ու պատկերացումների արտահայտություն չէր։ Հայկական թագավորության բացակայության պայմաններում կրոնն ու եկեղեցին հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման կարևոր միջոցներ էին։ Հավատափոխությունը դիտակցվում էր որպես ազգային ինքնության կորուստ։ Այդ պատճառով էլ ժողովրդի պայքարը հանուն իր հավատի նշանակում էր պայքար հանուն ազգային ինքնության պահպանման։

Ինչպես մոնղոլական տիրապետության տակ գտնվող մյուս ժողովուրդների, այնպես էլ հայերի մղած հերոսական պայքարը նպաստեց բռնի ուժով ստեղծված և ներքնապես այլասերված մոնղոլ-իրանական պետության անկմանը։

Թաթար-մոնղոլական արշավանքների և տիրապետության ժամանակաշրջանը հայ ժողովրդի պատմության ամենամռայլ էջերից է։ Այս առումով էլ առաջադիմական խոշոր երևույթ էր օտար բռնակալների դեմ մղված պայքարը։ Բազմաչարչար հայ ժողովուրդը դիմացավ դարը ճակատագրի այս փորձությանը ևս։ Նա տոկաց, մաքառեց և պահպանեց իր ֆիզիկական գոյությունը և ազգային դեմքը։ Հենց սա է նրա մղած հերոսական պայքարի պատմական կարևորագույն նշանակությունը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մարքսիզմ-լենինիզմի դասականների աշխատություններ:

Из рукописного наследства К. Маркса.—*Маркс К., Энгельс Ф.* Соч. 2-е изд., т. 12.

Маркс К. Будущие результаты британского владычества в Индии.—*Маркс К., Энгельс Ф.* Соч. 2-е изд., т. 9.

Маркс К. Морализирующая критика и критизирующая мораль.—*Маркс К., Энгельс Ф.* Соч. 2-е изд., т. 4.

Маркс К. От возникновения Хорезмского государства до появления в Малой Азии турок-османов.—Архив Маркса и Энгельса. Л., 1938, т. 5.

Маркс К. Турция и византийская история до завоевания Константинополя.—Архив Маркса и Энгельса. Л., 1939, т. 6.

Marx K. Secret Diplomatic History of the eighteenth Century, London, 1899.

Սկզբնաղբյուրներ

Անանուն Եդեսացի, ժամանակագրություն, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Լ. Տեր-Պետրոսյանի, Երևան, 1982 (օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, ասորական աղբյուրներ, 2)։

Անանուն ժամանակագրություն, առաջաբանով և ծանոթագրություններով. կազմեցին Հ. Մանվելյանը և Հ. Աբրահամյանը, Երևան, 1940։

Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Յակուտ ալ Համավի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շադդադ, կազմեց Հ. Թ. Նալբանդյանը, Երևան, 1965։

Դիվան հայ վիմագրության, պր. 1, Անի, կազմ. Հ. Ա. Օրբելի, Երևան, 1966, պր. 5, Արցախ, կազմ. Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1982, պր. 6, Իջևանի շրջան, կազմեցին Ս. Ա. Ավագյանը, Հ. Մ. Ջանփոլադյանը, Երևան, 1977։

Ժամանակագրություն (XI—XVIII դդ.), կազմեց Ն. Պողարյանը, Բանբեր Մատենադարանի, 1969, № 9։

Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կամախեցւոյ կամ Դարանաղցւոյ, հրատարակեց Մ. Նշանյան, յԵրուսաղէմ, 1915։

Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի ասորւոյ պատրիարքի, յԵրուսաղէմ, 1871։

Ժամանակագրություն Ստեփաննոսի Օրբելյանի, հրատ. համար պատրաստեց պատմ. գիտ. թեկն. Ա. Աբրահամյանը, Երևան, 1942։

Իբն ալ Ասիր, *թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Ն. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981 (օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, արաբական աղբյուրներ, 2)։*

Խաչատուր արեղայի Ջուղայեցւոյ Պատմութիւն պարսից, աշխատությամբ Բ. Աղավելյանց, Վաղարշապատ, 1905։

Լ. Ս. Խաչիկյան, *Կոստանդին Բարձրբերդցու խրատական թուղթը, առաջված Արևելյան Հայաստան, 1251 թ., Բանբեր Մատենադարանի, 1958, № 4։*

Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961։*

Հ. Հակոբյան, *Ուղեգրություններ, Երևան, 1932 (Հայաստանի և Անդրկովկասի պատմության սկզբնաղբյուրներ, հ. 1)։*

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984։

Հայոց նոր վկաներ (գիտ. հրատ.), կազմեցին Հ. Մանանդյանը և Հ. Անանյանը, *Վաղարշապատ, 1903։*

Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862։

Հերոդոտ պատմիչ, *թարգմաց, Վենետիկ, 1842։*

Գ. Յովսէփեան, *Յիշատակարանք ձեռագրաց, Անթիլիաս, 1951, հ. Ա։*

Մաղաքիայ արեղայի պատմութիւն վասն ազգին նեստորաց, Ս. Պր., 1870։

Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ, *Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, քաղվածքները վրացերեն բնագրերից հայերեն թարգմ., առաջաբանով, ներածությունով և ծանոթագրություններով, Երևան, 1936, հ. 2։*

Պ. Մ. Մուրադյան, *Հայաստանի վրացերեն արձանագրությունները, աղբյուրագիտական քննություն, Երևան, 1977։*

Յովհաննու Դարոնեցի, *Ժամանակագրութիւն հայոց, Ս. Պետերբուրգ, 1891։*

Սամուէլի Քահանայի Անեցւոյ, *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, առաջաբանով, համեմատությամբ, հավելվածներով և ծանոթագրություններով, Ա. Տ. Միքելյանի, Վաղարշապատ, 1893։*

Ստեփաննոս Օրպէլեանի, *Ողբ ի ս. Կաթուղիկէն, բնագիրը առաջաբանով և ծանոթագրություններով հրատ. Կ. Կոստանյանց, Թիֆլիս, 1885։*

Ստեփանոս Օրբելյան, *Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910։*

Ֆրիկ, *Բանաստեղծություններ, Երևան, 1941։*

Абул-Газы, Родословная история о татарах. СПб., 1768, т. 1—2.

Армянские источники о монголах/Пер. с древнеарм., предисл. и примеч. А. Г. Галстяна.—М., 1962.

Грузинские документы IX—XV вв. в собрании Ленингр. отд. ния Ин-та востоковедения АН СССР/Пер. и коммент. С. С. Какабадзе.—М., 1982.

Гусейнов Р. А. Сирийские источники XII—XIII вв. об Азербайджане.—Баку, 1960.

История Мар Ябалахи III и Рабан Саумы/Исследование, пер. с сирийск. и примеч. Н. В. Пигулевской.—М., 1958.

Какабадзе С. С. Грузинские документы института народов Азии АН СССР.—М., 1967.

Козин С. А. Сокровенное сказание. Монгольская хроника 1240 г.—М.—Л., 1941, т. I.

Лубсан Данзан. Алтан тобчи (Золотое сказание)/Пер. с монг., введ. с коммент. и прил. Н. П. Шастиной.—М., 1973.

Марко Поло. Путешествие/Пер. со старофранц. И. П. Минаева.—Л., 1940.

Материалы по истории Азербайджана из «Тарих-ал-Камиль» (Полного свода историй) Ибн-ал-Асира /Пер. П. Жузе.—Баку, 1940.

Материалы по истории туркмен и Туркмении (VII—XV вв.): Арабские и персидские источники/Пер. ред. С. Л. Волина и др.—М.—Л., 1939.

Мункуев Н. Ц. Китайский источник о первых монгольских ханах. Надгробная надпись на могиле Елюй Чу-цая/Пер. и исследование.—М., 1965.

Мурадян П. М. Армянская эпиграфика Грузии (Картли и Кахети).—Ереван, 1985.

Мэн-Да бей-лу (Полное описание монголо-татар)/Пер. с китайского, введ., коммент. и прил. Н. Ц. Мункуева.—М., 1975.

Новые армянские источники о монголах/Пер. с древнеарм. А. Галстяна.—М., 1960.

Памятник эриставов/Пер., исследование и примеч. С. С. Какабадзе.—Тбилиси, 1979.

После Марко Поло: Путешествия западных чужеземцев в страны трех Индий/Пер. с латинск. и старопортугальск. языков, введ. и примеч. Я. М. Света.—М., 1968.

Путешествия в восточные страны Плано Карпини и Рубрука/Ред., вступит. статья и примеч. Н. П. Шастиной.—М., 1957.

Рашид ад-Дин. Переписка /Пер., введ. и коммент. А. И. Фалиной.—М., 1971.

Рашид ад-Дин. Сборник летописей.—М.—Л., т. I, кн. 1, 1952/Пер. с персидск. Л. А. Хетагурова. Ред. и примеч. А. А. Семенова, т. 1, кн. 2, 1952/Пер. с персидск. О. И. Смирновой. Ред.

А. А. Семенова. Примеч. Б. И. Панкратова и О. И. Смирновой. т. 2, 1960/Пер. с персидск. Ю. П Верховского. Примеч. Ю. П. Верховского и Б. И. Панкратова. Ред. И. П. Петрушевский, т. 3, 1946/Пер. с персидск. А. К. Арендса. Под ред. А. А. Ромаскевича, Е. Э. Бертельса и А. Ю. Якубовского.

Тизенгаузен В. Г. Сборник материалов, относящихся к истории Золотой Орды. т. 1.—СПб., 1884; т. 2/Извлеч. из персид сочинений, собранные В. Г. Тизенгаузеном и С. Л. Волиным. Отв. ред. П. П. Иванов.—М.—Л., 1941.

Труды членов Российской духовной миссии в Пекине.—СПб., 1866, т. 4.

Хондемир. История монголов: от древнейших времен до Тамерлана/Пер. с персидск. В. Григорьева.—СПб., 1834.

Шариф-хан Ибн Шамсаддин Бидлиси. Шараф-наме/Пер. предисл., примеч. и прил. Е. И. Васильевой.—М., т. 1, 1967; т. 2, 1976.

Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави. Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны/Перс. с араб., предисл., коммент., примеч. и указ. Э. М. Бунятова.—Баку, 1973.

Языков Д. И. Собрание путешествий к татарам и другим восточным народам.—СПб., 1825.

ქართლის ცხოვრება, ტ. 1, თბ. 1955.

Bergeron P. Voyages faits principalement en Asie dans les XII, XIII, XIV et XV siècles. — A la Haye, 1735, t. 1—2.

Brosset M. Histoire de la Géorgie depuis l'Antiquité jusqu'au XIX siecle. SPb., 1re partie, 1re livraison, 1849. 1re partie, 2e livraison, 1850.

Histoire des campagnes de Gengis khan. Cheng-Wou Tsin—Teheng Lou. trad. et annotée par P. Pelliot et L. Hambis. Leiden, Brill, 1951, t. I.

Juvaini Ala-ad-Din Ata-Malik. The History of the world conqueror. Translated from the text of Mirza Muhammed Qazvini by John Andrew Boyle. Manchester, 1958, vol. 1—2.

Les Mongols d'après les historiens arméniens. Fragments trad. sur les textes originaux par E. Dulaurier, Paris, 1858.

Pelliot P. Histoire secrete des Mongols. Paris, 1949.

Simon de Saint-Quentin. Histoire des tartares. Publiée par J. Richard. Paris, 1965.

رشيد الدين، مكاتبات محمد شفيع، لاهور، سال ١٩٤٧

Գրականություն

Մ. Խ. Արեղյան, *Հայոց հին գրականության պատմություն*, Երևան, 1946, գիրք 2։

Դ. Ալբունյան, *Մոնղոլները և նրանց արշավանքները ԺԳ դարում*, Վաղարշապատ, 1913։

Գ. Ալիշան, *Այրարատ*, Վենետիկ, 1890։

Գ. Ալիշան, *Հայապատում*, Վենետիկ, 1901։

Գ. Ալիշան, *Շիրակ*, Վենետիկ, 1881։

Գ. Ալիշան, *Սիսական*, Վենետիկ, 1893։

Գ. Ալիշան, *Սիսուան*, Վենետիկ, 1885։

Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան*, Երևան, հ. 1, 1942, հ. 2, 1944, հ. 3, 1946, հ. 4, 1948, հ. 5, 1962։

Բ. Ն. Առաքելյան, *Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ.*, Երևան, հ. 1, 1958, հ. 2, 1964։

Մ. Թ. Ավդալբեգյան, *Խաչատուր Կեչառեցի։ XIII—XIV դդ.*, Երևան, 1958։

Լ. Հ. Բաբայան, *Ակնարկներ Հայաստանի XIV—XVIII դարերի պատմագրության*, Երևան, 1984։

Լ. Հ. Բաբայան, *Դրվագներ Հայաստանի զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանի պատմագրության (IX—XIII դարեր)*, Երևան, 1981։

Լ. Հ. Բաբայան, *Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII—XIV դարերում*, Երևան, 1964։

Լ. Հ. Բաբայան, *Հայաստանի ֆեոդալիզմի ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրությունը խորհրդահայ պատմագրության մեջ (Ուրվագծեր)*, Երևան, 1970։

Է. Մ. Բաղդասարյան, *Հովհաննես Երզնկացին և նրա խրատական արձակը*, Երևան, 1977։

Մ. Բարխուտարեանց, *Պատմութիւն Աղուանից*, Վաղարշապատ, 1902, հ. 1։

Ա. Գ. Գալստյան, *Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները*, ՊԲՀ, 1964, № 1։

Գ. Մ. Գրիգորյան, *Սյունիքը Օրբելյանների օրոք (XIII—XV դարեր)*, Երևան, 1981։

Մ. Կ. Զուլալյան, *Եվրոպացի հեղինակները հայերի և Հայաստանի մասին (XIII—XVI դդ.)։ Աղբյուրագիտական ակնարկ*, ՊԲՀ, 1985, № 2։

Լ. Ս. Խաչիկյան, *Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը*, Բանբեր մատենադարանի, 1969, № 9։

Հայ ժողովրդի պատմություն, Երևան, Երևանի պետ. համալսարանի հրատ., 1975։

Հայ ժողովրդի պատմություն, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1976, հ. 3։

Ա. Դ. Հովհաննիսյան, *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Երևան, 1957, գիրք 1։*

Ա. Դ. Հովհաննիսյան, *Ֆրիկը պատմաքննական լույսի տակ, Երևան, 1955։*

Դ. Յովսէփեան, *Խաղրակիանք կամ Պառշանք հայոց պատմութեան մէջ, հ. 2, Անթիլիաս, 1969։*

Հ. Հ. Մանանդյան, *Նոր տվյալներ մոնղոլների կողմից Գանձակի ավերման մասին. Հ. Հ. Մանանդյան, Երկեր, հ. Դ, Երևան, 1977։*

Հ. Հ. Մանանդյան, *Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Դ. Հ. Հ. Մանանդյան, Երկեր, հ. Դ։*

Հ. Դ. Մարգարյան, *Դառնիի ճակատամարտի պատմության շուրջ, ԼՀԳ, 1982, № 3։*

Հ. Դ. Մարգարյան, *Ջալալ էդ Դինի Հայաստան և Վրաստան կատարած արշավանքների պատմության շուրջ, ՊԲՀ, 1981, № 4։*

Ա. Շահնազարյան, *Վահրամյանների իշխանությունը մոնղոլների հետախուզական արշավանքի և Ջալալ էդ Դինի նվաճումների ժամանակ, ԼՀԳ, 1980, № 6։*

Ա. Շահնազարյան, *Վահրամյանների իշխանությունը, մոնղոլների տիրապետության օրոք, ԼՀԳ, 1983, № 12։*

Մ. Չամչեան, *Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1786, հ. 3։*

Ս. Պ. Պողոսյան, *Հայ ժողովրդի պատմություն, Երևան 1965, հ. 2։*

Հ. Ս. Ստեփանյան, *Վրաց-հայկական երկրորդ ապստամբությունը մոնղոլական տիրապետության դեմ, Բանբեր Երևանի համալսարանի (հասարակական գիտություններ), 1986, № 2։.*

Հ. Ս. Ստեփանյան, *Վրաց-հայկական ընդվզումները թաթար-մոնղոլական բռնատիրության դեմ 1247—1249 թթ., ՊԲՀ, 1986, № 1։*

Բ. Ա. Ուլուբաբյան, *Գանձասար, Երևան, 1981։*

Բ. Ա. Ուլուբաբյան, *Խաչենի իշխանությունը X—XVI դարերում, Երևան, 1975։*

Բ. Ա. Ուլուբաբյան, *Կիրակոս Գանձակեցու անձնական հուշարձանը, Սովետական գրականություն, 1977, № 7։*

Յ. Քիւրտեան, *Երիզա եւ Եկեղեաց գաւառ, Պատմական համագրութիւն, հ. Ա, Վենետիկ, 1953։*

Մ. Օրմանեան, *Ազգապատում, 1913, պր. II։*

Алиев А. А. Реформаторские воззрения и общность взглядов по экономическим вопросам между Низам ал-мульком, Рашид ад-дином и Мухаммедом Нахчивани (XI—XIV вв.).—Известия АН Азербайджанской ССР, серия истории философии и права, 1971, № 2.

Алиев А. А. Социально-экономическая и политическая история Азербайджана XIII—XIV вв.—Баку, 1956.

Ашурбейли С. Государство Ширваншахов (VI—XVI вв.).—Баку, 1983.

Бартольд В. В. Еще о христианстве в Средней Азии.—Бартольд В. В., т. 2, ч. 2. М., 1964.

Бартольд В. В. Место прикаспийских областей в истории мусульманского мира.—Бартольд В. В. Соч., т. 2, ч. 1, М., 1963.

Бартольд В. В. Монгольское завоевание.—Бартольд В. В. Соч., т. 2, ч. 1, М., 1963.

Бартольд В. В. Монгольское завоевание и его влияние на персидскую культуру.—Бартольд В. В. Соч., т. VI, М., 1966.

Бартольд В. В. Мусульманские известия о Чингизидах-христианах.—Бартольд В. В. Соч., т. 2, ч. 2, М., 1964.

Бартольд В. В. Персидская надпись на стене анийской мечети Мануче.—Бартольд В. В. Соч., т. IV, М., 1966.

Бартольд В. В. Работы по истории и филологии тюркских и монгольских народов.—Бартольд В. В. Соч., т. V, М., 1968.

Бартольд В. В. Рецензия на книгу: *E. Blochet.* Introduction à l'histoire des Mongols de Fadl Allah Rashid ed-Din. — *Бартольд В. В.* Соч., т. VII, М., 1971.

Бартольд В. В. Статьи из «Энциклопедии ислама».—Бартольд В. В. Соч., т. VII, М., 1971.

Бартольд В. В. Туркестан в эпоху монгольского нашествия.—Бартольд В. В. Соч., т. 1, М., 1963.

Бартольд В. В. Туркестанский край в XIII веке.—Бартольд В. В. Соч., т. III, М., 1965.

Бердзенишвили Н. А. Очерк из истории развития феодальных отношений в Грузии (XIII—XVI вв.)—Тбилиси, 1938.

Березин И. Библиотека восточных историков.—Казань, 1849, т. 1.

Березин И. Внутреннее устройство Золотой Орды (По ханским ярлыкам).—СПб., 1850.

Березин И. Нашествие Батыя на Россию.—Журнал Мин. Нар. Просв. 1855, № 3.

Березин И. Первое нашествие монголов на Россию.—Журнал Мин. Нар. Просв. 1853, № 9.

Бира Ш. Монгольская историография (XIII—XVII вв.).—М., 1978.

Босворт К. Э. Мусульманские династии/Пер. с англ. и примеч. П. А. Грязневича.—М., 1971.

Буниятов З. М. Государство атабеков Азербайджана (1136—1225 годы).—Баку, 1978.

Владимирцов Б. Я. Общественный строй монголов: Монгольский кочевой феодализм.—Л., 1934.

Вяткин Р. В., Тихвинский С. Л. О некоторых вопросах исторической науки в КНР.—ВИ, 1963, № 10.

Гейдаров М. Х. К вопросу о значении торговли и торговых путей Азербайджана в XIII—XIV веках.—Изв. АН АзССР. Серия истории, философии и права, 1981, № 3.

Гордлевский В. А. Государство сельджукидов Малой Азии.—М.—Л., 1941.

Греков Б. Д., Якубовский А. Ю. Золотая Орда и ее падение.—М.—Л., 1950.

Грузия. Краткий исторический очерк.—Тбилиси, 1966.

Далай Ч. Монголия в XIII—XIV веках/Пер. с монг. Ч. Далай.—М., 1983.

Иванин М. И. О военном искусстве и завоеваниях монголо-татар и средне-азиатских народов при Чингис-хане и Тамерлане.—СПб., 1875.

История Азербайджана/Под ред. И. А. Гусейнова и др.—Баку, 1958, т. 1.

История Азербайджана: Краткий очерк (с древнейших времен до XIX в.).—Баку, 1941.

История Грузии/Под ред. Н. А. Бердзенишвили и др.—Тбилиси, 1962, т. 1.

История Ирана с древнейших времен до конца XVIII века.—Л., 1958.

История Монгольской Народной Республики/Ш. Нацдорж и др.; гл. ред.: А. П. Окладников, Ш. Бира и др.—М., 1983.

Ишжамц Н. Образование единого монгольского государства и установление феодализма в Монголии (XI—середина XIII вв.): Автореф. Дис.... док. ист. наук.—М., 1972.

Каргалов В. В. Конец ордынского ига.—М., 1980.

Каргалов В. В. Монголо-татарское нашествие на Русь XIII в.—М., 1960.

Карпов С. П. Трапезундская империя и западноевропейские государства в XIII—XV вв.—М., 1981.

Кикнадзе Р. К. Города и городская жизнь в государстве Хулагуидов: Автореф. дис.... канд. ист. наук.—Тбилиси, 1956.

Кикнадзе Р. К. Очерки по источниковедению истории Грузии: Парсадан Горгиджанидзе и «Картлис цховреба».—Тбилиси, 1980.

Кычанов Е. И. Жизнь Темучжина, думавшего покорить мир.—М., 1973.

Лэн-Пуль С. Мусульманские династии/Пер. с англ. с примеч. и доп. В. В. Бартольд.—СПб., 1899.

Майский И. М. Чингис-хан.—В И., 1962, № 5.

Маргарян А. Г. К вопросу о личности и деятельности «некоего Шадина».—В кн.: Кавказ и Византия: Сб. статей. Ереван, 1982, вып. 3.

Марр Н. Аркаун, монгольское название христиан. СПб., 1905.

Мелиа Ш. А. История Грузии (Краткий обзор).—Тбилиси, 1968.

Микаелян Г. Г. История Киликийского армянского государства.—Ереван, 1952.

Мункуев Н. Ц. Некоторые важные китайские источники по истории Монголии XIII века. Переводы и исследования: Автореф. Дис.... канд. ист. наук.—М., 1962.

Мункуев Н. Ц. Некоторые проблемы истории монголов XIII в. по новым материалам. Исследование южносунских источников: Автореф. Дис.... док. ист. наук.—М., 1970.

Мункуев Н. Ц. Основные китайские источники по истории Монголии (XIII—XIV вв.).—В кн.: Современная историография стран зарубежного Востока.—М., 1963, вып. 1.

Мусхелишвили Д. Л. Из исторической географии Восточной Грузии.—Тбилиси, 1982.

Насонов А. И. Монголы и Русь.—М.—Л., 1940.

Новосельцев А. П., Пашуто В. Т., Черепнин Л. В. Пути развития феодализма (Закавказье, Средняя Азия, Русь, Прибалтика).—М., 1972.

Орбели И. А. Асан Джалал князь Хаченский. Избранные труды.—Ереван, 1963.

Очерки из истории туркменского народа и Туркменистана в VIII—XIX вв./Под ред. А. Ю. Якубовского.—Ашхабад, 1954.

Очерки истории СССР: Период феодализма (IX—XIII вв.).—М., 1953, ч. 1—2.

Пашуто В. Т. Героическая борьба русского народа за независимость (XIII век).—М., 1956.

Петрушевский И. П. Земледелие и аграрные отношения в Иране XIII—XIV веков.—М.—Л., 1960.

Петрушевский И. П. Из героической борьбы азербайджанского народа в XIII—XIV веках.—Баку, 1941.

Петрушевский И. П. К вопросу о прикреплении крестьян к земле в Иране в эпоху монгольского владычества.—ВИ, 1947, № 4.

Петрушевский И. П. Новый персидский источник по истории монгольского нашествия.—ВИ, 1946, № 11—12.

Петрушевский И. П. Феодальное хозяйство Рашид ад-Дина.—ВИ, 1951, № 4.

Пиршев В. З. Азербайджан в период падения государства Хулагуидов (1316—1360 гг.): Автореф. Дис.... канд. ист. наук.—Баку, 1972.

Полиевктов М. А. Европейские путешественники XIII—XVIII вв., по Кавказу.—Тбилиси, 1935.

Сихарулидзе Ю. М. Борьба грузинского народа против татаро-монгольского владычества: Автореф. Дис.... док. ист. наук.—Тбилиси, 1969.

Степанян Г. А. Борьба армянского народа против татаро-монгольского ига. Автореф. дис. канд. ист. наук.—Ереван, 1986.

Татаро-монголы в Азии и Европе: Сб. статей.—2-е изд., перераб. и доп.—М., 1977.

Фалина А. И. Государство ильханов как этап развития феодализма на Ближнем и Среднем Востоке: Автореф. Дис... канд. ист. наук.—М., 1951.

Фалина А. И. Изучение Рашид ад-Дина в СССР.—М., 1960.

Фалина А. И. Реформы Газан-хана.—Учен. зап. Ин-та востоковедения. М., 1959, т. 17.

Федоров-Давыдов Г. А. Общественный строй Золотой Орды.—М., 1973.

Шенгелия Н. Н. Участие армяно-грузинских войск в Коседагской битве.—В кн.: Проблемы истории Турции. М., 1978.

მაისურაძე გ. ქართველი და სომეხი ძალებიის ურთიერთობა XIII—XVIII საუკუნეებში, თბ., 1982.

საქართველოს ისტორიის ნარკვევები, ტ. III თბ. 1979.

ჯავახიშვილი ივ. ქართველი ერის ისტორია, შიბნი მესამე, თბ. 1986.

Brosset M. Additions et éclaircissements à l'histoire de la Géorgie, depuis l'antiquité jusqu'en 1469 de J.-C. SPb., 1851.

Brosset M. Les ruines d'Ani. SPb., 1861, pt. 2.

Cahen C. Abdallatif al-Baghdad et les khwarizmiens. In: Iran and Islam. Edinburgh, 1971.

De Morgan J. Histoire du peuple arménien, depuis les temps les plus reculés de ses annales jusqu'à nos jours. Préface de Gustave Schlumberger. Paris, 1919.

D'Ohsson C. Histoire des Mongols, depuis Tchingiz-khan jusqu'a Timour bey ou Tamerlan. Amsterdam, 1852, t. 1—4.

Dulaurier E. Recherches sur la chronologie arménienne. Paris, 1859, t. I.

Grousset R. Le conquérant du monde: Vie de Gengis-khan. Paris, 1961.

Grousset R. L'Empire des steppes. Attila. Gengis-khan. Tamerlan. Paris, 1960.

Grousset R. L'Empire Mongol (Ire phase). Histoire du Monde, t. VIII. Paris, 1941

Lamb H. Gengis khan conquérant des steppes. Adapté par Nicole Rey. Paris, 1966.

Lemercier-Quelquejay Ch. La paix mongol: Joug tatar ou paix mongol? Flammarion, 1970.

Limper B. Die Mongolen und die chrislichen Völker des Kaukasus. Eine Untersuchung zur politischen Geschichte Kaukasiens im 13 und beginnenden 14 Jahrhundert. Köln, 1980.

Pelliot P. Les Mongols et la Papauté. Paris. 1923.

Percheron M. Gengis khan. Paris, 1962.

Saint-Martin J. Memoires historiques et géographiques sur l'Arménie. Paris, t. 1, 1818, t. 2, 1819.

Tournebiz F. Histoire politique et religieuse de l'Arménie, Paris. s. a.

Համառոտագրությունների ցանկ

ԼՀԳ — ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների
ՊԲՀ — ՀԽՍՀ ԳԱ Պատմա-բանասիրական հանդես
ВИ—Вопросы истории

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Գլուխ առաջին. Թաթար-մոնղոլների և Խորեզմշահ Ջալալ էդ Դինի արշավանքները Անդրկովկաս և Արևմտյան Հայաստան (1220—1235 թթ.) և հայ ժողովրդի դիմադրական պայքարը 23

1. Հայաստանը թաթար-մոնղոլական արշավանքների նախօրյակին 23
2. Թաթար-մոնղոլների հետախուզական արշավանքը և հայ-վրացական ուժերի դիմադրությունը 29
3. Մոնղոլների արշավանքը Ջալալ էդ Դինի դեմ և հայ ժողովրդի հակամոնղոլական պայքարը 42

Գլուխ երկրորդ. Հայ ժողովրդի պայքարը թաթար-մոնղոլական լծի դեմ կուսակալների կառավարման տարիներին (1236—1256 թթ.) 56

1. Հայաստանի նվաճումը թաթար-մոնղոլների կողմից . 56
2. Հայ-վրացական ընդվզումները թաթար-մոնղոլական բռնատիրության դեմ XIII դարի 40-ական թվականների երկրորդ կեսին 73

Գլուխ երրորդ. Հայ ժողովրդի պայքարը թաթար-մոնղոլական լծի դեմ Իլխանության շրջանում (1256—1353 թթ.) 90

1. Հայ-վրացական երկրորդ ապստամբությունը թաթար-մոնղոլական տիրապետության դեմ 90
2. Ապստամբական շարժումները թաթար-մոնղոլական տիրապետության դեմ XIII դարի 90-ական թվականներին և XIV դարի սկզբին 100
3. Հայ ժողովրդի պարտիզանական ընույթի պայքարն իլխանական տիրապետության դեմ 107
4. Հայ ժողովրդի պայքարն ընդդեմ թաթար-մոնղոլ բռնակալների կրոնական հալածանքների 117

Վերջաբան 128

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկ . . 133

Համառոտագրությունների ցանկ 143

ՀՐԱՉ ԱՂՎԱՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՅՔԱՐԸ ԹԱԹԱՐ-ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԼՈՒԾԻ ԴԵՄ

Հրատ. խմբագիր Վլ. Հ. Ստեփանյան
Նկարիչ Կ. Կ. Վաֆիադարյան
Տեխ. խմբագիր Ա. Պ. Շահինյան
Սրբագրիչ Մ. Գ. Բլեյան

ՀԲ № 1602

Հանձնված է շարվածքի 22. 02. 1990 թ.։ Ստորագրված է տպագրության 29. 04. 1990 թ.։ ՎՖ 01371։ Չափը 84×108 1/16։ Թուղթ № 1։ Տառատեսակ «գրքի սովորական» բարձր տպագրություն։ Պայմ. 7,56 մամ.։ տպագր. 9,0 մամուլ։ Ներկ. մամուլ 7,56։ Հրատ.-հաշվարկ. 6,77 մամուլ։ Տպաքանակ 5000։ Հրատ. № 7653։ Պատվեր № 81։ Գինը 1 ռ. 40 կ.։

ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան,
Մարշալ Բագրամյան պող. 24 գ.։
ՀԽՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019, Երևան,
Մարշալ Բագրամյան պող. 24։

Издательство АН Арм. ССР, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24 г.

Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24.

1 п. 40 ц.:

A II 81450